նստի . ոչ նստի ։ Կամ ներհակայն . յորժամ դրականք երկոքին ընդ նոյն սեռիւ գոլով՝ զնշեալս հեռեալս ՚ի միմեանց առաւելագոյնս ՚ի միջի յենթակային ։ որպէս ջերմութիւն , եւ ցրտութիւն ՚ի նոյն մարմնի ։ սպիտակութիւն , եւ սեւութիւն ՚ի նոյն որմոյ ։ Կամ պակասաբար ։ որպէս հակակայն տեսանել , եւ տեսանելի պակասութիւն ։ յդ . լոյս եւ խաւար , որ է լուսոյ պակասութիւն ։ Կամ առընչականս . որպիսիք են այնոքիկ որք առ միմեանս յարաբերին ։ որպէս հայր եւ որդի ։ տէր եւ ծառայ ։

Երկոտասաներորդ անջատումն . եղերայն՝ ոմն է անուն . ոմն բայ ։ Անուն՝ է ըստ Արիստոտէլի յառաջին գիրս պերիարմենեաս . ձայն նշանական ըստ շարադրութեան առանց ժամանակի , որոյ ոչ ինչ մասն է նշանական զատեալ ։ Ասէ ձայն , փոխանակ սեռի . եւ այնու՝ անուանն հաւասարի ընդ այլ ձայնս որք ոչ են անուն ։ Իսկ՝ ձայնդ առանձին եկաց . եւ յաղագս ձայնին յօդելոյ եւ մարդկային կազմողութեամբ կերպացելոյ ։ զի որոյ որոշեն անկիր թնդմունքն . որպէս գազանայն ։ Ասէ նշանական , առ ՚ի տարբերութիւն աննշան ձայնիցն . որպէս . սխլրթնի . պու-ֆ . եւ այլ ։ Ասէ ըստ շարադրութեան . յդ . ըստ կամաց . զի որոշելոյ զբնականն նշանականն ։ Ասէ՝ առանց ժամանակի ։ որպէս զի զանազանեսցի ՚ի բայէ , եւ ընդունելութենէ ։ Ասէ՝ որոյ ոչ ինչ մասն է նշանական զատեալ , զի զանազանութեան բանին . որոյ զատեալ մասունքն նշանակեն զինչ ինչ ։

Բայ՝ է ըստ նախնի փիլիսոփային , որ առնշանակէ զժամանակ , որոյ մասն ոչ ինչ նշանակէ զատ . եւ միշտ է զայլոց ասացելոյն նշանակ ։ Իսկ՝ զնոյն սահմանդ պարզաբանէ մեծն Թովմաս աքուինացին՝ ասելով . թէ բայ է՝ ձայն նշանական ըստ շարադրութեան ժամանակաւ , որոյ ոչ ինչ մասն նշանակէ զատեալ , եւ միշտ է նշանականն զայլոց ասացելոյն ։ Ասէ՝ ժամանակաւ .

զի որոշեսցի անունն . և ևս ամ , օր , ժամ , և այլքն , որք ոչ ժամանակաւ . այլ զժամանակս նշանակեն ։ ասի՛ և միշտ է՛ նշանական զայլմէց ասացելոյն . Յժ․ նշանակէ զկապուածս ստո-րոգելոյն ընդ ենթակայն ։ վասն որոյ բայ զանազանի յըն-դունելութէ, որ թէպէտ նշանակէ ժամանակաւ . բայց սա-կայն ոչ կարէ զստորոգեցեալն ընդ ենթակայն ։ և թէպէտ ընդունելութիւն է՛ կարող լինել ենթակայ նախադասութե . ոպ . ընթացօղ է՛ շարժելի . այլ սակայն ոչ կարէ բայն նոյ լի-նել . բայց կարէ լինել ստորոգեցեալ . ոպ . պետրոս ընթանայ ։ սակս այսորիկ՝ բայ միշտ ունի զինքն ՚ի կողմանէ ստորոգելե-լոյն ։ վն որոյ ասէ . թէ միշտ է՛ նշանական զայլմէց ասացելոյն . Յժ․ միշտ նշանակէ զստորոգեցեալն զայլոյն ։

Թէ որք իցեն եզերք Նախահայեաց . և
Երկրորդահայեաց ։
Պրակք . Զ ։

Quinam ſint Termini Primæ , & Secundæ
Intentionis .
Articulus Sextus .

Ստորոգական եզրն բաժանի յեզր նախահայեաց . և եզր երկրորդահայեաց ։ Եզր նախահայեաց՝ է՛ որ շարադրեցաւ ՚ի նշանակել զիրս ըստ ինքեանց իմացեալս ։ Յժ․ որ նշանա-կէ զիրս նախապէսաբար և ուղղապէս յըղացեալս ՚ի մտաց զօրութէն . ոպ , մարդ՝ զմարդկայնն բնութի ։ և ասի նախա-հայեաց . զի նշանակէ զնախկին հայեցուածս մտացն նոցին որք զմտաւորս իրացն շարադրեցին ։ Իսկ եզր երկրորդահայեաց է՛ որ նշանակէ զիրս ոչ ըստ ինքեանց և նախապէս , այլ ըստ որում ենթանականն մտացն . յորոց զարտաքին ինչ յարանուն

ութիւն առնուն : որպէս կոչել սեռ , տեսակ . ենթակայ . ստորո-
գեալ . անուն . բայ . և այլքն յայսպիսեացս ։ քանզի մարդ-
ինքեամբ ունի զի կենդանի բանական եղէ, որ է մերկայն բնու-
թիւն ։ և ըստ որում այսպէս նշանակէ , ասի եզր նախահայեաց ։
բայց՝ զի մարդ եղեւ տեսակ , կամ ստորոգեալ . ունի միօք ։
և ըստ որում այսպէս նշանակէ , ասի եզր երկրորդահայեաց ։

Հասարակ եզերքն երկրորդահայեացք մանաւանդ են հինգ :
որք և ստորոգելիք ասին . որպէս . Սեռ ։ Տեսակ ։ Տարբե-
րութիւն ։ Յատուկ ։ և Պատահումն ։

Սեռ՝ է որ ստորոգի ըստ բազմաց տեսակաց տարբերե-
ցելոց՝ ՚ի ներքոյ զինչէին ։ որպէս կենդանի ստորոգի զմար-
դոյ . զձիոյ , զառիւծէ ։ ասացաւ ըստ բազմաց տեսակաց տար-
բերեցելոց ։ քանզի մարդ , ձի , առիւծ , տարբերեալք ՚ի միմեանց
ոչ միայն թուով . որպէս . անհատականօք տարբերութեամբք . այլ և
տեսակաւ . որպէս . տարբերութեամբք էութենականօք և տեսակա-
րարօք ։ ասացաւ ՚ի ներքոյ զինչէին ։ քանզի ՚ի հարցանելն .
զինչ է մարդ . պատասխանեմք սեռիւն թէ կենդանի ։ Ըստ
որոյ ՚ի ներքոյ զինչէին ստորոգիլն՝ նշանակէ զստորոգիլն էու-
թենաբար . որպէս . եղանակաւ ըստ ինքեան գոլոյ . որպէս ստորոգի
կենդանի զմարդոյ , և մարմին զկենդանւոյ ։ այլ ոչ եղանակաւ
յարանունութեան , կամ յենողութեան . որպէս ստորոգի բանական
զմարդոյ . և պատահումն զենթակայէ ։

Սեռ՝ եռեակ է . գերագոյն . վերջագոյն . և միջին : Գե-
րագոյն որ և ասի սեռականագոյն՝ է՛ քան զորոյ վերայ ոչ գոյ
այլ վերադասեալ սեռ ։ Վերջագոյն՝ է՛ քան զորոյ զկնի ոչ գոյ
այլ վարադասեալ սեռ ։ Իսկ Միջինն որ և ասի ընդմիմեամբ՝
է՛ գեր քան զոր . և յետ որոյ գոյ այլ սեռ ։ որպէս էութիւն յայսմ գոյ-
ացողական չորրորդութեան ։

Մարմնաւոր .	Գոյացութիւն .	Հոգեւոր .
Բուսական .	Մարմին .	Անբոյս .
Զգայական .	Բոյս .	Անզգայական .
Շնչաւոր .	Զգայուն .	Անշունչ .
Բանական .	Կենդանի . ք .	Անբանական .
	Շնչաւոր զգայուն .	
Այս .	Մարդ .	Այն .

Անհատական :

՚Ի շարադրութեան՝ Գերագոյն սեռ, որ առնի սեռականա-գոյն՝ է գոյացութիւն։ Վերջագոյն՝ է կենդանի։ Միջինքն եւ ընդմիջականքն՝ մարմին. բոյս. զգայուն։

Տեսակ՝ է որ ստորոգի զբազմից տարբերելոց թուով ՚ի ներսում զինչէն։ որպ մարդ, որ ստորոգի զպետրոսէ եւ զպօղոսէ։ առնի զբազմից տարբերելոց թուով. կմ՝ որոշելոյ զսեռն. որ ստորոգի զբազմից տարբերելոց տեսակաւ.

Տեսակն՝ է եռեակ։ Գերագոյն՝ քան զոր ոչ երբէք այլ վերագոյն տեսակ։ Վերջագոյն՝ քան զորոյ զկնի ոչ երբէք այլ վայրագոյն տեսակ. եւ այս է միայն յատկագոյն տեսակ. որ եւ առնի տեսակագոյն։ Միջինն՝ գեր քան զոր եւ յետ որոյ այլ գոյ տեսակ. եւ առնի ընդմիջական։ Իսկ՝ տեսակք գերագոյնն եւ ընդմիջականքն յատկապէս ոչ գոն տեսակք. քանզի

ունին

ունին զերկուս յարաբերութիւնս . մինն առ 'ի յառաջ քան զնո_
ցայն . ըստ որում տեսակք ասին գոլ . և միւսն առ 'ի զկնի
նոցայն . ըստ որում և սեռք ասին : ոչ յառաջագրեալ շա_
րադրութեան յայտնի : Ներքուստ գերագոյն տեսակն է մարմին :
տեսակագոյնն՝ մարդ : այսպ ընդմիմեամբքն՝ բոյս . զգայուն .
կենդանի : բայց մարմին . բոյս . զգայուն . և կենդանի՝ յարաբե_
րութբ առ յառաջ քան զնոցայն՝ գոն տեսակք : յարաբերութբ
առ 'ի զկնի նոցայն՝ սեռք : Հ̃ որոյ խնկալես ոչ են տեսակք :

Տարբերութիւն է որ ստորոգի զյոլովից տարբերեցելոց կամ տեսակաւ . կամ թուով 'ի ներքուստ որպիսի ինչէին : այսինքն՝ տարբերեցելոց կամ տեսակաւ կամ թուով : քանզի եր_կեակ է տարբերութիւն . մինն ընդհանրական որ և սեռական_ան . որով մի սեռ զանազանի յայլմէ . և սա ստորոգի ըստ բազմաց տարբերեցելոց տեսակաւ : Իսկ միւսն է տեսա_կագոյն կամ տեսակարար և մերձն . որով մի տեսակ զանա_զանի յայլմէ ընդ նոյն սեռիւ . և ստորոգի զյոլովից տարբե_րեցելոց թուով : այսինքն՝ 'ի ներքուստ որպիսի ինչէին . վ̃ զի 'ի ներքուստ զինչէինն նշանակէ . զտարբերութիւն գոլ մասն էու_թենական և բաղկացուցիչ : և 'ի ներքուստ որպիսին նշանակէ . զնոյն տարբերութիւն ստորոգիլ ածականաբար . և ոչ գոյականաւն : որպէս . բանական : ոչ վերոյգրեալ գոյացութ_կան շարադրութիւն ցուցանէ . յորում տեսակագոյն տարբե_րութիւնք են բանական . և հաշտական . և այլքն որ ստորոգին զյոլովից տարբերեցելոց թուով : Իսկ ընդհանրական տարբե_րութիւնքն . վ̃ . սեռականքն՝ են այլքն ամէն . որք և ստորոգին ըստ բազմաց տարբերեցելոց տեսակաւ :

Յատուկն է որ ստորոգի ըստ յոլովից 'ի ներսում տեսակին , նոյն հարկաւորապէս և հակադարձաբար = որպէս ծիծաղականն է յատուկ մարդոյ . և ստորոգի ըստ ամենայն միոյ հարկաւորապէս և հակադարձաբար . մինչզի պատահեսցի ամենայն մարդում . միայնում . և միշտ = և ընդ մարդոյ հակադարձի = քանզի Թէ մարդ է . ծիծաղական է = և Թէ ծիծաղական է . մարդ է =

Պատահումն է որ ստորոգի ըստ բազմաց 'ի ներսում տեսակին ոչ հարկաւորապէս . այլ պատահաբար = կամ է որ առընթերլինի և բացալինի առանց ենթակային ապականութեան = որպէս . սպիտակ . սեաւ . և այլ =

Եւ դարձեալ գիտելի է . Թէ ամենայն ներքընախահասնեալքն յարաբերին առ 'ի տասն գլուխս . կամ առ 'ի տասն գերագոյն սեռս . որք ասին ստորոգութիւնք =

Առք՝ Ստորոգութիւն է գոյականն ինչ չափակցութիւն բազում ընդ միմեանս սեռից . մինչև 'ի վերջին տեսակն ընդ միով սեռականագոյն սեռիւ = Եւ այսպէս առաջին ստորոգութիւնն է Գոյացութիւն = բ . Որակութիւն = գ . Քանակութիւն = դ . Առ ինչ = ե . Ուր = զ . Երբ = է . Կալ = ը . Ունել = թ . Ներգործել ժ . Կրել =

Գոյացութիւն է որ ըստ ինքեան ենթակայանայ . և ոչ յեն Թակայութիւնս . որպէս . մարմին . կենդանի . մարդ = նոյն այլ ևս ստորոգութիւնքն յենուն 'ի վերայ գոյացութեան = որ բաժանի 'ի նախկինն . և յերկրորդ = նախկինն գոյացութիւն զոր անհատքն = որպէս պետրոս . պօղոս = երկրորդն զոր սեռքն և տեսակքն = հնբար . կենդանի . մարդ =

Որակութիւն է ըստ որում ընդունօղքն՝ որակք ասին . կամ որակ_

որպիսիք ։ որպակ . սպիտակութիւն . ջերմութիւն . և այլ ։ քանզի 'ի հարցանելն՝ թէ որպիսի է որմն ։ պատասխանեմք . թէ սպիտակ ։

Քանակութիւն՝ է՝ պատահումն գիտելի լայնացուցմանց . որով իրքն առնեն քանակք . կամ որքանք ։ Հն կէն . միթզաչափ . երկութզաչափ ։ Առդ՝ բաժանին 'ի շարունակ . և տարորոշ ։ Շարունակ քանակութիւն՝ է՝ որ ունի զմասունս շարամածեալս և զմիակարդակիցեալս ։ որպան . գիծ . մակերևութիւն . մարմին ։ Տարորոշ՝ է՝ որ ունի զմասունս զբաժանեալս . որպէս . թիւ ։

Առինչ՝ է ըստ որում միմն յարաբերի առ միւսն ։ որպոն . հայր առ յորդի ։ պատճառելի առ պատճառ ։ մակացութիւն առ մակացելի ։

Ուր՝ է գոլ 'ի տեղի . հն բար . 'ի տան ։ 'ի տաճարի ։ վեր . վայր . և այլ ։

Երբ՝ է գոլն 'ի ժամկի ։ որոյ տարբերութիւնքն են ներկայ , անցեալ , ապառնի ։

Կալ՝ է շարադրութիւն և դասութիւն ինչ մասանց մարմնոյն որ կայ 'ի տեղի . որպ̃ նստիլ . ընկողմանիլ . և այլ ։

Ունել՝ է արտաքին ինչ յենումն միոյ մարմնոյ առ միւսն ։ որով ասի յարմանուանն այսպէս կամ այնպէս տրամակայել ։ որպ̃ զինաւորեալ . զգեցեալ . և այլ ։

Առնել՝ է արարողութիւն որով առնօղ ասի զինչ ներգործել ։ որպ̃ ջեռմարարութիւն ըստ որում լինի 'ի հրոյ ջեռուցանողէն ։

Կրել՝ է արարողութիւն որով ինչ ներգործիլ ասի ։ որպ̃ ջեռմարարութիւն ըստ որում առնանի 'ի փայտն որ կրէ ։

140

Յաղագս Տրամադրութեանց եզերացն։ Եւ մանաւանդ յաղագս ենթադրութեան։

Գլուխ. Է.

De Terminorum Affectionibus, & præcipuè de Suppositione.

Articulus Septimus.

Մինչև ցայժմ՝ յաղագս անջատման, և ծանօթութեան եզերացն ընծեռեցաք։ այժմ պարտ է՝ զհոգայցն տրամադրութիւն և յատկութիւն ուսուցանել։ քանզի յատկութիւքն՝ հոլ բնութեան հետևին։ Իսկ՝ մանաւանդ եզերաց տրամադրութիւն և յատկութիւն՝ է ենթադրութիւն։ որ այսպէս ՚ի Տրամաբանականացն սահմանի։

Ենթադրութիւն՝ է առումն եզրին փոխանակ նորա, զոր պարտ է՝ նշանակել ՚ի նախադասութեան։ ներքոյ գաղափարաւ. փիլիսոփայ՝ նշանակէ զԱրիստոտէլ. և առաքեալ՝ զսուրբն պօղոս։ Կամ զի անուանքս՝ փիլիսոփայ և առաքեալ ՚ի նախադասութեան առնանին և ենթադրին փոխանակ Արիստոտէլի, և սրբոյն պօղոսի։ Այն առումն և այլքն. քանզի ըստ Արիստոտէլի յառաջին գիրսն էլէնգաց. զանուանս ենթադրել սովոր ենք, փոխանակ իրերաց զորս առ ՚ի վիճաբանութիւն ոչ կարեմք առբերել։

Առաջին անջատումն. Ենթադրութիւն բաժանի ՚ի նիւթաւորն և ձևաւորն։ նիւթաւոր ենթադրութիւն է՝ առումն եզրին վասն իւրեան ինքեանց. և ոչ փոխանակ իրի ինչ բառէ նշանակելոյ։ որպէս. մարդ է՝ անուն։ կամ մարդ է մի գաղափարութիւն։ յայսմ նախադասութեան. մարդ՝ ենթադրի նիւթաւորապէս, զի առնանի վասն իւրեան ինքեան. ՊԲ. ըստ որում

մարդ՝ է՛ ձայն ինչ նշանակեալ . կամ մի բաղադրութե . ոչ ըստ որում է՛ կենդանի բանական ։

Ենթադրութիւն տեսականն որ է՛ առումն եղելոյն փոխանակ իւր նշանակելոյ ։ որպէս յորժամ ասեմ, թէ մարդ է կենդանի ։ կամ քար է՛ մարմին ։ այժմ մարդ՝ ոչ ենթադրի նիւթականապէս փոխանակ ձայնին . այլ տեսականաբար փոխանակ իւր ձայնին նշանակելոյ ։ այսինքն . փոխանակ մարդկային բնութեն ։

Երկրորդ անջատումն . նիւթականն որ ենթադրութեանն՝ ոմն է՛ ներքին . ոմն արտաքին ։ ներքին նիւթականն որ ենթադրութիւն է՛ առումն եղելոյն ըստ ինքեան . և ըստ որում բնականաբար նշանակէ . այլ ոչ ըստ շարադրութե ։ որպէս առիւծ է՛ ձայն ։ քանզի՝ թէ այս եղբս . առիւծ . ձայն ինչէ . ոչ ունի 'ի շարադրութենէ . այլ ինքեամբն և իւր բնութեամբն ։ արտաքինն է՛ առումն եղելոյն ըստ ինքեան . և ըստ որում ոչ բնականաբար նշանակէ . այլ ըստ ներգործութե մտացն ։ որպէս . առիւծ է անուն կամ տեսակ . և այլ ։

Երրորդ անջատումն . տեսականն որ ենթադրութեանն՝ ոմն է՛ յատուկ . ոմն անյատուկ . անյատուկն՝ է՛ առումն եղելոյն . ըստ որում անյատկապէս նշանակէ . և ըստ նմանութե ինչ ։ որպէս ցուցանելով զմարդ ոմն անողորմ . ասեմ թէ այս մարդ է՛ Ներոն ։ կամ զզօրեղն ցուցանելով . ասեմ թէ այս է՛ մի առիւծ ։ աստ Ներոն, և առիւծ՝ անյատկապէս ենթադրին և ըստ նմանութե ։

Ենթադրութիւն տեսականն որ յատուկն՝ է՛ առումն եղելոյն . ըստ որում յատկապէս նշանակէ ։ որպէս . մի անողորմ կայսր՝ Ներոն անուն ունէր . և մի զօրեղ անասուն կոչի առիւծ . այժմ Ներոն, և առիւծ՝ յատկապէս ենթադրին ։

Զորրորդ անջատումն. ենթադրութեան տեսակաւ՝ որ յատուկն բաժանի ՚ի հասարակ և յեզականս։ Հասարակ է՝ առումն եզրի հասարակի վ̃ իւրոց վայրադրութեանցն։ ո̃պ. իմ̃ մարդ ընթանայ։ յայս տեղիս՝ մարդ հասարակաբար ենթադրի. ցր̃. վ̃ իմն անհատից միոյ։ Եզական ենթադրութիւն է՝ առումն եզրին վասն միոյ անհատական իրի։ որպէս. պետրոս ընթանայ։

Հինգերորդ անջատումն. հասարակ ենթադրութեան բաժանի ՚ի պարզական. անձնաւորական. և բացարձակ։ Պարզական ենթադրութիւն՝ է առումն եզրին հասարակի վ̃ իւրոյ անմիջական նշանակութեան. ցր̃. վ̃ իրի նախապէս նշանակելոյ։ ո̃պ յորժամ ասեմ թէ մարդ է տեսակ. կենդանի է սեռ. ՚ի նախադասութիւնդ՝ մարդ, և կենդանի պարզապէս ենթադրին։ քանզի ոչ ստորասի, զայս մարդս գոլ տեսակ. և ոչ զայս կամ զայն կենդանին գոլ սեռ։ բայց ստորասի, տեսակ գոլ զընդհանուր մարդ, զոր անմիջաբար նշանակէ ձայնս, մարդ։

Անձնաւորականն է՝ առումն եզրի հասարակի. վ̃ իւրոյ միջական նշանակութեան. ո̃պ յայսմ նախադասութեան. իմ̃ կենդանի ընթանայ. իմ̃ մարդ ծիծաղէ։ Ենթակայքն նախադասութեանցդ ոչ ենթադրին պարզապէս. այլ անձնաւորաբար. ցր̃. կենդանի և մարդ այժմ առնանին ոչ ընդհանուրք ո̃պ անմիջաբար նշանակեն։ այլ մասնականաւ վ̃ այս մարդոյս. վ̃ այն կենդանւոյն, զորս նշանակեն միջապէս. ցր̃. միջնորդութեամբ ընդհանրական բնութեան։

Բացարձակն՝ է առումն եզրին ըստ իւրոյ նշանակութեան միջականին և անմիջականին. ո̃պ. մարդ է կենդանի։ Ենթակայն նախադասութեանս այսորիկ որ է՝ մարդ. ենթադրի բացարձակապէս։ քանզի ո̃պ ընդհանուր մարդ է կենդանի։ այս̃ և

մասնաւորն անհատին մարդոյ ։ Վասն և այլ բաղումք եղելն յատկութիւնք և տրամադրութիւնք . զորս թողումք ։ Վասնզի կամ փոքր ինչ կամ ոչինչ են պիտանացուք ։

Յաղագս Սահմանի . թէ զինչ . և որքանաբար իցէ սահմանն ։

Գլուխ . Ը ։

De Definitione . Quid , & Quotuplex sit Definitio .

Arriculus Octauus .

Թէպէտ և սահմանն կարէ առնելի առ երկրորդ մտաց ներգործութիւն ։ Վասնզի բազում անգամ առնեմ նմա բացատրել զսահմանն նախադասութեամբ որ է յատուկ երկրորդ ներգործութեան մտաց ։ այլ սակայն խոկալիս և մանաւանդ պատկանի սահմանն առ առաջին մտաց ներգործութիւն ։ Քանզի ուսուցանէ արտայայտել յերկրորդ դիտան վերջնոյ . թէ ՚ի սահմանութիւն ոչ դնի գոյ . և ոչ՝ ոչ գոյ ։ Նոյնպէս յորժամ ՚ի բանին ոչ դնի գոյ . և ոչ՝ ոչ գոյ . անդ է միայն առաջին մտաց ներգործութիւն . ապաքէն սահմանն՝ առաջին մտաց ներգործութեան պատկանի ։ Ուստի նա՝ վարդապետութիւն առ առաջին մասն ներածութեան ստորանկանի . և ոչ առ երկրորդն ։ Նոյնպէս , զի սահմանն՝ յայտ առնէ զէութիւն իրին . նոյնպէս յայտնութիւն իրողութեանն յատկապէս և նախապատուաբար է գործ առաջին մտաց ներգործութեան . որ է նախկին իմացումն էնթակային թարց ստորասութեան կամ բացասութեան ։ ապաքէն և այլ ։

Ըստ՝ Սահմանն է բանն նշանակիչ ինքեան որ է ինչ ։ այսպէս արտայայտել յերկրորդ դիտան վերջնոյ ։ Որ . է բան յայտնիչ էութեան էնթակայ իրին ։ բան առացեալ . Որ . համառօտութիւն բա-

ձևբ

զում

դուօլ բառից։ Վա՛ զի մի բառ ոչ բաւական է՛ սահմանումն։ Եւ պատճառն է. զի սահմանն պարտէ բացատրել զբնութիւն են-Թակայ իրին որոշաբար և յայտնապէս։ արդ՝ ի բաղկանչելոց բնութիւն ունի զինչ որով հաղորդի ընդ այլոց բնութեանց. և զինչ որով տարորոշի յայնցանէ. որպէս մարդ ունի զկենդա-նի, որով հաղորդի ընդ ձիոյ. և զբանականն, որով զանա-զանի ՛ի նոցանէ։ Վա՛ այսորիկ սահմանումն ոչ նուազագոյն քան զերկու բառս պիտանանայ։ զի միովն յայտնեսցի հաղորդա-կանութիւն. և միւսովն զանազանութիւն ընդ այլ բնութեանս։ Ասացաք՝ նշանակէ զբնութիւն ենթակայ իրին. զի սահմանն տարբերեցի յայլոց բանից. որք զիւր բնութիւն ոչ նշանակեն։

Առարկեսցես։ Թէ սահմանն ոչ կարէ սահմանել զինքեանքն. և ոչ այլով զանազան սահմանաւ։ ապա ուրեմն և ոչինչ կեր-պիւ կարող է՛ սահմանել։ Եզրակացութիւն յայտ է։ Լուծ՝ զառաջարկութիւն ըստ առաջին մասին հաւանեցուցանեմք։ զի սահմանն պարտէ ինքնապէս զանազանել ՛ի սահմանելոյն զո-րոյ բնութիւն յայտ առնէ։ ուստի այսք ոչ դոն սահմանք. մարդ է մարդ. և կենդանին է՛ կենդանի։ ապա ուրեմն ոչ կարէ սահ-մանն զինքեանքն սահմանել։ Հաւանեցուցանեմք և ըստ երկ-րորդ մասին։ քանզի եթէ սահմանն այլ սահմանաւն սահ-մանիւր. նա և սահմանք սահմանին՝ այլով սահմանաւ պարտ էր սահմանել։ և այսպէս առաջ երթեալ այսուհետև մինչ ՛ի յան-հունս, որ էր յայտ անտեղի։

Արդ պատասխանատուութեան՝ նախ գիտելի է. Թէ սահ-մանն զանազանի ՛ի սահմանելոյն ոչ ըստ ենթակայութեան իրին. այլ ըստ մտածութեան. և ըստ կերպի նշանակե-լոյ։ Վա՛ զի սահմանն պատմէ զբնութիւն իրին. իսկ՝ բնութիւն ոչ տարբերի ենթակայաբար ՛ի նմանէ որոյ է՛ բնութիւն։ որպ՝ մարդ ՛ի կենդանւոյ բանականէն։ այլ տարբերի միայն ըստ մտա-ծու-

մտածութեն, և զանազան կերպի նշանակելոյ ։ մինչ զի մարդ. որ է՛ սահմանելի նշանակէ զիւր բնութիւն անայլայլապէս ։ իսկ կենդանի բանական, որ է՛ սահման. զնոյն բնութի նշանակէ պարզագոյնաբար ։

Հրդ՝ պատասխանեմ Յեռնարկութեանն, մերժելով զառաջարկութիւն. Թէ սահման ոչ կարող է՛ սահմանել ինքեամբն, ըստ նոյն կերպի նշանակելոյ. համանիմ ։ քանզի ոչ բարւոք ասի. Թէ սահմանն է սահման ։ ոչ կարող է՛ սահմանել ինքեամբն ըստ զանազան կերպի նշանակելոյ. առէլով. Թէ սահմանն է՛ բան յայտնիչ գոյացութեան իրի. ուրանամ ։ յորմէ ոչ հետևի արտաբերութի յանբաւս ։ քանզի սահմանին սահմանդ՝ իբր պարզ յայտնութի բնութեան իւրեան ինքեանն. ոչ կարօտի այլոյ սահմանին ։

Եւ դձ՝ սահմանացն. ոմն է՛ էութենական. ոմն պատահական ։ էութենականն որ մանաւանդ և տիրաբար ասի սահման՝ է՛ բան յայտնիչ բնութեան էնթակայ իրին ՚ի ձեռն բաղկացուցիչ և էութենական ստորոգելոյ. օր. սեռին, և բաղկացուցիչ տարբերութեն ։ օր. կենդանի բանականն է՛ էութենական սահման մարդոյ ։

Հրդ՝ սեռ ասի այն. որով սահմանելի բնութի համասարի էութենաբար ընդ այլոյն. օր. ՚ի մարդոյ սահմանումն սեռ է՛ կենդանի, որով մարդն էութենաբար համասարի ընդ ձիոյ. ընդ առիւծու. և ընդ այլ կենդանիս ։ իսկ բաղկացուցիչ տարբերութի կոչի այն. որով սահմանեալ իրն էութենաբար և նախապէս զանազանի յայլ իրաց. օր. ՚ի նոյն սահմանումն մարդոյ. բաղկացուցիչ տարբերութիւն է բանական. որով մարդն նախապէս արտադատի յամենեցուն. և եւս ՚ի հրեշտակաց. որք նախապէս ոչ ասին բանաւորք. այլ պարզ հայեց

մամբ նմանականք. քանզի ոչ տրամաբանեն եւ ակայութբ որպ մարդիկն. այլ գերազանցաբար սոսկապէս հայելն. որպ յանձնաբանութեն կատարելապէս ուսուցանէ.

Ձեւացի. որով նախապէս եւ էութենաբար զանազանի յայլոց. զի մարդն կարէ եւ յատկութբ. որպ. ծիծաղականութն, արտադատել յայլոցն. Իսկ ծիծաղականն որ է յատկութի բղխեալ յէութենէն մարդոյ. ոչ է եւս բաղկացուցիչ տարրէրութի նր. զի մարդն՝ ծիծաղականն ոչ տարբերի յայլոց կենդանեացն նախապէս եւ էութենաբար, այլ երկրորդապէս, եւ յատկաբար. քանզի յատկութին գտանէ զէութի նորին կատարելապէս զբաղկացեալ.

Պատահական սահմանն, որ տկարաբար կոչի ստորագրութի է բան նշանակիչ էութե էնթակայ նորին ի ձեռն պատահական ստորոգելոց. Իսկ պատահական ստորոգեալքն են այնոքիկ. որք ոչ բաղկացուցանեն զնորին էութին. այլ զհետ երթան առ այն, զոր գտանեն կատարելապէս եւ էութենաբար զբաղկացեալ: որպ. մարդոյ ստորագրութին է ծիծաղական ուղղորդապնաց երկոտանի.

Եւ դարձեալ էութենական սահմանն անջատի ի ֆիզիկայն. որպ. բնական. եւ մետաֆիզիկայն. որպ. համաբնական. ֆիզիկայն սահմանն՝ է որ յայտնէ զէութի էնթակայ նորին ի ձեռն ֆիզիկայն մասանցն. որք են նիւթ եւ տեսակ նորին. որպ ի մարդումն՝ հոգի եւ մարմին. որք միացեալք բաղկացուցանեն զֆիզիկայն էութի մարդոյ. Մետաֆիզիկայն սահմանն՝ է որ բացատրէ զնորին էութին՝ ի ձեռն մետաֆիզիկայն մասանցն. որք են սեռ եւ տարբերութի նորին. որպ ի մարդումն կենդանի եւ բանական. որք միացեալք բաղկացուցանեն զմետաֆիզիկայն էութի մարդոյ.

Իսկ

Իսկ՝ ստորագրական սահմանն. ը. ստորագրութիւն՝ եւ նկարելն լինի. մինն որ ընտանեբար ստորագրութիւն անուանի է որ բացատրէ զէութիւն իւրն յատկութեամբքն. ը. յատուկ պատահմամբքն. որք յէութենէն արտաքոյինն. իբրու զաղափարս. մարդ է զարմանալոր ծիծաղական: այս է ստորագրութիւն մարդոյ. զի զարմանք եւ ծաղր՝ արտաքոյինէն ՚ի մարդոյ էութենէն. միւսն՝ որ է անկատար ստորագրութիւն. եւ իսկապէս սոյն ճառք. է որ նշանակէ զեղն հասարակ պատահմամբք. որք յէութենէն ոչ արտաքոյինն. իբրու թէ ասել. մարդ է ուղղորդանայ երկոտանի.

Արդ՝ բազումք են որք զան պիտանացուք առողջութեբարի սահմանին զորս աւելորդ համառօտել ՚ի մէջ բերել գիրս Թօբիգօրում. որ Թարգմանի գիրք տեղականաց.

Նախ խնդրի, թէ սահմանն եղիցի ծանօթագոյն քան զսահմանելին. եւ պատճառն է, զի սահմանն հնարեցաւ առ յայտնապէս բացատրել զէութիւն սահմանելոյն. եւ զայս առնելոյ ուրեմն ծանօթագոյն պարտ է գոլ քան զսահմանելին.

Երկրորդ խնդրի, թէ սահմանն անդրադարձցի ընդ սահմանելոյն. մինչ զի ոչ եղիցի սահմանն ընդհանրականագոյն կամ մասնականագոյն քան զսահմանելին. սոսա առաւել յայտնիք են այսք միոյ սահմանքս. մարդ է կենդանի. կամ մարդ է կենդանի բանաւոր փիլիսոփայ: քանզի նախկինն՝ է հասարակագոյն. եւ վերջինն՝ մասնաւորագոյն քան զմարդն. ուստի որոյ ոչ անդրադարձին ընդ մարդոյ. զի ոչ որք միանգամ են կենդանի, զան մարդ. եւ ոչ որք միանգամ զան մարդ. են կենդանի բանաւոր փիլիսոփայ.

Երրորդ. թէպէտ սահման եւ սահմանելին անդրադարձին առ միմեանս. սակայն յառաւելութեամբ եւ ՚ի նախադասութեամբ եղա-

 նի եւ

նի եւս յուսութիւն սահմանին ։ յաւելորդ է սահմանն. յորժամ ընդունի զպատահմունս. որպ. մարդ է կենդանի բանական քանակ ։ և նոյնպէս. յորժամ ոչ բացատրի հուպ սեռին. այլ հեռաւորն ։ որպ. մարդ է գոյացութիւն բանաւոր ։ ուսանի երեւի, թէ սահմանն է բան համառօտ. վասն զի հուպ սեռին միայնոյ առաւելեցելոյ. և հեռաւորքն ներքսայես առ դիցեալք իմանին։ քանզի ասելով. մարդ է կենդանի բանաւոր. իմանի գոլ եւս գոյացութիւն. մարմին. բոյս. զգայուն. շնչաւոր ։ զի զամենեսեան պարունակէ կենդանին ։ և այսոքիկ յաղագս առաջին մասին Ներածութեանս ։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆ

Յաղագս երկրորդ մտաց ներգործութեան. այս է. Յաղագս Նախադասութեան ։

SECVNDA PARS.

De ſecunda intellectus Operatione : hoc eſt, De Propoſitione.

Երկրորդ մտաց ներգործութիւն ոչ այլ ինչ է. բայց թէ դատումն մտաց. որով երկու եզերք՝ պարզ միտառընմանք ըմբռնեալք. բաղադրին կամ տրոհին, ստորասութեամբ, կամ բացասութեամբ ։ ասաուստ լինի. թէ ենթակայ երկրորդ մտաց ներգործութեան՝ ասի բացերեւութիւն. կամ նախադասութիւն ։ վասն զի յորժամ միտքն ենթադրատեաց. ինքն գաղափարաւ. թէ որին է այնտանի. կամ ոչ է այնտանի. այսպ ձայնիւ զնոյն

ենթա-

ենթադասութիւն բացերևեցելոյ՝ նախադասէ, աներկբայ թէ այս պէս է. կամ ոչ է ։

Թէ զինչ իցէ բացերևութիւն, և նախադասութիւն ։ Եւ որքանապատիկ բաժանեացն .

Գլուխ. ա ։

Quid sit Enunciatio, siue Propositio. Et quotuplex eius Diuisio.

Articulus Primus.

Նախադասութիւն է՝ բան կատարեալ. որ զճշմարտութիւն կամ զսուտութիւն բացերևեցէ ։ Բան ասացաւ փոխանակ սեռի, և բառիւդ կատարի նախադասութիւնս ընդ ամ բանին՝ կատարելոյն և անկատարս ։ Զի որ՝ բանն, ըստ որում սահմանի յարիստոտէլէ յառաջին գրոյն պերիարմենեաս, է՝ ձայն նշանական ըստ կամաց. որոյ մասունքն զատ- ալք զմի ինչ նշանակեն ։ որպէս. մարդ է՝ սպիտակ ։

Ասացաւ կատարեալ և այլքն՝ փոխանակ տարբերութեան ։ Քանզի բանն՝ երկեակ է. կատարեալ և անկատար ։ անկատարն է՝ որ ծնանի զանկատար նշանակութիւն ՚ի միտս լսողին ։ որպէս. մարդ կենդանին ։ որոյն սպիտակն ։ եթէ ես գնայի ։ և նմանք սո- ցին. յորս ոչ դադարի անձն լսողին. այլ յերկբայ լինի ։ Կա- տարեալն՝ է որ զկատարեալ նշանակութիւն ծնանի. և ներքուստ կայ շարամանութիւն. կամ արտահութիւն եղերացն. և անձն լսողին դադարի : որպէս մարդ է կենդանի ։ որոյն է՝ սպիտակ ։

Ասացաւ՝ որ զճշմարտութիւն կամ զսուտութիւն բացերևեցէ. զի կատարեալ բանն՝ եւս երկեակ է ։ այն բացերևականն, որ ստորասացէ կամ բացասացէ զինչ. ներքուստ կայ ճշմարտութիւն, կամ սուտութիւն : որպէս. մարդ է՝ կենդանի ։ մարդ ոչ է՝ կենդանի ։

ճխե   և այն

եւ ոմն անբացերեւական. որ է ըղձական. կամ հրամայական. կամ հրամայական = եւ ոչ սուտ. եւ ոչ ճշմարիտ բացերեւեցք = որպ. կենարար գնայց թէ ոչ = զինչ սիրեմ = ով թէ զինչ սիրէի =

Բայց յայնժամ նախադասութիւն զճշմարտութիւն նշանակէ. յորժամ հաւասարի եւ համեմատեսցի իրողութեան զորմէ ենթադրաւէ = ՚ի. յորժամ այսպէս իցէ իրն ունի զինչն. որպէս ընդունի բացերեւեցեալ = Իսկ յայնժամ զստութիւն. յորժամ ոչ համեմատական. եւ ոչ իցէ իրն ունի զինչն այսպէս, որպէս ընդունի բացերեւեցեալ = որպ. մարդ ոչ է կենդանի =

Արդ՝ բացերեւութիւն. այս ինքն. նախադասութիւն՝ երկեակ է՝. միոյն ստորոգական եւ պարզ, միւսն ստորադրական եւ բաղադրեալ = Ստորոգականն՝ որպ ՚ի վերոյ ասացաք, է որ ունի զենթակայ. զստորոգելի եւ զկապութիւն. երեւ զգլխաւոր մասունս իւրեանն = որպ. առաքինութիւն է բարի = Ստորադրականն՝ է որ ընդունի զբաղում ստորոգական նախադասութիւնս, երեւ զգլխաւոր մասունս իւր = որպ. եթէ առաքինութիւն է բարի. յոռութիւն է վատթար =

Եւ դարձ՝ ստորոգական բացերեւութիւն է երկեակ = միոյն բացարձակ, եւ ՚ի գոլոյն = միւսն եղանակաւոր : Բացերեւութիւն ՚ի գոլոյն եւ բացարձակն՝ է որ ընդարձակաբար բացերեւեցէ զինքն ներգոլութեամբ. կամ ոչ ներգոյլ = որպ. մարդ է բանական = կամ ոչ է բանական = Եղանակաւորն՝ է որ նշանակէ զեղանակն. որով միոյն ներգոյ միւսումն. հի բար. մարդ է բանական հարկաւորապէս = մարդ է այժմ ներընդունակաբար = Արդ՝ նախ ասասցուք յաղագս ստորոգական բացերեւութեան ՚ի գոլոյն = ապա յաղագս եղանակաւորին = յետոյ յաղագս ստորադրականին =

Յաղագս զանազան տեսակաց ստորոգական բացերեւութեն ՚ի գոլոյն ։

Գլուխ . Բ ։

De diuersis Enunciationis cathegoricæ , & in esse speciebus .

Articulus Secundus .

Բազում են տեսակք ստորոգական բացերեւութեն ՚ի գոլոյն . զորս արիստոտէլ ենթադրէ յառաջին գիրս պերիարմենիաս ։ բայց մեք զմանս զգլխաւորագոյնս առաջարկեցուք թողլով զմնացեալսն ։

Նախ՝ բացերեւութեանց ոմն է՛ երկրորդ ածականին . ոմն երրորդ ածականին ։ Բացերեւութի երրորդ ածականին՝ է՛ներում դնի ստորոգելեացն բայադրութիւն եւ յայտնապէս . իբրեւ զինչ զատուցեալ ՚ի բայէն ։ որպէս . մարդ է՛ սպիտակ ։ Նախադասութի երկրորդ ածականին՝ է՛ներում դնի ստորոգելեացն ներադրութիւն եւ անյայտաբար . իբրեւ զինչ առընկալեալ ՚ի բայէն ։ հն զան . մարդ ընթանայ ։ այս . է՛ ընթացող ։

Երկրորդ . ոմն է՛ որոշելի . ոմն անորոշելի ։ Որոշելին՝ է՛ որոյ ենթակայն եւ ստորոգելեացն են որոշելի եղեալք ։ որպէս . մն է՛ արդար ։ Անորոշելին՝ է՛ յորում մինն յառաջեալ եղելոցն է՛ անորոշելի ։ հն կէն ՚ոչ մարդ է՛ արդար ։ կամ . մարդ է ոչ-արդար ։

Երրորդ . ոմն է՛ ուղղակին . ոմն անուղղակին ։ Ուղղակինն՝ է՛ ներում ստորոգելի որ ստորոգելի է՛ ։ եւ ենթակայն որ ենթակայելի է՛ ։ եւ այս յոյնմ ապ պահի . յորժամ ստորոգելն վերադասիցն ըստ վերադասութեանց ։ կամ զոյգքն ըստ տեսակն ։ կամ պատահմանսն զենթակայիցն ։ վերադրոյն ըստ վայրադասունեցն . որ . մարդ է՛ կենդանի ։ զոյգքն ըստ զուգքն . որպէս .

ձեռ մր

մդ. է՛ կենդանի բանական ։ պատահումն զենթակայէն . որ պէս . մարդ է՛ սպիտակ ։ Հնաւորական նախադասութիւն է՛ ներում ստորոգելին կամ վայելուչն ըստ վերադրելոյն . կամ ենթակայքն ըստ պատահմանցն ։ որպէս կենդանին է՛ մարդ ։ սպիտակն է՛ մարդ ։

Չորրդ . ոմն է՛ ըստ ինքեան . ոմն ըստ պատահման ։ Նախադասութիւն ըստ ինքեանն է՛ ներում ստորոգելեալն առընթերցոյ ենթակայումն հարկաւորապէս . որպէս . կամ եթէ սեռ . որպէս . պետրոս է՛ կենդանի ։ կամ եթէ տեսակ . հէ բար . պետրոս է՛ մարդ ։ կամ եթէ տարբերութիւն . որպէս . պետրոս է՛ բանական ։ կամ եթէ յատուկ . որպէս . պետրոս է՛ ծիծաղական ։ Նախադասութիւն ըստ պատահմանն է՛ ներում ստորոգեալն առընթերցոյ ենթակայումն ներընդունականաբար . որպէս . եթէ հասարակ պատահումն որպէս . պետրոս է՛ սպիտակ ։

Հինգերդ . ոմն է՛ նոյնական . ոմն աննոյնական ։ Նոյնական նախադասութիւնն է՛ որ ըստ նոյն բացայայտել բանին ստորոգի զինքենէն ։ հէ կէն . պետրոս է՛ պետրոս ։ մարդ է՛ մարդ ։ աննոյնականն է՛ յորում ստորոգելեալն ինքնապէս զանազանեալ է՛ յենթակայէն ։ որպէս . մարդ է՛ բանական ։

Յաղագս նիւթոյ . որակութեան . և քանակութեան ստորոգական նախադասութեան ։

Գլուխ . Գ ։

De Materia, Qualitate, & Quantitate Propositionis cathegoricæ.

Articulus Tertius.

Յ երեքանցիւր ստորոգական նախադասութեան ղերին պարտիմք խնամել ։ որպէս . նիւթ . որակութի . և քանակութի ։

թիւ = Նիւթն՝ է՛ յորմէ նախադասութիւն եղանի . և դոյ եւեալ = հարկաւոր և բնական = անկարելի և հնարաւոր = ներընդունական և պատահական = Նախադասութիւն 'ի բնական և հարկաւոր նիւթում՝ է՛ այն ներքում ստորոգեալն ոչ կարէ ոչ յարմարել ենթակայումն = որպ. մարդ է՛ բանական = Նախադասութիւն 'ի հնարաւոր և անկարելի նիւթում՝ է՛ ներքում ստորոգեալն ոչ կարէ աւընթերցել ենթակայումն = որպէս. մարդ է՛ քար = Նախադասութիւն 'ի ներընդունական և պատահական նիւթում՝ է՛ ներքում ստորոգեալն կարէ գոլ և ոչ գոլ յենթակայումն = որպ. մարդ ընթանայ = մարդ է՛ սպիտակ =

Որակութիւն բաղերևութեան՝ է՛ ստորասութիւն, և բացասութիւն = Ճշմարտութիւն, և ստութիւն = արդ՝ ստորասական նախադասութիւն՝ է՛ որոյ գլխաւոր կապումն ստորասէ = հինէն. ծառ է՛ բուսական = Իսկ՝ բացասականն է որոյ գլխաւոր կապումն բացասէ = հինէն. ծառ ոչ է՛ զգայական = Հաստի գլխաւոր կապումն բանզի երբեմն 'ի նախադասութեան բազումք են կապմունք = որպ. որ ոչ է՛ ընդ իս. է՛ հակառակ իմ = այս նախադասութիւն է՛ ստորասական. թէպէտ և բացասէ մի կապումն. որ ոչ է՛ գլխաւոր 'ի նախադասութեան = և կամ. որ ինչ է՛ զգայական. ոչ է՛ քար = այս՝ բացասական է՛. զի թէպէտ մի կապումն ստորասէ. սակայն գլխաւոր կապումն բացասէ = Հղրդ՝ գլխաւոր կապումն նախադասութեան է՛ այն, որ կապէ զնախնիագոյն ստորոգեալն ընդ ենթակային =

Ճշմարիտ նախադասութիւն է՛ որ ստորասէ զայն որ գոյ. կամ բացասէ զայն որ ոչ գոյ = որպէս. ձին է՛ խրխնջական = խրխնջականն ոչ է բանական. Իսկ՝ սուտն է, որ բացասէ զոր գոյ = կամ ստորասէ զոր ոչ գոյ = որպ. ձին է՛ հաջողական = շունն ոչ է՛ ունբան =

քանակութիւն նախադասութեանց՝ է որով նախադասութիւն առնչանակէ կամ զամենն. կամ զոմանս. կամ զմինն. կամ զոչ մինն։ վասն որոյ քանակ է նախադասութիւն։ ընդհանրական. մասնաւոր. անորոշական. և եզական։ Իսկ ընդհանրականն՝ է որոյ ենթակայն է հասարակ եզր, ընդհանուր նշանաւ ստորանակեալ։ Արդ՝ ընդհանուր նշան է այսպիսի։ ամ. ոչոք. և նմանք սոցին։ ոպ. ամ մարդ է կենդանի։ ոչոք ձի է բանական։ մասնաւոր նախադասութիւն է որոյ ենթակայն է հասարակ եզր ընդ մասնաւոր նշանաւ. ոպ, ոմն. ոք. և այլ։ ոպ. ոմն մարդ է փիլիսոփայ։ Անորոշականն է նե-րում ենթակայն է հասարակ եզր ոչինչ նշանաւ բացորոշեալ։ ոպ. մարդ ընթանայ։ Եզականն է որոյ ենթակայն կամ է անհատ. ոպ. պետրոս ընթանայ։ կամ հասարակ եզր ընդ ցուցական նշանաւ։ ոպ. այս մարդս ընթանայ։

Յաղագս հակադրութեան բացարձակ նախադասութեանց։

Յօդուած. Դ։

De Oppositione Propositionum absolutarum.

Articulus Quartus.

Մինչ և ցայժմ ուսուցաք զտրամադրութիւն ստորոգական բացերնութեան ըստ ինքեան իւրեան խորհրդելոյն։ Արդ՝ յայսմհետէ վերպատութիւն աւանդեսցուք յաղագս նոյն բացերնութեանց. ըստ որում առ միմեանս յարաբերին։ և նոցայցն այսպէս խմացելոց երեք ինչ պատկանին. ոպ. հակադրութիւն. համեմատութիւն. և անդրադարձութիւն։ Արդ՝ նախ աւանդեսցուք յաղագս հակադրութեանն։

Հակադրութիւն՝ է ընդդիմակացուն առ միմեանս երկուց նախա-

նախա

նախադասութեանց , զնոյն ստորոգեալ , և զնոյն ենթակայն ընդդիմանողաց . որք հակակայեն կամ ըստ որակութեան . կ ըստ քանակութեան . կ ըստ երկաքանչիւրոց 'ի դոցանէ ։ Իսկ՝ քառեակ է՝ հակադրութեանն նախադասութեանցն ։ Հակասական . ներհական . ենթաներհական . և ընդմիմեամբք ։

Հակասական նախադասութիւնքն՝ են որք հակակայեն 'ի միմեանս քանակութբ և որակութբ . մինչ զի մինն եղիցի ընդհանրական ստորասական , և միւսն մասնաւոր բացասական . կամ ընդ դէմ սորին ։ Ո՛րպ . ամ մարդ է՝ կենդանի . ոմն մարդ ոչ է՝ կենդանի ։ Եւ ո՛չ մարդ է՝ կենդանի . ոմն մարդ է՝ կենդանի ։ Կամ հակասականք են , որք որակութբ միայն հակակայեն , եթէ երկոքեանն գոն եզականք ։ Ո՛րպ . պետրոս է՝ կենդանի , պետրոս ոչ է՝ կենդանի ։

Ներհական նախադասութիւնքն՝ են որք հակակայեն միայն որակութբ . մինչ զի մինն իցէ ստորասական . միւսն բացասական , և երկոքեանն ընդհանրականք ։ Ո՛րգոն . ամ մդ է՝ կենդանի . ո՛չ մարդ է՝ կենդանի ։

Ենթաներհականքն՝ են որք հակակայեն որակութբ միայն. այսպ զի մինն ստորասական . միւսն բացասական . բայց երկաքանչիւր ոք մասնաւոր ։ Հնպէս . ոմն մարդ է՝ կենդանի . ոմն մդ ոչ է՝ կենդանի ։

Ընդմիմեամբքն՝ են որք հակադրին միայն քանակութբ . մինն գոլով ընդհանրական . միւսն մասնաւոր . իսկ երկաքանչիւրոք կամ ստորասական . կամ բացասական ։ Հնգան . ամ մարդ է կենդանի . ոմն մարդ է՝ կենդանի ։ կամ ո՛չ մարդ է՝ կենդանի . ոմն մարդ ոչ է՝ կենդանի ։ Արդ՝ ամ այսպիսի տեսակք հակադրութեանն 'ի հետևօղ ձևոջս ցուցանին ։



՚Ի հակադրութեանց՝ մեծագոյն է հակասականն. ապա՝ ներհակականն. յետոյ ենթաներհակականն. իսկ փոքրագոյն՝ ընդմիմեւեալքն. զի ընդմիմեւեալք բայերեւութիւքն ոչ հակադրեն ՚ի միմեանց ըստ ստորասութեան և բացասութեան. այլ որոյ և ոչ ըստ ճշմարտութեան և սուտութեան. քանզի ՚ի ճշմարտութեան ընդհանրէն մասնաբերի մասնաւոր ճշմարտութիւն. և ՚ի մասնաւոր սուտութեան՝ սուտութիւն ընդհանուր. Աղբ՝ խիստագոյն հակադրութիւն գտանի անդ միայն. ուր ստորասութիւն կամ բացասութիւն գտանի.

Վասն ասացեալ հակադրութեանցն չորք կանոնք առաջաբերին ՚ի տրամաբանականացն. Առաջին կանոն է. Թէ հա-

Հակասական նախադասութիւնք ոչ երբէք կարեն գոլ համանգամայն ճշմարիտ. կամ սուտ = այլ հարկաւորապէս եթէ մինն է ճշմարիտ, միւսն է սուտ = քանզի ՚ի ճշմարտութենէ միոյ Եզրակացուցանեմք զսուտութիւնն միւսոյն, և անդրադարձապէս =

Երկրորդ կանոն. Ներհական նախադասութիւնք ոչ երբէք կարեն գոլ համանգամայն ճշմարիտ = այլ կարեն գոլ համանգամայն սուտ ՚ի ներընդունական նիւթում = իսկ ՚ի հարկաւոր և յանկարելի նիւթում՝ միշտ մինն է ճշմարիտ, և միւսն սուտ =

Երրորդ կանոն. Ենթաներհականքն ոչ կարեն երբէք գոլ համանգամայն սուտ. բայց կարեն համանգամայն գոլ ճշմարիտ ՚ի ներընդունական նիւթում. իսկ ՚ի հարկաւոր և անկարելի նիւթում՝ միշտ մինն է ճշմարիտ. և միւսն սուտ =

Չորրորդ կանոն. ընդմիմեալք նախադասութիւնք՝ ՚ի հարկաւոր նիւթում, գոն համանգամայն ճշմարիտ = և ՚ի յանկարելի նիւթում՝ գոն համանգամայն սուտ = իսկ ՚ի ներընդունական նիւթում եթէ ընդհանրականն է ճշմարիտ. մասնաւորն հարկաւորապէս է ճշմարիտ = այլ եթէ ընդհանրականն է սուտ. մասնաւորն կարէ գոլ ճշմարիտ = բայց եթէ մասնաւորն է ճշմարիտ. ընդհանրականն կարէ գոլ սուտ = իսկ եթէ մասնաւորն է սուտ. ընդհանրականն հարկաւորապէս է սուտ = օրինակք ոչ պիտոյ են Տրամաբանողին =

Յաղագս համազօրութեան բացարձակ բացերեւութեան.

Պրակք . Ե =

De Aequipollentia absolutæ Propositionis.

Articulus Quintus.

Համազօրութիւն է զօրութիւն որով երկու նախադասութիւնք հակադրեալք, և զնոյն ենթակայն և զնոյն ստորոգեցեալն ընդունող՝ համազօրական վերաբերութեամբ բացասութե ուրուք = Որ. զնոյն նշանակութիւն շահեն = Եւ որոյ տուեալ են կանոնքս այսոքիկ =

Առաջին կանոն = յորժամ միում ումեք յերկուց հակասական նախադասութեանցն՝ մի նախադասեցի բացասութիւն = յայնժամ համազօրական միասամ հակասականին = զոր օրինակ. հակասականքն զոն այսք = ամ մարդ է ազնուական. ոմն մարդ ոչ է ազնուական = եթէ առնես, ոչ ամ մարդ է ազնուական. ոմն մարդ ոչ է ազնուական = համազօրական = կամ այսպէս. ամ մարդ է ազնուական, ոչ ոմն մարդ ոչ է ազնուական = եւս համազօրական =

Երկրորդ կանոն = եթէ մի բացասութիւն ստորադասեցի ենթակայումն նախադասութե ուրուք ներհակականին. կամ ենթաներհականին. համազօրական միասամ ներհականին. կամ ենթաներհականին = երբեմն գաղափարաց. ներհականքն զոն այսք. ամ մարդ է ազնուական. ոչոք մարդ է ազնուական: եթէ առնես. ամ մարդ ոչ է ազնուական. ոչոք մարդ է ազնուական = համազօրական = կամ այսպէս. ամ մարդ է ազնուական. ոչոք մարդ ոչ է ազնուական = եւս համազօրական = Առդ՝ ենթաներհականքն են այսք. ոմն մարդ է ազնուական. ոմն մարդ ոչ է ազնուական = եթէ առնես. ոմն մարդ է ազնուական. ոմն մարդ ոչ է ոչ ազնուական = համազօրական =

Երրորդ կանոն։ Եթէ յերկուց բացասութեանց՝ մինն նախադասն. և միւսն համանգամայն ստորադասն ենթակայում ընդդիմեամբ նախադասութեան ուրուք. հանդէպ լինի միւսում ընդդիմեամբքն երրորդ գաղափարաւ. ընդ միջեամբք են սոքա. ամ մարդ է՛ սպիտակ. ոմն մարդ է՛ սպիտակ։ բայց հանդէտանման. եթէ ասեմ. ոչ ամ մարդ ոչ է՛ սպիտակ. ոմն մարդ է՛ սպիտակ։ կամ այսպէս. ոչ ոմն մարդ ոչ է՛ սպիտակ. ամ մարդ է՛ սպիտակ։ Իսկ՝ զի զկանոնդ ՝ի միտս առցեն աշակերտքն. շարադրեցան տողք այսոքիկ։

Ստորադրին, Ներ, Ենթներհակին։

Նախադրին Հակասականին։

Նախ և ստոր Ընդդիմեամբքին։

ԻԳ. Վս̄ համգիտութեան նախադասութեանց՝ բացասութիւն ստորադասելի է՛ ՝ի ներհակութիւն. և յենթաներհակութիւն։ այլ նախադասելի է՛ ՝ի հակասականութիւն։ Իսկ՝ յընդդիմեամբս նախադասելի է՛. և համանգամայն ստորադասելի։

Զոր՝ պատճառն է՛ այս։ Վս̄ զի բացասութիւն զըստ կեաց բնութիւն ունի. և զոր ինչ գտանէ յետ իւր, ապականէ և ՝ի հակակայն իւր փոխէ։ Վս̄ այսորիկ՝ յորժամ բացասութիւն նախադասն ընդհանրական և ստորադասական նշանին այս նախադասութեան. ամ մարդ է՛ սպիտակ։ ասելով. ոչ ամ մարդ է՛ սպիտակ. զերկուսին նշանն ապականէ. առնելով մասնաւոր և բացասական. և հանդիպացուցանէ զնախադասութիւնն՝ այս մին. ոմն մարդ ոչ է՛ սպիտակ. որ էր հակասականն իւր։ Նմանապէս յորժամ ենթակայում նոյն նախադասութեան ստորադասական բացասութիւն. ասելով, ամ մարդ ոչ է՛ սպիտակ. վս̄ զի բացասութիւնդ ոչ գտանէ յետ իւր զընդհանուր նշանն. ոչ շարաբերէ զնա։ Զոր՝ վս̄ զի գտանէ զստորասութիւն. ապականէ զնա։ ուստի նախադասութիւն դառնայ ընդհանուր

բացա֊

բացասական ։ և հանդիսանայ ներհականին իւրում . օր . այս մին . ոչ ոք մարդ է սպիտակ ։ և նոյնպէս առնելի է վա այլոցն . որպ յայտ է՝ տրամաբանողին ։

Յաղագս ընդդարձութեան բացարձակ բացեր ևութեան ։

Պրակք . զ ։

De Conuersione absolutæ Propositionis. Articulus Sextus.

Ընդդարձութիւնն է՝ փոխադրութիւն ստորոգելեացն ՚ի յենթակայն . և ենթակայէն ՚ի ստորոգելեացն երկոցունց նախադասութեանցն . նոյն մնալով նոցին որակութիւն ։ որպ . մակացութիւն է ունակութեան հանդարձելի այսպ . ունակութիւն է մակացութեան ։ Նախադասութիւն , որոյ եղերքն փոխեսցին . ասի ընդդարձեալ ։ իսկ՝ այն որ լինի յեղերաց փոփոխելոյն , ասի ընդդարձօղ ։ Զասցի . փոխադրութիւն ստորոգելելոյն յենթակայն . և ընդ դէմ սորին ։ բանզի պիտոյ է՝ , զի որ էր ստորոգեալ ՚ի յառաջարկութեան . եղիցի ենթակայ ՚ի յեզրակացութեան . և որ էր ենթակայ , լիցի ստորոգեալ ։ Զասցի . նոյն մնալով որակութիւն ։ Հասանի եթէ ընդդարձեալն էր ստորասական կամ բացասական . ճշմարիտ կամ սուտ . այսպիսի և պարտի զօլ ընդդարձօղն ։

Երեք գոն տեսակք ընդդարձմանն ։ պարզ . ըստ պատահման . և ըստ հակադրութեան ։ պարզ ընդդարձութիւնն է՝ որում նոյն մնայ որակութիւն և քանակութիւն . և ոչինչ լինի վերաբերութիւն ։ այս կերպիւս անդդարձելի միայն նախադասութիւն ընդհանրական բացասական՝ ՚ի յընդհանրական բացասական ։ և ըստմասնաւորական ստորասականն՝ ՚ի յըստմասնաւ-

որէն

որէն ստորասականն = որպ. ոչոք զգայուն է՛ քար. ապա ուրեմն ոչոք քար է՛ զգայուն ; ամն մարդ է՛ սպիտակ . ապա ուրեմն ամն սպիտակ է՛ մարդ =

Անդրադարձումն ըստ պատահմանն՝ է՛ յորժամ փոփոխի միայն քանակութիւն 'ի յընդհանրականէն 'ի մասնաւորն = այսպէս ըստբոլորէն ստորասականն անդրադարձի յըստմասնաւորէն ստորասական . և ըստբոլորէն բացասականն՝ յըստմասնաւորէն բացասական = որպ. ամ մարդ է՛ կենդանի. ապա ուրեմն ոմն կենդանի է՛ մարդ = ոչոք մարդ է՛ քար . ապա ուրեմն ոմն քար ոչ է՛ մարդ ․

Անդրադարձումն ըստ հակադրութեան՝ է՛ յորում մնայ նոյն որակութիւն և նոյն քանակութիւն . բայց եզերքն փոփոխին յորոշելեացն յանորոշելիս , վերաբերութեամբ բացասութեանց = և այսկերպիւ անդրադարձին ըստբոլորէն ստորասականն . և ըստմասնաւորէն բացասականն = որպ. ամ մարդ է՛ ծիծաղական . ապա ուրեմն ամ ոչ ծիծաղականն է՛ ոչ մարդ = ոմն կենդանի ոչ է՛ ձի . ապա ուրեմն ոմն ոչ ձի ոչ է՛ ոչ կենդանի = Որդ՝ զի կարասցես դիւրաւ 'ի միտս առնուլ, ընթերցիր հետևեալ տողս =

Հեղի ըստ պարզ անդրադարձման =
Եվա փոխի ըստ պատահման =
Աղօթք ըստ հակադրութեան =
Այէ ստորասէ . Եչ բացասէ .
Երկոքեանքն ընդհանուրք =
Ին ստորասէ . Օ՛ բացասէ .
Երկոքեանքն մասնաւորք =

Որդ՝ գիտելի է՛ թէ յերկուս առաջին տողսն գոն երեք բառք հեղի . եվա . աղօթք = որք ընդունին զչորս ձայնաւոր գիրս = ա. ե. ի. օ = յորոց այբ նշանակէ զըստբոլորէն ստորասականն =

որպ յայտ առնեն այլ հետեւեալ տողքն ։ Եւ՝ զըստորոգեալքն բացասականն ։ Եւ՝ զըստամասնաւորքն ստորասականն ։ Օ՝ զըստամասնաւորքն բացասականն ։ Եւ է նշանակութիւն · որպ ՚ի վերոյ ասացաք · Թէ հեղի . ՊՐ · ըստորոգելոյն բացասական նախադասութի , և ըստամասնաւորքն ստորասականն՝ անդրադարձեալն պարզ անդրադարձմամբ ։ Իսկ եղմ . ՊՐ · ըստորոգելոյն բացասականն , և ըստորոգելոյն ստորասականն՝ անդրադարձմամբ ըստ պատահման ։ Բայց աղօթք . ՊՐ . ըստորոգելոյն ստորասականն , և ըստամասնաւորքն բացասականն անդրադարձեալն ըստ հակադրութեան ։

Յաղագս եղանակաւոր բացերեւութեան ։
Գլուխ . Է ։
De Propositione Modali.
Articulus Septimus.

Եղանակաւոր բացերեւութիւն է որ նշանակէ զեղանակ որով ստորոգեալն առընթերցոյ ենթակայութեան ։ որպէս . աշխարհն է մարդ հարկաւորապէս ։ պետրոս է սեաւ ներքին դիպուածաբար ։ Իսկ եղանակն է բացորոշումն իրին . և է եռեակ ։ անտանական . առերկայական . և բաղադրելի ։ Անհնարական եղանակն է որ բացորոշէ զերկերս նախադասութեան ։ որպէս . մարդ սպիտակ ընթանայ ։ սպիտակն է մարդ իմաստուն ։ Առերկայականն է որ բացորոշէ զբային նախադասութեան ։ հոգին . պետրոս ընթանայ արագապէս ։ արիստոտէլ է մարդ հարկաւորապէս ։ Բաղադրելին է որ բացորոշէ զբոլոր բաղադրութիւն ստորոգելոյն ընդ ենթակային ։ որպ . մարդ զօր բանական է հարկաւոր ։ Եւ յաղագս այսպիսի եղանակաւոր այս այժմ առնելոց եմք ։

Արդ

ձեւոց՝ հակադրութիւն. հանդիպութիւն. և անդրադարձութեան եղանակաւոր նախադասութեան՝ թողեալ լիցին = քանզի համեմատութիւն ունին դոքա առ նախասացեալսն յաղագս նախադասութեան բացարձակին և 'ի գոլոյն = Իսկ այժմ ուսուցուք յաղագս քանակութեան. որակութեան. և եղանակին եղանակաւոր նախադասութեան =

Եղանակքն որ զնախադասութիւն որակացուցանեն՝ գոն չորք = այսինքն. հարկաւոր. ներընդունական. կարելի. անկարելի = Ըստ որոյ և քառեակ է եղանակաւոր նախադասութիւն. այսինքն. եղանակաւոր 'ի հարկէն. որպէս. կենդանւոյ կեալն է հարկաւոր = եղանակաւոր 'ի ներընդունակէն. հնարաւոր. ուսանել ընթանալն է ներընդունական = եղանակաւոր 'ի կարելոյն. որ-գան. մարդոյ տեսանելն է կարելի = եղանակաւոր 'ի յանկարելոյն. որպէս. ձիոյ տրամաբանելն է անկարելի = յորնախադասութիւնս կրկնակ ինչ դնսին. մինն կոչի ասացեալ. և միւսն եղանակ = որպ յայսմ. մարդ գոլ բանական՝ է հարկաւոր. ասացեալն է՝ ինքն նախադասութիւն. որ կայ փոխանակ ենթակայի. այսինքն. մարդ գոլ բանական = իսկ եղանակն՝ է որ յաւելեալ ասացելոյն. և դնի փոխանակ ստորոգելոյ. այսինքն. է հարկաւոր =

Ըստ այսորիկ և երկեակ է՝ քանակութիւն 'ի յեղանակաւոր նախադասութիւնս = մինն ըստ ասացելոյն, և միւսն ըստ եղանակին = յաղագս քանակութեան ասացելոյն խօսեցաք 'ի վերոյ. յորժամ յաղագս նախադասութեան 'ի գոլոյն = բայց քանակութիւն եղանակին՝ ոմն է ընդհանրական, ոմն մասնաւոր = ընդհանրականն է որով եղանակն ստորոգի ըստ ասացելոյն յամ ժամանակի = և այսպիսիք գոն՝ հարկաւորն և անկարելին : քանզի որ է հարկաւոր, կամ անկարելի. միշտ այսպէս եղև, և լինելոց է. որպ. մարդ գոլ բանական՝ է հարկաւոր = մարդ գոլ

անստոյգն է անկարելի ։ մանաւանդ որ քանակութիւն եղանակին է յայլ եղանակն ստորոգի ըստ հաւասարելոյն ոչ միշտ այլ երբեմն ։ որպիսիք են ներընդունականն և կարելին , վ̄ զի սոյն երբեմն գոն . և երբեմն ոչ գոն . որպ . մարդ գոլ սպիտակ՝ է ներընդու- նական ։ մարդոյ ընթանալն է կարելի ։

Ստորոգութիւն եղանակաւոր նախադասութեան՝ թէ ըստ ստորասութեան և բացասութեան իցէ . կամ թէ ըստ ճշմարտու- թեան և սուտութեան . ժամանակ մանաւանդ 'ի յեղանակէն . ոչ 'ի յաւասարելոյն ։ Եւ որոյ ենթէ եղանակն է ստորասական . ստո- րասական լինի և նախադասութիւն . Թէպէտ և հաւասարեալն բացասական իցէ ։ ձի բար , ձի ոչ գոլ մարդ՝ է հարկաւոր ։ Նոյնպէս . ձի գոլ սպիտակ՝ ոչ է հարկաւոր . է բացա- սական ։ Նոյն ասելի է զ̄ ճշմարտութեան և սուտութեան ։ քանզի նախադասութիւն է ճշմարիտ . ներում եղանակն ստորոգի ըստ աստացելոյն ճշմարտապէս ։ որպ . ձի գոլ բարի՝ է հարկաւոր ։ և սուտ է . ներում ստորոգի սուտապէս . որպ . մարդ գոլ ձի՝ է կա- րելի ։

Յաւասարելոցս հետևի , թէ 'ի կողմանէ եղանակին ամ եղա- նակաւոր նախադասութիւն ճշմարիտ՝ է հարկաւոր ։ և ամ եղանակաւորն սուտ՝ է անկարելի ։ Թէպէտ և աստացեալքն ներ ընդունական իցէ ։ և պատճառն է , զի ամ եղանակաւոր ճշմարիտ նախադասութիւն՝ միաբանութեամբ որպէս է ճշմա- րիտ . այսպէս ուրեմն է հարկաւոր ։ և եղանակաւոր սուտն միաբանութեամբ որպէս է սուտ . այսպէս ուրեմն անկարելի ։ Վ̄ զի այսուհետև այս նախադասութիւնս գոն 'ի հարկաւոր նիւթում . ստորասաց ընթանալն՝ է ներընդունական . կամ է կարելի . կ̄ ոչ է անկարելի , վ̄ զի ստորոգեալն . զ̄ . կարելի և այլն՝ հար- կաւորապէս ստորոգի զենթակայէն զ̄ . ստորասաց ընթանա- լոյն ։ Նոյնպէս այս նախադասութիւնս գոն 'ի յանկարելի նիւ-

Թուի. Սոկրատայ ընթանալն է հարկաւոր. կամ է անկարե-լի. կամ ոչ է կարելի. զի ստորոգեալն սըստաբար ստորոգի զէնթականեն. Եւ այս բանն է յաղագս եղանակաւոր նախադա-սութեան.

Յաղագս Ստորադրական բացերեւութեան.

Գլուխ. Ը.

De Propositione hypothetica.

Articulus Octauus.

Ստորադրական բացերեւութիւն և բաղադրելի է որ ընդու-նի զբազում ստորոգական նախադասութիւնս շաղկապեալս զշաղկապեալս. որպէս եթէ արեգակն գոյ, օր գոյ. Եւ այսպէս. զբա-զում ստորոգական և այլ. առ ի տարբերութիւն պարզ նախա-դասութեան և ստորոգականին. որ ընդունին միայն զբազում եզերս. Եւ այսպէս շաղկապեալ զշաղկապեալս. Վասն զի եթէ նախա-դասութիւնքն գոն ամենևին արձակեալք. ոչ զմի ստորադրական նախադասութիւն բաղադրեն, այլ զբազում ստորոգականս.

Չորք ստորադրական նախադասութիւնն անջատ յերիս տե-սակս. ի շաղկապականն. ի զատականն. և Թէականն. Շաղկա-պականն է յորում շարամանին երկու ստորոգական նախա-դասութիւնքն միջնորդութեամբ շաղկապիս. և. որպէս. մարդ է բա-նական և անասունն անբան. Եւ գիտելի է. Թէ յայնժամ շաղկապականն է ճշմարիտ. յորժամ երկոքին ստորոգական նախադասութիւնքն որ գոն ճշմարիտ. բայց եթէ մինն է սուտ. բոլոր շաղկապականն է սուտ. որպէս. մարդ է բանական և անբան.

Բ ստորադրական զատականն է ներում շարադրին երկու ստորոգական նախադասութիւնք ի ձեռն զատական նշանիս.

կամ ։ և է՛ ճշմարիտ. եթէ մի նախադասութի՛ւն է՛ ճշմարիտ և միւսն սուտ ։ որպէս. որմն կամ է՛ սպիտակ. կամ սեաւ ։ Իսկ՛ է՛ սուտ յորժամ են երկոքեանն սուտ. և երկոքեանն ճշմարիտ ։ ոմն. մարդ կամ է՛ խրխնջական, կամ հաչողական ։ և մարդ կամ է՛ բանական. կամ է՛ ծիծաղական ։

Թէական ստորադրականն՝ է՛ որ պարունակէ զերկու ստորոգական նախադասութիւնս զշաղկեալս միջնորդութեամբ շաղկապիս. թէ ։ ոմն. թէ մարդ ընթանայ, շարժի ։ Իսկ՛ գիտելի է. զի թէականին ճշմարտութի՛ւն կայանայ ՚ի հարկաւորութեան եզրակացութեան. այս. ՚ի բաղադրութեան զոր ունի եզրակացութիւն ընդ առաջադրութեան. մինչ զի յառաջադրութենէ հետեւեսցի հարկաւորապէս եզրակացութիւն. ոմն. թէ է՛ մարդ. ուրեմն է՛ բանական ։ ուստի լինի. զի թէականն կարէ գոլ ճշմարիտ, թէպէտ առաջադրութիւն և եզրակացութիւն սուտ իցեն ։ ոմն. թէ կենդանին է՛ քար. ապա ուրեմն է՛ անզգայ ։ և ևս լինի երբեմն. զի թէականն սուտ իցէ. եւ առաջադրութիւն և եզրակացութիւն ճշմարիտք ։ զի ոչ ունի զհարկաւորութիւն եզրակացութեան ։ ոմն. եթէ սպիտակ էր մարդ. ապա ուրեմն էր փիլիսոփայ ։

Յասացելոցս երեւի. թէ որակութիւն ստորադրական նախադասութեան ըստ ստորասութեան և բացասութեան՝ առնել լինի ՚ի շաղկապէն որ զստորոգական նախադասութիս բաղադրէ ։ Քանզի յորժամ շաղկապն ստորասի. թէպէտ և բացասին ստորոգական նախադասութիւնքն. յայնժամ ստորադրականն է՛ ստորասական ։ ոմն. եթէ մարդ ոչ ընթանայ. ոչ շարժի ։ բայց եթէ շաղկապն բացասի. թէպէտ և ստորոգական նախադասութիւնքն ստորասին. ստորադրականն է՛ բացասական. ոմն. ոչ թէ ընթանայ մարդ. շարժի ։

Ստորադրական նախադասութեան՝ ոչ գոյ առանձնական

քանակութիւն, այլ ասէ ընդհանրականն կամ մասնաւորն ըստ նե-րական մասանցն . Բ . ստորոգականն նախադասութեանցն, յորոց է շարամանի ։

Յաղագս բաժանման ։

Դրուագ . Թ ։

De Diuisione .

Articulus Nonus .

Բաժանումն է՝ բան, որով բոլոր ինչ բաժանի յիւր մա-սունս ։ ասէ բան՝ փոխանակ սեռի . ասելն այլըն՝ փոխա-նակ տարբերութեան ։ Այլ որոյ բաժանումն զանազանի յայլոց բանիցն ։ արդ՝ բոլորն որ բաժանի, կոչի բաժանեալ . իսկ՝ մա-սունքն յորս բաժանի, կոչին անդամք բաժանման ։ Որպ . յորժամ ասի . կենդանին է՝ բանական, կամ է՝ անբան ։ այս է՝ բաժա-նումն . որով բոլորն . Ա . կենդանին՝ բաժանի յիւր մասունս . Բ . ՚ի բանական և յանբան . որք են անդամք բաժանմանն ։

Բաժանմանցն՝ ոմն է՝ ըստ էութեան ոմն ըստ պատահման . բաժանումն ըստ էութեանն է՝ որով բաժանի բոլորն ըստ էութե-անն ։ և ըստ պատահմանն՝ է՝ որով անջատի բոլորն ըստ պա-տահմանն ։ Արդ՝ բոլոր ըստ էութեանն՝ է՝ երրեակ ։ ամբողջա-կան . էութենական . ընդհանրական ։ այսպէս և երրեակ է՝ բա-ժանումն ըստ էութեան . Ա . ամբողջական . որով անջատի բո-լորն յիւր մասունս ամբողջականս ։ Որպէս . մարմինն՝ ՚ի գլուխ . ՚ի ձեռս . յոտս ։ Կ զօրք՝ ՚ի գնդաւորսն ։ և նմանք սոցին ։ բայց այսպիսի մասունք Կ զնոյն բան ունին, և զնոյն անուանութե . և կոչին համասեռք ։ Որպ մասունք ջրոյ ։ կամ ունին զանազան բան . և ասին այլասեռք ։ Որպ անդամք մարմնոյ ։

Էութենական բաժանումն է՝ որով բոլորն բաժանի յիւր

էութենական մասունս ։ Իսկ՝ էութենական մասունքն են ֆիզիկականն․ որպէս նիւթ և տեսակ ։ Հն կեն․ հոգի և մարմին ՚ի մարդումն ։ Կամ են մետաֆիզիկականն․ որպէս սեռ և տարբերութիւն որպան․ կենդանի և բանական ՚ի նոյն մարդն ։

Ընդհանրական բաժանումն՝ է՛ որով բաժանի ընդհանրականն յիւր վայրապտրյանն ։ որպէս անասուն կենդանի․ և ստորոգի ըստ մարդոյ․ ըստ ձիոյ․ ըստ առիւծի․ և ըստ այլոց ։ Իսկ եթէ բոլոր ընդհանրականն փաղանունաբար վերաբերի առ յիւր վայրապտրյանն․ որպէս բոյս․ կենդանի․ և այլքն ։ կոչի բաժանումն փաղանունական ՚ի յիւր փաղանունականութիւն ։ Իսկ եթէ վերաբերի համեմատաբար․ որպէս առողջն առ կենդանի․ առ դեղ․ և առ զարկ բազկին ։ առասի բաժանումն համեմատին առ յիւրական համեմատութիւն ։

Չորրդ՝ բաժանումն բոլորին ըստ պատահմանն՝ նուաղի լինի ։ Կամ բաժանի ենթակայն յիւր պատահմունսն ։ որպէս․ կենդանեացն՝ ոմանք են սպիտակ․ ոմանք՝ սեաւ ։ Կամ պատահումն յենթակայսն․ որպէս․ սպիտակացն՝ ոմն է՛ ձի․ ոմն՝ բամբակ ։ Կամ պատահումն ՚ի պատահմունս ։ որպէս․ սպիտակացն՝ ոմն է՛ քաղցր․ ոմն՝ դառն ։

Բազում ինչ խնդրի․ զի բարի եղիցի բաժանումն ։ Նախ․ թէ մասունք բաժանմանն՝ վայրապտրյն լիցին քան զբոլոր բաժանեալ ։ Քանզի այսորիկ բարի ոչ է՛ այս․ կենդանեացն՝ ոմն է՛ զգայական․ ոմն՝ բանական․ քանզի զգայականն՝ ոչ է՛ վայրապտրյն քան զկենդանի ընդհանուր ։

Երկրորդ․ խնդրի թէ բաժանման անդամքն ոչ նուազ լիցին և ոչ յաւելեալ քան զբաժանելոյն ։ Այսպիսութիւն ՚ի մասանն առէ այլ՝ համախոսղնալ նմա ։ Քանզի որոյ այս է՛ նուաղ բաժանումն ։ կենդանեացն՝ ոմանք են երկրայինք․ և ոմանք ջրայինք ։ Զի այսորիկ ոչ համախոսանան բոլոր կենդանեացն․ զի գոն և օդայինս

կեն

կենդանիքն. ըդ. Թեւաւորքն ։ Եւ այս է՛ աւելորդ. կենդանեացն՝ ոմանք են բանականք. ոմանք անբանք. եւ ոմանք անմարմինք. քանզի որ է՛ անմարմին. նմանապէս ոչ առի կենդանի. ըդ. շնչաւոր զգայուն ։

Երրորդ. խնդրի թէ բաժանումն ոչ եղիցի ՚ի հեռաւոր մասունս, այլ ՚ի մերձաւորս ։ ստուգուած յոյժ է՛ այս ։ գոյացութեցն՝ ոմն է՛ շնչաւոր. ոմն անշունչ ։ քանզի պարտ է ասել. գոյացութեցն՝ ոմն է՛ մարմնաւոր. ոմն է՛ անմարմին ։ Եւ այս բաւական է՛ յաղագս երկրորդ մասին ներածութեան ։

ԵՐՐՈՐԴ ՄԱՍՆ ։

Յաղագս երրորդ մտաց ներգործութեան ։ ըդ.
յաղագս ձեռնարկութեան ։

TERTIA PARS.

De Tertia intellectus Operatione : hoc est,
De Argumentatione.

Երրորդ մտաց ներգործութին՝ է՛ տրամաբանութին. որով մտաք ՚ի միոյ ծանօթագոյն առաջարկութէ, կամ ՚ի բազմացն՝ եզրակացուցանէ զմիւսն զանծանօթագոյն. որ յայտ եղանի շաղկապիւս ։ ապա ուրեմն. եւ առի եզրակացութի. կամ հետեւութի ։ զոր օրինակ. ոմն է՛ ազատակ. ապա ուրեմն է՛ արտադատողաչաց ։

Թէ զինչ իցէ Ձեռնարկութիւն.
Դրակք. ա.
Quid sit Argumentatio.
Articulus Primus.

Ձեռնարկութիւն է բան, ներում ՚ի ծանօթագոյնէ յու-մեքէ՝ անծանօթագոյնն մակաբերի։ ասացի բան՝ փո-խանակ սեռի. և այսու հասարակ ձեռնարկութիւն ընդ սա-մանեն. բաժանմանն. և այլ բանիւ։ ասացի. ներում ՚ի ծա-նօթագոյնէ և զայլսն՝ փոխանակ տարբերութե. և այսու ձեռ-նարկութիւն տարբերի յամ բանից. ոչ զմինն ՚ի միւսոյ մակա-բերողաց։

Ծանուցանել հետևի, թէ ձեռնարկութիւն պարունակէ զե-րիս։ զնախընթացսն. ա. առաջարկութիւն։ զհետևօղն. բ. եզրակացուցեալ։ և զհետևութիւն. գ. եզրակացութիւն։ Նախընթացսն է՝ այն. յորմէ այլ ինչ մակաբերի։ հետևօղն է, որ յայլմէ մակաբերի։ հետևութիւն է, որով զամնակէ զմինն մա-կաբերիլ ՚ի միւսոյն։ Եբրեւ դաղափարաւ. մարդ է կենդանի. ապա ուրեմն է զգայական. առաջագոյն նախադասութիւն ասի նախընթաց. կամ առաջարկութիւն։ վերջագոյնն ասի հետևօղ. կամ եզրակացուցեալ։ Իսկ՝ մասնիկդ. ապա ու-րեմնդ՝ ասի հետևութիւն կամ եզրակացութիւն։

Դարձեալ հետևի, թէ առ բարի ձեռնարկութիւն խնդրի հարկաւոր բաղադրութիւն ՚ի մէջ նախընթացին և հետևողին. ապա թէ ոչ այսպէս լինի. ոչ կարէ հարկաւորապէս մինն ՚ի միւսոյն մակաբերիլ։ Եթէ այսպիսի բարի է՝ վերասացեալ ձեռ-նարկութիւն. մարդ է կենդանի. ապա ուրեմն է զգայական։ զի զգայականն ունի զհարկաւոր բաղադրութիւն ընդ կենդա-նւոյն։ բայց ոչ բարի է՝ այս. Ձին է մարմին. ապա ուրեմն է

ապկ

սպիտակ ։ զի ոչ սպիտակութիւն ոչ համահաւասարապէս սպիտակին մարմնոյն, այլ ըստ պատահման. բազում գոլով մարմինք ոչ սպիտակ.

Ձեռնարկութիւն է երկեակ. մինն նիւթական. միւսն կերպական ։ Նիւթական ձեռնարկութիւն է որ մակաբերէ զմինն ՚ի միւսոյ զօրութեամբ նիւթոյ ։ Եւ որպէս նոյն կերպդ ձեռնարկութեան՝ ոչ նոյնպէս եղանակացուցանէ ՚ի յայլ նիւթում ։ որպէս. թէ մարդ է ծիծաղական թէ բանական է ծիծաղական՝. ապա ուրեմն թէ բանական է մարդ ։ այս ձեռնարկութիւն է նիւթական. զի եղանակացուցանէ միայն զօրութեամբ նիւթոյ. որպէս. միայն բաղադրութեամբ զոր ունին ՚ի միմեանս նշանակեալ եզրութիւնքն ։ այլ ոչ զօրութեամբ կերպին ։ զի այսպիսի եթէ նոյն կերպդ ձեռնարկութեան տարածի առ այլ նիւթ, ոչ բարւոք եղանակացուցանէ ։ որպէս. թէ մարդ է կենդանի. թէ ձի է կենդանի, ապա ուրեմն թէ ձի է մարդ ։ Կերպական ձեռնարկութիւն է. որ եղանակացուցանէ զօրութեամբ կերպին. որպէս. եթէ նոյն պահեսցի կերպ ձեռնարկելոյ յամ նիւթում, միշտ բարւոք եղանակացուցանէ ։ որպէս. թէ կենդանի է զգայուն. թէ մարդ է կենդանի, ապա ուրեմն թէ մարդ է զգայուն ։

Արդ՝ չորք են տեսակք ձեռնարկութեան. որպէս. հաւաքաբանութիւն. հնար. մակածութիւն. յարացոյց ։ Հաւաքաբանութիւն լինի, յորժամ յերկուց առաջարկութեանց բարւոք շարադրելոյ՝ մակաբերի եզրակացութիւն ։ որպէս. թէ կենդանի է գոյացութիւն. թէ մարդ է կենդանի, ապա ուրեմն թէ մարդ է գոյացութիւն ։

Հնար լինի յորժամ ՚ի միոջէ առաջարկութենէ մակաբերի մի եզրակացութիւն ։ որպէս. թէ մարդ է կենդանի. ապա ուրեմն թէ մարդ է գոյացութիւն ։ Եւ հնարն կոչի յարմարական հաւաքաբանութիւն կարճեալ. զի ոչ ի յերկուց առաջադասութեանց եղանի.

յորոց մինն առնախընթաց կամ առաջարկութի. և միւսն հետեւութի կամ եզրակացութի ։ և եթէ երրորդ նախադասութին վերաբերցի. կատարեալ հաւաքաբանութի դառնայ ։

Մակածութի է՝ յորժամ ՚ի յոլովից մասնաւորաց՝ ընդհանրական ինչ մակաբերի ։ ոպ. այս մարդս է ծիծաղական. և այս. և սոյնպէս ըստ իւրաքանչիւրոցն. ապա ուրեմն ամ մարդ է ծիծաղական ։

Յարացոյց, որ և օրինակ ասի. լինի յորժամ ՚ի նմանէ որ պատահի միում ումեմն կամ յոլովից՝ մակաբերի միւսն վն նմանութե ինչ. ոպ. Դաւիթ ապաշխարութե ընկալաւ զթողութի մեղաց. ապա ուրեմն որ ոք ապաշխարիցէ. զթողութի մեղաց ընկալցի։ Այսք են չորք տեսակք ձեռնարկութեն ։ Վոր՝ քանզի հաւաքաբանութին է հաստատագոյն և պատուականագոյն քան զամենեսեան ։ Եւ վն այսորիկ զմնացեալսն թողեալ՝ վարդապետութի առասցուք յաղագս նորին միայնոյ ։

Յաղագս հաւաքաբանութե. և նիւթոյ. և կերպի նորին ։

Գլուխ. Բ ։

De syllogismo. Et de Materia, & Forma ipsius.

Articulus Secundus.

Սահման հաւաքաբանութեն բացատրի յարիստոտէլէ յառաջին գիրսն նախկինսն այսպէս. հաւաքաբանութի է բան, յորում ումանց եդելոց՝ այլ իմ ինչ յայնցանէ ՚ի հարկէ պատահի ։ ասի բան՝ փոխանակ սեռի ։ ասի՝ յորում ումանց՝ բազմաւորակի. զի հաւաքաբանութին ոչ զմի. այլ զբազում ունի զառաջարկութիս. առ ՚ի տարբերութի հնարին. որ ՚ի միոջէ յառաջարկութէ մակաբերէ զեզրակացութին ։ ասի

եդե

եղելոյ. ը̃. հաւանելոյ. քանզի եթէ առաջարկութիւնքն ոչ գոն ճշմարիտ. և եթէ պատասխանօղն ոչ հաւանի. ոչ կարէ ձեռնարկօղն եզրակացուցանել զհետևութիւն = սան՝ այլ եւ ինչ յայտնյանէ. զի հետևութիւն եզրակացուցեալ՝ պարտի գոլ որ չեալ յառաջարկութեանց. եթէ անծանօթագոյնն ՚ի ծանօթագունիցն: և սան՝ ՚ի հարկէ պատահի. ը̃. մակաբերի և եզրակացուցանի. վասն զի զօրութեամբ առաջարկութեանց հարկաւորապէս եզրակացուցանի հետևութիւն = հարկաւորապէս ասացի. ը̃. հարկաւորութեամբ հետևութեան. ոչ հետևողին. օ̃պ. ա̃մ մարդ է երկոտանի. Սոկրատէս է մարդ, ապա ուրեմն Սոկրատէս է երկոտանի =

Նիւթ հաւաքաբանութեան է երկեակ. հեռի, և հուպ = հեռինիւթն՝ գոն եզերք յորոց հաւաքաբանութեան նախադասութիւնքն շարամանին = հուպնիւթն՝ գոն ինքեանք նախադասութիւնքն, որ ՚ի հաւաքաբանութեան երեք պարտին գոլ. ոչ աւելի և ոչ նուազ = առաջին նախադասութիւնն կոչի մեծագոյն. երկրորդն փոքրագոյն. և երկոքեանն ասին առաջարկութիւնք = Իսկ՝ երրորդն կոչի եզրակացութիւն, կամ հետևութիւն =

Եզերքն, որք հեռապէս զհաւաքաբանութիւն շինեն. գոն երեք: և ասին մեծ ծայր. փոքր ծայր. և միջնորդ եզր = Առաջնոյ երկուցս, իւրաքանչիւր կրկնակի առեալ լինելով՝ բաղադրեն զերկս նախադասութիւնս. ը̃. զմեծագոյնն. զփոքրագոյնն. և զեզրակացութիւն = միջնորդ եզր՝ է այն որ ներկու առաջարկութիւնս. ը̃. ՚ի մեծագունին և ՚ի փոքրագունին՝ կրկնակի առնանի. և յեզրակացութեանն ոչ մտանի = այսպէս անուանեալ զի միջնորդութեամբ նորին մեծ ծայրն և փոքրն շարադրեալին ՚ի միմեանս. և ապա շարակցեալք մակաբերին ՚ի յեզրակացութեան = մեծ ծայր է՝ որ ՚ի մեծագոյն նախադասութեան շարամանի ընդ միջնորդ եզրին = փոքր ծայր է որ ՚ի

փոքրագունին ընդ նոյն միջնորդին շարամանի. և այսպէս մեծ ծայրն և փոքրն՝ զմիջնորդն թողեալք, երկոքեանն ժամանեն յեզրակացութիւն. որպէս օրինակ. ոչ գիտէ միտքն. թէ մարդ գոյացութիւն իցէ, թէ ոչ. բայց գիտէ. թէ կենդանին է գոյացութիւն. և թէ կենդանին ըստորոգանութիւն ունի ընդ մարդոյ և ընդ գոյացութեան. վասն որոյ միջնորդութեամբ կենդանւոյն եզրակացուցանէ, թէ մարդն է գոյացութիւն. այսպէս տրամաբանելով. ամենայն կենդանի է գոյացութիւն. մարդ է կենդանի. ապա ուրեմն մարդ է գոյացութիւն:

Այս է հաւաքաբանութիւն. ներքոյ մեծագոյնն է, ամենայն կենդանի է գոյացութիւն. փոքրագոյնն՝ մարդ է կենդանի. Իսկ եզրակացութիւնն և հետեւութիւնն՝ ապա ուրեմն մարդ է գոյացութիւն. և միջնորդ եզրն է կենդանի, որ միացուցանէ զմարդն ընդ գոյացութեան. և կցեալ ի տանանի. որ ի մեծագունին և ի փոքրագունին. ոչ մտանելով յեզրակացութիւն. մեծ ծայրն է գոյացութիւն. փոքր ծայրն է մարդ. և այս ծայրքս զեզրակացութիւն լինեն. մեծն՝ գոլով ստորոգելեալ. և փոքրն՝ ենթակայ.

Լինելոյն հաւաքաբանութեան՝ է ձեւ, և եղանակ նր. Ձեւ հաւաքաբանութեան է շարակարգութիւն միջնորդ եզրին ըստ ենթակայման և ստորոգման. և այսպէս է ձեւդ. որպէս և է շարակարգութիւն. ուստի լինի թէ եռեակ է.

Առաջին ձեւն է ներքոյ միջնորդ եզրն ենթակայի ի մեծագոյն առաջարկութեան. և ստորոգի ի փոքրագունին. որպէս. ամենայն բոյս է մարմին. ծառ է բոյս. ապա ուրեմն ծառ է մարմին.

Երկրորդ ձեւն՝ է ներքոյ միջնորդ եզրն երկոքեան առաջարկութեանց ստորոգի. որպէս. ամենայն կենդանի է զգայաւոր. ոմն բոյս ոչ է զգայաւոր. ապա ուրեմն ոմն բոյս ոչ է կենդանի.

Երրորդ ձեւն է՝ ներքոյ միջնորդ եզրն ներքոյսեան առաջարկութեան ենթակայն։ որպէս․ ամ մարդ է՛ բանական․ ոմն մարդ է՛ զգայական․ ապա ուրեմն ոմն զգայական է՛ բանական։ զոր ամ պարունակեն տողքս այսոքիկ։

Ենթայ, ստորոգ, ՚ի յառաջքն։

Կրկին ստորոգ ՚ի յերկրորդն։

Կրկին ենթայ ՚ի յերրորդն։

Այս․ միջնորդ եզրն ենթակայն ՚ի մեծագունսն․ և ստորոգն ՚ի փոքրագունսն առաջքն ձեւոցն․ և կրկնակի ստորոգն ներկրորդենն։ Իսկ՝ ներրորդենն կրկնակի ենթակայն։

Եղանակն համաձայնութեան՝ է՛ շարադասութիւն նախադասութեանցն ըստ քանակութե և որակութե։ Այս․ ըստ ընդհանրին կամ մասնաւորին․ և ըստ ստորասութե կամ բացասութե։ բայց այս շարադրութիւն յոքնակի կարէ լինել․ զի ստոյգ տասն և ինն եղանակք համաձայնութեան հնարեցան յիմաստասիրացն․ որոց անուանքն պարունակին ՚ի չորս տողս հետևեալս։

Պատկառանք. Կեռիցող. Ձեռնարկել. Հանդիցի։
Ձեղամես. Պաժակեալ. Կապետոփող. Կրխեռսօք. Հարկեցեա։
Ձեռանեղ. Պարօտօք. Կեռջենող. Զափեսցես։ Հալապի.
Կերապօռ. Հեսափես. Պրօտապօղ. Կեցեսօք. Հարցեսի։

Ի սոց՝ յեղանակացս յայտոցէի ինն առաջագոյնք պատկանին առաջին ձևումն, յորոց չորքն նախկին տողին՝ եզրակացուցանեն ուղղակի․ և հինգն երկրորդ տողին եզրակացուցանեն անուղղակի։ Իսկ՝ անուղղակի եզրակացուցանելն է, յորժամ յեզրակացութեան՝ մեծ ծայրն ենթակայի․ և փոքրն ստորոգի։ և եզրակացուցանելն ուղղակի՝ է յորժամ անդրադարձապես լինի․ որ ՚ի վերոյ ասացաք։ Ի սա երկրորդ ձեւն պատկանին այլ

չորք հետևեալ եղանակքն : Իսկ՝ յետին վեց մնացեալքն՝ առ
ներքոյն ։

Եւ գիտելի է զի հաւաքմանցն որ յեղանակացս զերիս վանգս ունին ։ Առաջին վանգ նշանակէ զմեծագոյն առաջարկութիւն հաւաքմանութեան ։ Երկրորդն՝ զփոքրագոյն ։ Երրորդն՝ զեզրակացութիւն ։ Եւ հաւաքմանցն վանգն ունին զձայնս ՚ի գլուխ ցուցանելի ։ ա. է ի. օ ։ յորժամ ուրեք ուր գտանի այբն, անդ պարտի գոլ նախադասութիւն ընդհանուր ստորասականն ։ Եւ ուր գտանի էչն . ընդհանուր բացասականն ։ Եւ ուր ինի , մասնաւոր ստորասականն ։ Եւ ուր օն , մասնաւոր բացասականն ։ Այլ օրինակօք յայտ լինին ասացեալքն ։

Եղանակք առաջին ձևոյն , ուղղակի եզրակա-
ցուցանօղք ։

Modi primæ figuræ , directè concludentes .

Պառ . Ամենայն բանաւոր է կենդանի .
Բա . Ամենայն մարդ է բանաւոր .
Րանք ։ Ապա ուրեմն ամ մարդ է կենդանի ։

Քե . Ոչ ոք կենդանի է մեռեալ .
Րի . Ոմն մարմին է կենդանի .
Ծօղ ։ Ապա ուրեմն ոմն մարմին ոչ է մեռեալ ։

Չեռ . Ոչ ոք մարդ է անասուն .
Նար . Ամենայն ծիծաղական է մարդ .
Ձէլ ։ Ապա ուրեմն ոչ ոք ծիծաղական է անասուն ։

Դա . Ամենայն մարմին է գոյացութիւն .

Րի .

Ռի. Ոմն կենդանի է մարմին.
Յի. Ապա ուրեմն ոմն կենդանի է գոյացութիւն.

Եղանակք առաջին ձեւոյն, անուղղակի եզրակացուցանօղք.

Modi primæ figuræ, indirectè concludentes.

Շե. Ոչոք յոռութիւն է բարի.
Լա. Ամենայն համբերատարութիւն է յոռութիւն.
Մեն. Ապա ուրեմն ոչոք բարի է համբերատարութիւն.

Պա. Ամենայն մարմին է երեւելի.
Ռա. Ամենայն քար է մարմին.
Լիպ. Ապա ուրեմն ոմն երեւելի է քար.

Ֆա. Ամենայն շնչաւոր է զգայուն.
Պես. Ոչոք տունկ է շնչաւոր.
փօղ. Ապա ուրեմն ոմն զգայուն ոչ է տունկ.

Ֆրի. Ոմն կենդանի է առիւծ.
Սէ. Ոչոք անըզգայ է կենդանի.
Սօք. Ապա ուրեմն ոմն առիւծ ոչ է անըզգայ.

Հար. Ամենայն ձի է խրխնջական.
Ֆի. Ոմն զգայուն է ձի.
Ցիս. Ապա ուրեմն ոմն խրխնջական է զգայուն.

Եղանակք երկրորդ ձեւոյն ։
Modi secundæ figuræ.

Շե. Ոչ որ մարդ է անմարմին.
Սա. Ամենայն հրեշտակ է անմարմին.
Նեղ։ Ապա ուրեմն ոչ որ հրեշտակ է մարդ ։

Պա. Ամենայն շուն է հաչողական.
Րօ. Ոմն կենդանի ոչ է հաչողական.
Սօք։ Ապա ուրեմն ոմն կենդանի ոչ է շուն ։

Կես. Ոչ որ առաքինութիւն է առնելի.
Տի. Ոմն չարիք է առնելի.
Նօղ։ Ապա ուրեմն ոմն չարիք ոչ է առաքինութի ։

Շա. Ամենայն ապականելի է նիւթաւոր.
փես. Ոչ որ հրեշտակ է նիւթաւոր.
Ցես. Ապա ուրեմն ոչ որ հրեշտակ է ապականելի ։

Եղանակք երրորդ ձեւոյն ։
Modi Tertiæ figuræ.

Դա. Ամենայն սպիտակութիւն է գոյն.
Րա. Ամենայն սպիտակութի է պատահումն.
Պի. Ապա ուրեմն ոմն պատահումն է գոյն ։

Կէ. Ոչ որ մարմին է անբաժանելի.
Րա. Ամենայն մարմին է գոյացութի.
Պօռ. Ապա ուրեմն ոմն գոյացութի ոչ է անբաժանելի ։

Դի.

Դէ. Ոմն եթովպացի է սեաւ.
Սա. Ամենայն եթովպացի է մարդ.
փին. Ապա ուրեմն ոմն մարդ է սեաւ:

Գրօ. Ոմն գոյացութիւն ոչ է մարմին.
Սղա. Ամենայն գոյացութիւն է էակ.
Րօղ: Ապա ուրեմն ոմն էակ ոչ է մարմին:

Ֆէ. Ոչինչ բանականն է հոգևոր.
Ցի. Ոմն բանականութիւն է շօշափելի.
Սօբ: Ապա ուրեմն ոմն շօշափելի ոչ է հոգևոր:

Դար. Ամենայն ծառ է բոյս.
Ցի. Ոմն ծառ է պտղաբեր:
Սի. Ապա ուրեմն ոմն պտղաբեր է բոյս:

Յաղագս կանոնաց, զոր պարտիմք պահել յամ
յեղանակս երից ձևոյն:
Յօդուած. Գ:
De Regulis quas seruare debemus in omnibus trium figurarum modis.
Articulus Tertius.

Առաջին հասարակ կանոն: 'ի սոսկ բացասականացն ոչ ինչ հետևի զօրութեամբ կերպին: զի որոյ պէտոյ է՝ մին յառաջարկութեանցն աստորասական լինել: ուստի այս հաւաքաբանութիւն է: ոչինչ բանական է խոնջական, ոչինչ ձի է բանական. ապա ուրեմն ոչինչ ձի է խոնջական: Չհաւաքի. զօրութեամբ կերպին. բայց զօրութեամբ նիւթոյ կարէ երևել իբ ինչ

Ճկ հետ

հետեւիլ 'ի սոսկ բացասականացն = որպէս . ո՛չոք ձի է՛ բանական . ոչոք քար է՛ ձի . ապա ուրեմն ո՛չոք քար է՛ բանական = Եզրակացութիւն հետեւի միայն զօրութեամբ նիւթոյ . վասն այսորիկ այսպիսի ձեւաւորութիւնք ո՛չ գոն բարի հաւաքաբանութիւնք . զի ո՛չ ունին զբարի կերպն =

Երկրորդ հասարակ կանոն = 'ի սոսկ մասնաւորացն ոչինչ հետեւի զօրութեամբ կերպին = որպէս . ոմն կենդանի է՛ շուն . ոմն մարդ է՛ կենդանի . ապա ուրեմն ոմն մարդ է՛ շուն = Վասն այսորիկ ոմն յառաջարկութեանց պարտի գոլ ընդհանրական = Եւ աստ գիտելի է՛ . թէ եզերքն եղականք . եւ անորոշականք՝ գոն փոխանակ մասնաւորին =

Երրորդ հասարակ կանոն = Եթէ ոմն յառաջարկութեանց է՛ մասնաւոր = պարտ է՛ եւ եզրակացութիւն գոլ մասնաւոր : եւ եթէ ոմն յառաջարկութեանց է՛ բացասական . պիտոյ է՛ եւ եզրակացութիւն գոլ բացասական = սորա-սոս ասեն Ամբրամաբանականքն . թէ եզրակացութիւն զհետ երթայ տկարագոյն մասին = վասն այսորիկ յոռի է՛ այս = ա̃մ ծնծաղական է՛ մարդ . ոմն կենդանի է՛ ծնծաղական . ապա ուրեմն ա̃մ կենդանի է՛ մարդ = քանզի պարտ էր ասել . ապա ուրեմն ոմն կենդանի է՛ մարդ = եւ այս . ո՛չոք մարդ է՛ ձի . ա̃մ բանական է՛ մարդ . ապա ուրեմն ա̃մ բանական է՛ ձի = վասն զի պարտ էր ասել . ապա ուրեմն ո՛չոք բանական է՛ ձի =

Չորրորդ հասարակ կանոն = միշտ պիտոյ է՛ . զի 'ի միում յառաջարկութեանց միջնորդ եզրն լրութեամբ եւ կատարելապէս հաղորդեսցի ա̃մ վայրապարունակին իւրոյ = արդ՝ յայնժամ կատարեալ լինի հաղորդութիւն . յորժամ միջնորդն ենթադրի հասարակապէս = որպէս . առնանի փոխանակ ամենեցուն զոր պարունակէ ընդ ինքեամբ = իբրեւ գաղափարաւ . կենդանի լրութեամբ հաղորդի . յորժամ առեալ լինի վասն իւրաքանչիւր կենդա-

նուոյ տեսականօրապէս և անհատաբար ։ իսկ անկատարէ-
լապէս հաղորդի․ յորժամ առնալ լինի վս ուրուք կենդանւոյ,
ոչ վս այլոցն ։ սակս այսորիկ կարօտանայ այս հաւասարաբանու-
թիւս ։ ամ կենդանի ստեղծեալ ի սկզբանէ ստեղծուածոյն ․
ամ մարդ է կենդանի․ ապա ուրեմն ամ մարդ ստեղծեալ ի
սկզբանէ ստեղծուածոյն ։ նորաղանաւ հաւասարաբանութիւս ․
վս զի ի մեծագունին՝ կենդանի ոչ հաղորդի լրութբ ։ քանզի
ենթադրի տեսականօրապէս միայն ․ այլ ոչ եւս անհատաբար ։
այս ինքն , առնանի վս ամ իւր տեսակացն ․ այլ ոչ եւս յաղագս
ամ իւր անհատիցն ։

Հինգերորդ հասարակ կանոն ․ յեղանակութեամբն ենթա-
կայն և ստորոգելոյն յն ․ մեծ և փոքր ծայրն՝ ոչ պարտին հա-
սարակապէս ենթադրիլ ․ կամ ընդհանրապէս հաղորդիլ ․ եթէ
ոչ ընդհանրապէս հաղորդեցան նախադասութիւնն ։ վս որոյ
կարօտանայ այս ։ ամ կենդանի է զգայական ․ ամ կենդանի է
գոյացութի ․ ապա ուրեմն ամ գոյացութի է զգայական ։ վս
զի գոյացութիւն յեղանակութեամբն հասարակապէս ենթադրի ․
յն ․ հաղորդի լրութբ ամ գոյացութեամբն ։ իսկ ի փոքրագու-
նին ոչ հասարակապէս ենթադրի ․ այլ անկատարելապէս և
առանձնաբար ։ յն ․ ենթադրի միայն փոխանակ գոյացութեան
որ ի կենդանին գտանի ։

Վեցերորդ հասարակ կանոն ։ ոչ պարտի մեծ ծայրն կամ
միջինն՝ մնալ ի փոքրագոյն առաջարկութիւն ։ վս այսորիկ
նորաղանաւ հաւասարաբանութիւս ի Պառակարանս ։ ամ երկր
որդն անմիջապէս հետևի ի առաջնումն ․ ամ երրորդն անմիջա-
պէս հետևի ի երկրորդումն , ապա ուրեմն ամ երրորդն անմի-
ջապէս հետևի ի առաջնումն ։ վս զի անմիջապէսն որ էր մասն
մեծ ծայրին՝ ի փոքրագոյն մնանէ ։

Եւթներորդ հասարակ կանոն ։ միջնորդ եզր , կամ միջինն

եզր ոչ

ոչ պարտի մտանել յեզրակացութիւն։ Վասն այսորիկ յոռի է հաւաքաբանութիւս 'ի Չեսամեստրոյ. ոչ ոք ձի է տարբեր 'ի խրխնջականէն. Ամ մարդ է տարբեր 'ի խրխնջականէն. ապա ուրեմն ոչ ոք մարդ է տարբեր 'ի ձիոյն։ Վասն զի տարբերն, որ էր մասն միջնորդ եզերն՝ մտանէ յեզրակացութիւնն։ Արդ՝ կան և առանձնական կանոնք յաղագս իւրաքանչիւր ձևոյն։

Առաջին առանձնական կանոն յաղագս եղանակացն առաջին ձևոյն, ուղղակի եզրակացուցանողաց։ Եթէ փոքրագունին բացասական. հաւաքաբանութիւնն է սուտ։ Որպ. Ամ կենդանի է գոյացութիւն. ոչ ոք քար է կենդանի. ապա ուրեմն ոչ ոք քար է գոյացութիւն։

Երկրորդ առանձնական կանոն։ Եթէ մեծագունին մասնաւոր. հաւաքաբանութիւնն է սուտ։ Որպ. քար. ոմն կենդանի է մարդ. Ամ ձի է կենդանի. ապա ուրեմն ոմն ձի է մարդ։

Առաջին առանձնական կանոն յաղագս երկրորդ ձևոյն։ մեծագունին եթէ մասնաւոր. հաւաքաբանութիւնն է սուտ։ Որպէս. ոմն կենդանի է մարդ. ոչ ոք ձի է մարդ. ապա ուրեմն ոմն ձի ոչ է կենդանի։

Երկրորդ առանձնական կանոն։ Եթէ իւրաքանչիւր առաջարկութիւն ստորասական. հաւաքաբանութիւն է սուտ։ Որպ. Ամ էշ ունի ականջս. Ամ մարդ ունի ականջս. ապա ուրեմն ամ մարդ է էշ։

Առաջին առանձնական կանոն յաղագս երրորդ ձևոյն։ փոքրագունին եթէ բացասական. հաւաքաբանութիւն է սուտ։ Որպէս. Ամ հրեշտակ է գոյացութիւն։ ոմն հրեշտակ ոչ է մարդ. ապա ուրեմն ոմն մարդ ոչ է գոյացութիւն։

Երկրորդ առանձնական կանոն։ Եթէ եզրակացութիւն ընդհանրական. հաւաքաբանութիւն է սուտ. Որպ. ամ սպիտակութիւն է արտադատող աչաց. Ամ սպիտակութիւն է

պատահումն . այլ ուրեմն ամ պատահումն է արտադատող աչաց =

Յաղագս Աղորածութեան անկատար հաւաքաբանութեանց առ կատարեալսն :

Պրակք . Դ :

De Reductione Syllogismorum imperfectorum ad perfectos.

Articulus Quartus.

Նաև գիտելի է . զի կատարեալ հաւաքաբանութիւնքն են նոքա յորս գտանին երկու սկզբունքն, անուանեալք ի Արիստամաբանականայն . ասացեալ զամէ - և ասացեալ զոչ ընչէ = և այսպիսի սկզբունքն գան հիմն բոլոր ճշմարտութեանց ձեռնարկութեանցն =

Ասացեալ զամենայնէն գոյ . յորժամ ի նախադասութեան մի ինչ այսպէս ստորոգի զմիոյն . զի ստորոգեսցի նաև զնորաքանչիւրոյ զորմէ ստորոգի միւսն = զոր օրինակ . ի նախադասութեան . մարդ է կենդանի . այժմ կենդանին ստորոգի զմարդոյն . և զամենայնէ զորմէ մարդն ստորոգի - զյո . զպետրոսէ - զպօղոսէ . զանդրէաս . և զամ անհատիցն մարդոյ =

Ասացեալ զոչընչէն գոյ . յորժամ մինն այսպէս բացասի զմիոյն . զի բացասասցի նաև զամենայնէ զորմէ ստորոգի միւսն : որպէս կենդանին ոչ է քար . այժմ քար բացասի զկենդանւոյն , այլ նաև զմարդոյ . զձիոյ . զառիւծէ . և զորինչ այլ տեսակէ , զորմէ ստորոգի կենդանին .

Ասոր՝ երկոքեան սկզբունքս յայտնապէս գտանին միայն ի չորս նախնիքն եղանակսն առաջին ձևոյն . որք ուղղակի եզրակացուցանեն ... ի մասնականսն , և ի հանդիպեցն գոյ ասաս-

ցեալ զամենայնին ։ Իսկ՝ ՚ի շէնաւորին, և ՚ի կեռնեցօղն՝ Հաստեալ զուգընթացն ։ Աստուածային նե ունի. զի չորք եղանակքն այսոքիկ են միայն կատարեալք. և մնացեալքն՝ անկատարք. որք զի կատարեսցին. և խառնեանց ճշմարտութիւն յայտնապէս եր ևեալ ։ պարտ է տարածիլ առ կատարեալսն ։ Իսկ եղանակքն որք պէտն սկսանին, տարածին առ պատկառանքն ։ որք կենին՝ առ կեռնեցօղն ։ որք չային՝ առ շէնաւորին։ և որք հային՝ առ համգեցին ։ բանզի ՚ի չորից տառից յայտմանէ ամ եղանակքն զանկեալքն առնուն ։

Երկրորդ գիտելի է ։ զի զտարածութիւն զայս երբեք գործեսք ախտոյանսամբ առնել ։ որ . անդրադարձութբ . փոխադրութբ ։ և յարաբերութբ յանկարելին ։ Անդրադարձութն է . որ ՚ի վերոյ ասացաք . փոփոխումն ենթակային ՚ի ստորոգելեալն . և ստորոգելոյն ՚ի յենթակային ։ և է կրկին . մինն պարզ . յորում պահի նոյն քանակութիւն . և նոյն որակութի նախադասութն ։ և միւսն՝ ըստ պատահմանն . յորում փոփոխի միայն քանակութիւն ։ որ յայտնի եղև ՚ի նախասացեալսն ։ Փոխադրութի է փոխարկումն ինչ առաջարկութեցն . մինչ զի մեծադրյն եղիցի փոքրադրյն . և ընդ դէմ սորին . որ . փոքրադրյն՝ մեծադրյն ։ Յարաբերութի յանկարելին՝ է փոփոխումն երկուց ճշմարիտ նախադասութեց ՚ի հակասականսն իւր սուտ . և փոխադրութի ՚ի միմեանց ։ այսպէս անհնարնեալ. զի յերկուց հակասականացն եթէ մինն է ճշմարիտ՝ ՚ի հարկէ միւսն է սուտ . որ որոյ և անկարելի ։

Այլ՝ յարաբերութիւն յանկարելին համարեցաւ . որ զի եթէ ոմն մարդ յիմարութբ ուրանայցէ սեզբանկացութի միոյ ճշմարիտ համաբանութբ, ընդունելով զառաջարկութիւնս ։ երբեմն գաղափարաւ . յորժամ գոյ ձեռնարկիցես ՚ի պարտոք ըստ այսմ օրինակի ։ ամ չնչաւոր է զգայական . ոմն ծառ ոչ է

զգայ—

զգայական. այլ ուրեմն ոմն ծառ ոչ է շնչաւոր: Եւ քոյ հա-
կառակն ընդունելով զմեծագոյնն, և զփոքրագոյնն. ուրա-
նայցէ զհետևութիւն: ասելով թէ առաջարկութիւնքն են ճշմա-
րիտ. բայց եզրակացութիւն որ էր. ոմն ծառ ոչ է շնչա-
որ. է սուտ: յայնժամ յառաջբերէ ըստ յանկարելին յաղթօղ
եղիցիս. առնլով զհակառականն փոքրագունին և եզրա-
կացութեան. և փոխադրելով զնոսա ՚ի միմեանս. մինչև եզ-
րակացութիւն լինի փոքրագոյն, և փոքրագոյնն՝ եզրակացու-
թիւ: և այսպէս տարածելով զհակառակացեալ հաւաքաբանու-
թիւն առ պատկերանքն՝ ասէ. ըստ քեզ՝ ամ շնչաւոր է զգա-
յական, այլ և ըստ քեզ՝ ոմն ծառ է շնչաւոր. այլ ուրեմն ոմն
ծառ է զգայական: որ եզրակացութիւն՝ է հակառականն փո-
քրագունին. զոր առաջին ընդունէր հակառակն. և այժմ
բռնադատի ընդունիլ և զնորին հակառականն. որ է յայտ-
անտեղի.

Ահա չորս կերպաւքս՝ անկատար հաւաքաբանութիւնն տա-
րածին առ կատարեալսն: բայց՝ զի գիտասցի. յայնժամ պար-
տին նախադասութիւնք անկատար հաւաքաբանութեան ան-
դրադարձիլ պարզապէս: յայնժամ ըստ պատահմանն: յայնժամ
պարագին փոխադրիլ: և կամ յայնժամ յանկարելին յարաբերիլ:
պիտոյ է միաբանել առ չորս տառսն. որք ՚ի յեղանակին անկա-
տար հաւաքաբանութեանց գտանին. Յ. Ս. Պ. Փ. Տ: Ձայ-
նաւոր որ նախադասեալ սէին, ցուցանէ թէ նախադասութիւ
նշանակեալն ձայնաւորաւն այնուհետև՝ անդրադարձելի է պար-
զապէս: Ձայնաւոր որ նախադասեալ պէին, ցուցանէ թէ նա-
խադասութիւն անդրադարձելի ըստ պատահմանն: Ձայնաւոր որ
նախադասեալ փին, նշանակէ զփոխադրութիւն: Եւ նա-
խադասեալն տին՝ նշանակէ զտարածութիւն յանկարելին:
զայս ՚ի միտ ածեն ենթադրեալ տողքս:

Եւ՝ պարզական անդրադարձմամբ ։

Անդրադարձի ըստ պատահմամբ ։

Փիւր վարէ փոխադրութեամբ ։

Երիւն՝ յանկար տարածութեամբ ։

Օրինակօք առաւելագոյն երեւի տարածութեան անկատար հաւաքականութեանց առ կատարեալսն ։ որպ հաւաքականութիւն այս՝ ի չեսանեղ ։ ոչոք քար է կենդանի . ամ մարդ է կենդանի . ապա ուրեմն ոչոք մարդ է քար ։ տարածի առ չեանարկելն , որ եւս չայժմ սկսի . եթէ մեծագոյն անդրադարձի պարզապէս . որպ ցուցանէ ձայնաւորն առաջին վանկին չեանեղեն . նեբուռմ եւս նախադասն սէին ։ այսպէս ասելով . ոչոք կենդանի է քար . ամ մարդ է կենդանի . ապա ուրեմն ոչոք մարդ է քար ։

Եւ այս՝ ի պաժակեայ . ամ կենդանի է գոյացութիւն . ամ մարդ է կենդանի . ապա ուրեմն ոմն գոյացութիւն է մարդ ։ տարածի առ պատկարանքն . որ եւս պէտէ սկսի . եթէ անդրադարձի եղականութեան ըստ պատահմանն . որպ ցուցանէ երրորդ վանկ պաժակեայն նեբուռմ ին նախադասն սէին ասելով . ամ կենդանի է գոյացութիւն . ամ մարդ է կենդանի . ապա ուրեմն ամ մարդ է գոյացութիւն ։

Եւ այս՝ ի կաղենափօզ . ամ շնչաւոր է զգայուն . ոչոք տունկ է շնչաւոր . ապա ուրեմն ոմն զգայուն ոչ է տունկ ։ տարածի առ կեռիզօղն . եթէ մեծագոյն անդրադարձի ըստ պատահմանն . եւ փոքրագոյն պարզապէս . եւ ապա փոխադրեսցի փոքրագոյն ընդ մեծագունին . որպ ցուցանէ ձայնաւորն առաջին վանկին . որ նախադասն սէին ։ եւ ձայնաւորն երկրորդ վանկին , որ նախադասն սէին , եւ փիւրին ։ ասելով . ոչոք շնչաւոր է տունկ . ամ զգայուն է շնչաւոր . ապա ուրեմն ոմն զգայուն ոչ է տունկ ։

Եւ

Եւ այս ՚ի պրոտասոց . ոմն գոյացութի՛ն ոչ է՛ մարմին . ամ գոյացութի՛ն է՛ եակ . ապա ուրեմն ոմն եակ ոչ է՛ մարմին ։ Եթէ հակառակն ընդունիցի զառաջարկութի՛նն . և ապա ուրանասցէ զեզրակացութի՛նն ։ յայնժամ պարտ է՛ մեզ տարածել զհամաձայնութի՛նն առ պատկերանցն յարաբերութե՛ն յամ կարելեն . առնլով զհակասականն եզրակացութեն , զոր հակառակն ուրացաւ . և զհակասականն մեծագունին , զոր ընդունեաց . և ապա զհակասականս զայսոսիկ ՚ի միմեանց փոխադրել . մինչ զի եզրակացութի՛նն եղիցի մեծագոյն . և մեծագոյնն՝ եզրակացութի՛ն . ոպ՛ նշանակէ առաջին վանդ պրոտասեօցն ։ առնելով . ըստ ըեղ՝ ամ եակ է՛ մարմին . այլ և ըստ ըեղ՝ ամ գոյացութի՛ն է՛ եակ ։ ապա ուրեմն ամ գոյացութի՛ն է՛ մարմին ։ որ եզրակացութի՛ն է՛ հակասականն փոքրագունին . զոր առաջն ընդունեալ էր հակառակն . և այժմ հարկաւորապէս պարտ է՛ նմա կամ ընդունել զոր առաջն ուրացաւ . կամ տալ զերկուս հակասականս . այ՛ . ամ գոյացութի՛ն է՛ մարմին . և ոմն գոյացութի՛ն ոչ է՛ մարմին ։ որ է՛ յոյժ անտեղի ։

Յաղագս համաբանութեանց անջատման ։

Պրակք. Ե ։

De Syllogismorum diuisione .

Articulus Quintus .

Համաբանութեանցն՝ ինն գոն տեսակք . այ՛ . Ներգոյացականն . Առամաբանականն . Լծաբերականն . Յայտնականն . Եզրանակականն . Անորոշականն . Յարաբերականն յանկարելին . Համաբանութի ՚ի հոլովականաց . Համաբանութի յուղղականաց ։

Ներգոյացականն համաբանութի՛նն . որ և արգասացուցա-

ծէր. թի

թէ ասի, կամ ապացոյց. զորմէ ընձեռէ ստորոգել 'ի նախկին գիրքն. է որ ունի զառաջարկութիւնս ճշմարիտս և յայտս։ և է կրկնակ. մինն՝ որ կոչի վն ոչ. և միւսն՝ վն զի։ Ապացուցութիւն վն ոչ՝ է որ յայտնապէս ցուցանէ զընդդիմակացութիւն պատճառօք նր։ որպէս. ամ զարմանալի որն է ծիծաղական. ամ մարդ է զարմանալի որ։ ապա ուրեմն ամ մարդ է ծիծաղական։ յայսմ տեղւոջս հաւանեցուցանելոյ զծիծաղականն պատճառաւն իւրով. յր. զարմանալւորութեամբ, որ է պատճառ ծաղրոյն։ Ապացուցութիւն վն զին՝ է որ յայտնապէս ցուցանէ զընդդիմակացութիւն գործովք նր։ որպէս. ամ ծիծաղականն է զարմանալի որ. ամ մարդ է ծիծաղական. ապա ուրեմն ամ մարդ է զարմանալի որ։ աստ հաւանեցուցանի զարմանալւորն գործովն իւրով. յր. ծիծաղականաւն։

Տրամաբանական հաւաքաբանութիւն, որ և կարծեական ասի. զորմէ պատմէ ստորոգել 'ի գիրքն Թօբիկոց. յր. տեղականաց. է որ եզրակացուցանէ 'ի կարծեական առաջարկութեանց, և որք ոչ են յայտնապէս ճշմարիտք. այլ ըստ կարծեաց։

Խաբէականն է որ թուի ունել յառաջարկութեանցն ճշմարիտ մակաբերութիւն եզրակացութեան. բայց ոչ ունի։ զոր օրինակ. սպիտակն է պատահումն. ձիւն է սպիտակ. ապա ուրեմն ձիւն է պատահումն։ կամ այս. մարդ է տեսակ. պետրոս է մարդ. ապա ուրեմն պետրոս է տեսակ։ որ է սուտ։ վն զի պետրոսն՝ անհատ է. այլ ոչ տեսակ։ և ձիւնն՝ գոյացութիւն ոչ պատահումն։ այսք են խաբէութիւնք. զի միջնորդ եզրն ոչ նոյնպէս ընթադրի 'ի մեծագոյնին ոպ 'ի փոքրագոյնին. այլ այլազգաբար. քանզի սպիտակն 'ի մեծագոյնին՝ առեալ է իբր թէ վերացեալ եզր. յր. փոխանակ սպիտակութեան. և 'ի փոքրագոյնին՝ իբր թէ թանձրացեալ. յր. փոխանակ սպիտակի ընթա_

կային ։ և մարդն 'ի մեծագունեն առնանի ընդհանրապէս փո-խանակ մարդկային տեսակին. իսկ 'ի փոքրագունեն մա-նաւորաբար, փոխանակ պետրոսի ։ այսպիսի խաբէութիւնք՝ յոլովք են. զորս ամ յառաջբերել Հռետորականէ 'ի գիրքն էլենկոցն տես անդ ։

Ծայրանականն՝ է՛ ներումն յայտնայ երեւի մակաբերութի եզրակացութեան ։ և այս յայնժամ պատահի. երբ միջնորդ եզր նախադասութեանն. մեծ. ծայր. և փոքրն՝ գոն տարորոշ և եզրա-կան եզերք ։ որպէս պետրոս ընթանայ. այս մարդս է պետրոս. ապա ուրեմն այս մարդս ընթանայ ։ և պատճառն է՛ վասն զի 'ի յեզրական եզերն առաւելապէս երեւի այն հասարակ սկիզբն ամենաբանականացն. որ թէ որք միանգամ հաւասարեն ընդ միում ումեք. հաւասարեն եւս ընդ միմեանս ։

Եզրանականականն՝ է՛ որ բաղկանայ յառաջարկութեանց եզրա-նականաց ։ Հմ. բար. հարկաւոր է՛, ամ կենդանի գոլ զգայա-կան. կարելի է՛, ոմն բոյս գոլ կենդանի. ապա ուրեմն կարելի է՛, ոմն բոյս գոլ զգայական ։

Ստորադրականն՝ է՛ որ շարադրի յառաջարկութեանց ստո-րադրականաց ։ որպէս. եթէ օր գոյ, գոյ արեգակն. իսկ եթէ գոյ գիշեր, ոչ գոյ օր. ապա ուրեմն եթէ գոյ գիշեր, ոչ գոյ արեգակն ։ Արդ՝ բանիւ գ գոն տեսակքն ստորադրականն նա-խադասութեան. որ 'ի վերոյ ասացեալ է՛ յերկրորդ մասին. սակս այսորիկ և եռեակ է՛ ստորադրական համաբանութիւն ։ որ. թէականն. շաղկապականն. և զատականն ։ տես անդ ։

Համաբանութիւն 'ի հոլովականացն. է որ շարամանի 'ի հոլովական եզերաց. այլ ոչ 'ի ուղղականացն ։ որպէս. յորումնէք գոյ միտք, նոյնոյ և կամք. իսկ 'ի մարդն գոյ միտք. ապա ուրեմն 'ի մարդն գոյ և կամք ։

Համաբանութիւն յուղղականացն՝ է՛ որ զուղղական եզերս

ընդունելի ։ որպէս . կենդանի բանականն է՛ հանճարոյ ընդունակ . մարդ է՛ կենդանի բանական ։ ապա ուրեմն մարդ է՛ հանճարոյ ընդունակ ։

Ցարաբերականն յանկարելին՝ է՛ ներում ՚ի հակասութէ ուրացեալ հետեւութէն, և ՚ի միջէ հանեալ յառաջարկութէ՝ եզրակացուցանելզ զհակասութի միոյ հաւանեալ առաջարկութէն ։ որպ՚ի վերոյ ցուցաք ։

*

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՎԻՃԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ.

Որք յետ Տրամաբանութեան անդիպին.

DISPVTATIONES PHILOSOPHICAE

Post Logicam Institutionem occurrentes.

Առաջին Վիճաբանութիւն.

Յաղագս Էակի Մտածութեան.

Առաջին Խնդիր.

Թէ զինչ իցէ էակ մտածութեան.

De Ente Rationis.

DISPVTATIO PRIMA.

Quid sit ens rationis?

Quæstio Prima.

Նախ գիտելի է՛, զի էակ մտածութեան եռապատիկ իմանի։ Նախ՝ վասն իրի ուրուք կարելոյ և ՚ի մտաց ածելոյ։ Եւ ըստ բանուիս այսմիկ՝ քար իմացեալ ՚ի մտաց, ասի էակ մտածութեան։ Երկրորդ՝ վասն ներգործութեան մտաց որ իմացուածս ասի, և ներտրամադրեալ բան մտաց. և կոչի էակ մտածութեան, զի յենու ՚ի միտս, և է՛ գործ նորին։ Երրորդ և մանաւանդ՝ վասն իրին այնր, որ ըստ ենթակայացեալ իւր՝ ոչինչ է՛, և ոչ էակ. բայց երեւի ՚ի միտս իբրև զէակ, և իբրև զիր ինչ դրական։ Եւ ըստ այսմ բանի՝ չինեմք զէակ մտածութեան, յորժամ զխաւարն, որ է՛ պակասութիւն լուսոյ և ոչինչ, մտօք ըմբռնեմք իբրև

զսեռութիւն ինչ դրականացուցանելով սեռութեանդ՝ կարծեալ գոլ զխառնածն այն, ասի տրամաբար և խոկագոյն էակ մտածութե. զի է՛ սոսկ մտածութի, և ոչինչ ըստ ենթակայացեալ իրի. թէպէտ էակ ինչ միայն ըստ մակամտածութե։ սակս որոյ առ ՚ի չինել զգոյացուցանելն էակ մտածութե, պարտ է՛ հարկաւորապէս զմիտս խաբել և սուել, համարելով իբրև զէակ ինչ և կարելի՛ զայն որ է՛ ոչինչ և անկարելի։ Արդ՝ յաղագս երրորդ մտածութե էակիս այսորիկ՝ լինի վիճաբանութիւն առաջիկայս։ Եւ խնդրի թէ զինչ իցէ։

Առաջին եզրակացութի։ Էակ մտածութեն ոչ է՛ արտաքին յարաբերութի. որպէս կարծեն ոմանք։ Արդ՝ վ̄ մեկնութե եզրակացութեանս այսորիկ՝ գիտելի է՛. զի յարաբերութիւն է՛ երկեակ. միոյն ներքին. միւսն արտաքին։ Ներքին յարաբերութիւն է՛ այն որ բղխէ ՚ի վերայ ենթակային ուրուք ՚ի ներքուստ. օ̄ր. ՚ի տեսակէ ուժմանէ, որով այն ենթակայն ներքսապէս տրամակայի։ զոր օրինակ. որպէս ներքսապէս յարանուանի սպիտակ՝ ՚ի սպիտակութենէ որ յենու ՚ի վերայ նորին։ կամ աչքն ներքսապէս յարանուանի տեսանօղ՝ ՚ի տեսութենէ որ յենու ՚ի վ̄ր աչացն։ և կամ միտքն նմանապէս յարանուանի ճանաչօղ՝ ՚ի ճանաչմանէ որ ներքսապէս յենու ՚ի վ̄ր մտացն։ և սոյնպէս զայլոցն։

Յարանուանութի արտաքինն է՛ այն որ բղխէ ՚ի վ̄ր ենթակային ուրուք ոչ ՚ի ներքուստ, այլ յարտաքուստ. օ̄ր. ՚ի յարտաքին տեսակէ ուժմանէ, յորմէ այսպիսի կամ այնպիսի յարանուանի այն ենթակայն։ զ̄որ նման. որպէս արտաքսապէս յարանուանի տեսեալ՝ ՚ի տեսութենէ որ յարտաքուստ եզրանայ առանց. և ոչ յենու ՚ի յորմն, այլ ՚ի յաչս։ և կամ չար արտաքսապէս յարանուանի ճանաչեցեալ՝ ՚ի յարտաքին ճանաչմանէ, որ առնանի ՚ի վ̄ր մտաց, ոչ ՚ի վ̄ր քարին։ և կամ պետրոս յարա-

նորանն աջակողմն՝ 'ի յարտաքին յաջմէ միւոյ մարմնոյ ։

Երրորդ՝ համանեցուցանեմք զառաջադրեալ եզրակացութիւն ։ քանզի արտաքին յարաբերութիւն թէ ճանաչեցելոյն, թէ տեսելոյն, և այլ. է՛ իրական էակ ։ ապաուրեմն ոչ է՛ էակ մտածութե ։ Հետևութիւն այս՝ յայտ է՛ . զի էակ մտածութեան ոչ է՛ էակ ինչ ըստ ենթակայացեալ իրի . այլ է՛ ոչինչ երևեցեալ 'ի միտս իբրև զէակ . մինչ որոյ է՛ հակադրեալ ընդ էակին իրականի, որ ըստ ենթակայացեալ իրին էակ ինչ է՛ ։ արդուրեմն էակ մտածութեան ոչ կարէ գոլ արտաքին յարաբերութիւն որ է՛ իրական էակ ։ ցուցանի առաջարկութիւն ։ մինչ զի արտաքին յարաբերութիւն ճանաչեցելոյն ոչ զանազանի յարտաքին ճանաչմանէ յորմէ բղխէ. այլ է՛ ստուգապէս նոյն իսկ ճանաչումն միայն՝ եզրացեալ առ յենթակայն որ յարաբերեան ճանաչեցեալ իսկ՝ նա ճանաչումն է՛ իրական էակ . գոլով իրական ներգործութիւն մտաց ։ ապա ուրեմն և իրական էակ պարտ է՛ գոլ արտաքին յարաբերութիւն ճանաչեցելոյն . ապա ոչ է՛ էակ մտածութե ։ և սոյնպէս ասեմ յաղագս նմ արտաքին յարաբերութեց ։

Բայց առարկիցես . թէ յորժամ ումն յարաբերի ճանաչեցեալ, կամ տեսեալ, և այլ. յարաբերութիւնդ ճանաչեցելոյն, կամ տեսելոյն՝ ոչ է՛ իրական ինչ 'ի վերայ ումն ։ ապա ուրեմն է՛ էակ մտածութե ։

Պատասխանեմք . մեկնելով զառաջարկութիւն . թէ յարաբերութիւն ճանաչեցելոյն կամ տեսելոյն՝ ոչ է իրական ինչ ներքին 'ի վերայ ումն . ընդունիմ ։ ոչ է՛ իրական ինչ արտաքին եզրացեալ առ ումն . ուրանամ ։ զի յարակցումն այն ճանաչեցելոյ, կամ տեսելոյ՝ իրական իմն է՛ ՝ ումն ոչ ներքին, այլ արտաքին ։ և ոչ այլ ինչ է՛ եթէ ոչ իրական ճանաչումն միայն, կամ տեսութիւն աչաց՝ յարտաքուստ եզրացեալ առ ումն, որ

առանձ

տուասի ճանաչեցեալ, կամ տեսեալ․ զի ամ յարմարութիւն թէ առ տառս իւր, թէ նորին՝ ոչ երբէք զանազանի 'ի տեսակէ յա_րանձնաւորէն, յորմէ բղխէ իսկ ։

Երկրորդ եզրակացութի․ Էակ մտածութեն ոչ է ոչինչ՝ ճանաչեցեալ իբրև զոչինչ․ որպէս կարծեն այլ ոմանք․ Աղդ՝ վս մեկնութե գիտելի է․ զի բացասութիւնն, և պակասութիւնն որք են ոչինչ, թէպէտ ոչ կարեն ճանաչիլ ուղղապէս 'ի մտաց, որպէս են իսկ․ վս զի ուղիղ առարկեալ ենթակայն մտաց՝ է միայն էակն․ և ոչ կարէ զոլ ոչինչ․ բայց սակայն կարեն ճա_նաչիլ որպէս են իսկ 'ի մտաց անուղղաբար մր․ անուղիղ ճա_նաչմամբ զոր օրինակ․ ճանաչելով ուղղապէս զմարդն, զօրութե մարդոյ ճանաչեցելոյ ճանաչեմք անուղղաբար զոչմարդն մր․ զբացասութի մարդոյ․ կամ ճանաչելով ուղղապէս զլոյսն․ պատկերաւն լուսոյ ճանաչեցելոյ ճանաչեմք անուղղաբար զխաւարն, որ է լուսոյ պակասութի․

Առարկեցես․ թէ ճանաչելութիւն է յատկութի էակին․ իսկ ոչինչն ոչ է էակ․ ապա ուրեմն ոչինչն ոչ է ճանաչելի ։

Պատասխանեմք․ մեկնելով զմեծագոյնն ձեռնարկութեն, թէ ճանաչելութիւն ուղղակին՝ է յատկութի էակին միայն․ ընդունիմ ։ ճանաչելութիւն անուղղակին՝ է յատկութի էա_կին միայն․ ուրանամ ։ քանզի այդպիսի անուղիղ ճանաչելու_թիւն պատշաճի և ոչնչին․ զի ոչինչն թէպէտ ոչ է ճանաչելի ուղղապէս մր․ յատկական պատկերաւ, զոր ոչ ունի․ սակայն ճանաչելի է անուղղապէս մր․ պատկերաւն էակին․ զի ճա_նաչելով զէակն, զօրութե էակին ճանաչեցելոյ իմանամ թէ զինչ է ոչ էակն ։

Աղդ հաւանեցուցանեմք 'ի վերոյ եդեալ եզրակացութիւն, քանզի էակ մտածութեն չինի 'ի մտաց յորժամ ճանաչի իբրև ոչ որպէս է իսկ, այլ այլապէս․ վս որոյ առ էակ մտածութեն

հարկաւ որ է՛ սխալութիւն եւ մտաց խաբէութիւն = իսկ՝ երբ ճա_նաչէ ոչինչն իբրեւ գոյինչ . ճանաչէ նմա որպէս է՛ իսկ, եւ ոչ այ_լապէս = եւ միայն ճանաչող ոչ խաբի, եւ ոչ սխալէ = այսմ ուրեմն ոչինչն ճանաչեցեալ իբրեւ գոյինչ՝ ոչ է՛ էակ մտածութեան =

Առարկիցես . թէ էակ մտածութեանն ոչ ունի զայլ լինելու_թիւն, բայց միայն զլինելն առարկեալ 'ի միտս . իսկ՝ ոչինչն ճա_նաչեցեալ իբրեւ գոյինչ՝ ոչ ունի զայլ լինելն , բայց յառարկմա_նէ 'ի միտս . այսմ ուրեմն է՛ էակ մտածութեան =

Պատասխ . մեկնելով զփոխյարաբերութիւնն . թէ ոչինչն ճանաչեցեալ իբրեւ գոյինչ՝ ունի զառարկութիւն 'ի միտս իբրեւ զէակ · ուրա_նամ = իբրեւ գոյինչ որպէս է՛ իսկ . ընդունիմ = զի սոյն ուրանամ զնմանութիւնս =

Երրորդ եզրակացութիւն = էակ մտածութեանն ոչ այլ ինչ է՛, բայն թէ ոչէակն , եւ անհնարելին՝ իմացեալ իբրեւ զէակ , եւ կա_րելի = զի օրինակ . յորժամ միտքն՝ զկուրութիւն որ է՛ պակա_սութիւն տեսութեան եւ ոչինչ՝ իմանայ իբրեւ զեր ինչ յեղեալ 'ի վե_րայ . չինէ զէակ մտածութեան = կամ թէ յորժամ յերկուց կա_տարեալ եւ առողջ էութեանց եզերութեանն եւ քաղէն՝ իմանայ զմի սպառ եղեալ էութիւն, որ եզերութիւնաւորաց կոչեցի . եւ իբր կատա_րեալ եղջիւր , եւ կատարեալ քաղ 'ի մի սպառ էութեան , եւ ոչ լինե_լոյ = այս եզերութիւնաւորքս այսպէս իմացեալ՝ գոյ էակ մտա_ծութեան . զի գոյ անհնարելի էակ իմացեալ որպէս կարելի =

Բայց աստ՝ ցուցանի եզրակացութիւն . զի էակ մտածու_թեանն է՛ որ ոչ ունի զայլ լինելն . բայց միայն զլինելն առարկմանն 'ի միտս , որումներեւն իբրեւ զէակ = իսկ՝ եզերութիւնաւորքն անհնա_րելի . եւ կուրութիւն որ է՛ ոչինչ՝ իմացեալք իբրեւ զկարելի ինչ , եւ զերակայն էակ . ոչ ունին զայլ լինելն բայց 'ի լինելութեանն առարկմանն 'ի միտս = այսմ ուրեմն են էակ մտածութեան =

Երկրորդ խնդիր.

Եթէ էակ մտածութեան գոյ ըստ ենթակայացեալ իրի.

Թէ միայն ըստ մակամտածութե.

Vtrum detur ens rationis à parte rei; an verò solum per intellectum.

Quæstio Secunda.

Առաջին եզրակացութի. Էակ մտածութէ ոչ կարէ գոլ ըստ ենթակայացեալ իրին. ցուցանի. քանզի էակ մտածութէն ներընդդէմն զերկուս հակասականս. ուրեմն այսպէս ոչ գոյ, և ոչ կարէ գոլ ՚ի կողմանէ իրին. Առաջադրութիւն ցուցանի. զի զի էակ մտածութեն է ոչէակն իմացեալ իբրև զէակ. որպէս. խաւարն իբրև զլուսութի. իսկ էակն և ոչէակն են հակասականք. այսպէս էակ մտածութեն պարունակէ զերկուս հակասականս. Հետևութիւն ևս ցուցանի. զի յերկուց հակասականացն հարկաւ որպէս միոյն է ճշմարիտ, և միւսն սուտ. և ոչ կարեն միանգամայն գոլ երկոքեանն ճշմարիտ ըստ ենթակայացեալ իրին. արդ ուրեմն էակ մտածութեն, որ ընդունի զհակասականսն, ոչինչ է ՚ի կողմանէ իրին. և ոչ ճշմարիտ ինչ.

Առարկիցես. Թէ գործն առաջադրեալ ՚ի յիրական պատճառէ՝ է իրական գործ. իսկ միտքն որ առաջադրէ զէակ մտածութեն՝ է իրական պատճառ նորին. այսպէս ուրեմն այդպիսի գործն իւր՝ պարտ է գոլ ևս իրական, և գոլ ՚ի կողմանէ իրին.

Պատասխանեմք, մեկնելով զմեծադոյնն. Թէ իրական պատճառն առաջադրէ զիրական գործ. եթէ գործն առաջադրի ՚ի նմանէ բնական և իսկական արարողութբ, որպէս հուր առաջադրի ՚ի հրոյ. ընդունիմ. եթէ առաջադրի պակասութբ և միա-

ճիթ բութբ.

րութէ. ուրանամ = զոր՝ էակ մտածութեան ոչ լինի 'ի մտաց խոկական ապարողութէ, այլ պակասական ճանաչմամբ. և ոչ է միայն բնական ներգործութի, այլ մոլորական պակասութի. զի միայն լինի զէակ մտածութեան ստանելով, և ճանաչելով զնոն այսպէս, և ոչ որպէս է իսկ =

Երկրորդ եզրակացութի = Էակ մտածութեան գոյ ըստ մակամածութէ. այ. ըստ ներգործութէ միայն = ցուցանի. վասն զի էակ մտածութեան ոչ է սոսկ ոչինչ. զի սոսկ ոչինչն ոչ ասի էակ մտածութէ = այլ ուրեմն է իմանալիս էակ ինչ: բայց ոչ էակ ինչ իրական և ըստ ենթակայացեալ իւրն, որպէս 'ի վերոյ ցուցաք. սակայն մտածական և ըստ մակամածութէ. այ. 'ի կողմանէ իւրն է ոչինչ և ոչէակ. բայց երևի էակ և իր ինչ 'ի կողմանէ մտաց, որում է առարկեալ երբև զէակ ինչ =

Առարկեսցես. Թէ 'ի մէջ երկուց հակասականաց ոչ կարէ լինել միջնորդ. զի հարկաւոր որպէս մինն է ճշմարիտ, և միւսն սուտ. սակայն 'ի մէջ նոցա ոչ լինի ճշմարիտ միջնորդ = իսկ՛ էակ իրական, և ոչ էակ իրական՝ են հակասականք = սակայն ուրեմն 'ի մէջ նոցա ոչ կարէ գոլ միջնորդ, որ էակ մտածութէ իցէ = զի այդպիսի էակ մտածութէդ ոչ էր իրական էակ, և ոչ էր սոսկ ոչինչ. սակայն արդեօք էր միջնորդ 'ի մէջ նոցա, որ անհնարին է անկարելի՝ ևս ըստ մակամածութէն =

Պատասխանեմք. մեկնելով զմեծագոյն հաւաքաբանութեն այսպէս. Թէ 'ի մէջ երկուց հակասականացն ոչ կարէ գոլ միջնորդ պարզ. ընդունիմ = ոչ կարէ գոլ միջնորդ՝ յերկոցունցն բաղադրեալ. և կրկին մեկնեմ. ոչ կարէ գոլ 'ի կողմանէ իւրն. ընդունիմ = 'ի կողմանէ մտաց. ուրանամ = զի կարող է միտքն բաղադրել զոչէակն ընդ էակին, որպէս զխաւարն ընդ սևութէ. և այսպէս լինել զսի էակ մտածութէ ոչ պարզ, այլ բաղադրեալ յերկուց հակասականացն այնոցիկ:

Ընդդիմաձեալ առարկեցես. թէ ոչ կարէ միայն հաստատել համանգամայն ներքոյ հանգամանաց. այսինքն ոչ կարէ բաղադրել զնոսա ձևացուցանել. և շինել զէակ մտածութեան։ հնարաւորութիւն՝ յայտ է. զուգանին առաջարկութիւն. քանզի յոր ժամ միայն զէակ, թէ խաւարն է՝ ոչինչ և պահանջութիւն լուսոյ. ոչ կարող է հաստատել թէ է՝ սևութիւն. և պատճառն է, զի առարկեալ ներթակայ մասայն է էակ որպէս ձևացեալ. վասն որոյ ոչ կարէ միայն բերել ՚ի սուտն՝ հաստատելով։

Պատասխանեմք. ընդունելով զառաջարկութիւն, և նա զզուգութիւն նորին. բայց ուրանալով զհետևողութիւն. զի յոր ժամ միայն բաղադրէ ձևացուցանէ զերկուս հանգամանս. Ա. զոչէակն ընդ էակին. ոչ հաստատէ ներկայութեան. զի ոչ զիտէ զոչէակն. Բ. զխաւարն զոր ոչինչ, և սոսկ պահանջութիւն լուսոյ. այլ հաստատէ զնա որպէս զէակ Բ. սևութիւն. և այսու բերէ ՚ի սուտն ոչ որպէս սուտ, այլ որպէս ձևացեալ ըստ կարծեաց նորին. և վասն այսորիկ ոչ զխաւարն մարդ, այլ այդէն միայն շինէ զէակ մտածութեան։

Երրորդ Խնդիր.

Թէ յիմացմանէ պատճառաւ շինի էակ մտածութեան։

A quo intellectu possit fieri ens rationis?

Quæstio Tertia.

Առաջին եզրակացութիւն. մարդկային միայն կարէ շինել զէակ մտածութեան զուգանին ըստ ասացելոցն ՚ի վերոյ. քանզի շինել զէակ մտածութեան՝ ոչ այլ ինչ է. բայց թէ ճանաչել զոչէակ իբրև զէակ. իսկ բանաւորն միայն մարդիկ այսպէս ճանաչեն, այսուրեմն շինեն զէակ մտածութեան:

Առարկեցես. թէ միայն ոչ շինէ զիւր առարկեալ ներթա-

կայն. այլ միայն խորհի զնա . իսկ՝ էակ մտածութիւնն է՝ առաւ-կեալ ենթակայ մտաց . այսմ ուրեմն ոչ շինի, այլ միայն խորհի ՚ի մտաց ։

Պատասխանեմք. մեկնելով զմեծագոյն հաւաքաբանութեան. թէ միայն ոչ շինէ զէութ առարկեալ ենթակային, այլ միայն խորհի զնա՝ ՚ի ձեռն տեսական ճանաչմանն . ընդունիմ ։ ՚ի ձեռն գործնական ճանաչմանն . ուրանամ ։ զի գործնական ճանաչումն իմանայ զենթակային ոչ խորհելով որպէս տեսականն, այլ շինելով զնա ՚ի միտս ։ եւ այսպիսի ճանաչմամբ շինէ միայն զէակ մտածութիւն ։

Երկրորդ նկատողութիւն ։ հրեշտակական միտքն թէ բարի թէ չար հրեշտակային՝ շուրջ զբնական ենթակայիւք ոչ կարեն շինել զէակ մտածութիւն ։ բայց շուրջ զգերբնական ենթակայիւքն կարեն շինել զնա ։

Առաջին մասն նկատողութեանս ցուցանի . զի եթէ հրեշտակքն ճանաչեն զամենայն բնական ենթակայսն յայտնապէս եւ հայեցողական ճանաչմամբ , որպէս են իսկ ։ այսմ ուրեմն ոչ կարեն ճանաչել զնոսա այլապէս եւ սպառաբար՝ շինելով շուրջ զնոքօք զէակ մտածութիւն ։

Երկրորդ մասն՝ եւս ցուցանի . զի հրեշտակքն ոչ ունին ՚ի միտս իւրեանն զնկարեալ պատկերսն գերբնական ենթակայիցն . վն զի բնական միտքն իւրեանն ոչ պահանջէ զճանաչումն նոցա , որք են վեր քան զբնական էութիւն ։ այսմ ուրեմն ոչ ճանաչէ զայնպիսի ենթակայսն յայտնապէս եւ հայեցողական ճանաչմամբ . այլ միայն արտաքնապատական ճանաչմամբ եւ անյայտաբար . մ. տրամաբանելով ՚ի վր նոցա , որպէս տրամաբանեմք մեք ՚ի վր իրին զոր ոչ ճանաչեմք յայտնապէս ։ եւ թէպէտ Ած երեւեցուցանէ հրեշտակային զգերբնական ենթակայսն ոմանս . բայց ոչ զամենեսեան ։ այսմ ուրեմն ՚ի ճանաչել

զնա

զայնպիսի նմանութիւն՝ կարէ հրեշտակն խաբել. և շինել զէակ մտածութեն =

Երրորդ եզրակացութի = միտքն ա̄ծայինն ոչ կարէ շինել զէակ մտածութեն = ցուցանի. քանզի ոչ կարէ ա̄ծ ճանաչել զանկարելին իբրև զկարելի. կամ զոչէակն իբրև զէակ = ուրեմն ապա ոչ կարող է շինել զէակ մտածութեն = Առաջարկութին ցուցանի. զի ա̄ծային միտքն զա̄մ ինչ Թէ կարելի, Թէ անկարելի. Թէ էակ, Թէ ոչէակ՝ ճանաչէ յայտնապէս, որպէս են իսկ = ապա ուրեմն ոչ կարէ ճանաչել զնոսա այլապէս, և սուտաբար. և ոչ շինել զէակ մտածութեն = Հետևութիւն ցուցանի. վ̄ս զի եԹէ այսպէս էր. ապա ա̄ծային միտքն կամ հաւանէր միանգամայն երկուց հակառակաց, որ է անկարելի բան. կամ խաբէր, զոր քաւ լիցի ասել =

Առարկիցես. Թէ ա̄ծ ճանաչէ զէակ մտածութեն շինեալ 'ի մէնջ. ապա ուրեմն և ինքն շինէ զնա = Եզրակացութիւս ցուցանի. քանզի էակ մտածութեն է ոչէակն ճանաչեցեալ իբրև զէակ. արդ ուրեմն ա̄ծ ճանաչելով զէակ մտածութեն մեր, ճանաչէ զոչէակն իբրև զէակ. ապա և շինէ զնա =

Պատասխանեմք. մեկնելով զառաջարկութին. Թէ ա̄ծ ճանաչէ զէակ մտածութեն մեր՝ գործնական ճանաչմամբ. այ̄. համարելով էակ զայն որ է ոչէակ. ուրանամ = ճանաչէ տեսական ճանաչմամբ. ընդունիմ = այ̄. հայելով միայն 'ի յէակ մտածութեն մեր և իմանալով զնա որպէս է իսկ = վ̄ս որոյ խորհի զմեր սուտութի, և խաբէութի. բայց ինքն ոչ խաբի, և ոչ սուտէ =

Երկրորդ վիճաբանութիւն.

Յաղագս Ընդհանրին։

Առաջին խնդիր.

Թէ զինչ իցէ Ընդհանուր. եւ որքանաբար իմասցի։

De Vniuerſali.

DISPVTATIO SECVNDA.

Quid, & Quotuplex ſit Vniuerſale?

Quæſtio Prima.

Ընդհանուրն առ հասարակ իմացեալ, է մի ինչ յարաբերեալ առ բազումս. եւ զչորքնապատիկ նշանակութիւն ունի։ Առաջինն ասի ընդհանուր 'ի պատճառել. եւ է պատճառ ինչ որ զբազում զանազան գործս արտադրէ։ որպէս. Աստուած, որ է հասարակաց պատճառ։ կամ Արեգակն՝ յոլովից գործոյն արտադրիչ։

Երկրորդն ասի Ընդհանուր 'ի նշանակել. եւ է մի ձայն որ նշանակէ զբազումս այլատեսակս։ Ինչ զան. շուն, որ նշանակէ զաստղ. զձուկն. զկենդանին հաչողականն. եւ զշնացօղն։

Երրորդն ասի Ընդհանուր 'ի հաղորդել. եւ է մի անհատ բնութիւն, որ հաղորդի բազմաց։ որպէս. Աստուածային բնութիւնն, որ է մի թուով, եւ հաղորդեալ երից անձանցն։

Չորրորդն ասի Ընդհանուր համեմատական. եւ է մի ինչ, որ գոյ 'ի բազումս համեմատաբար՝ ոչ փաղանունաբար. հեկէն. առողջութիւն, որ գտանի համեմատաբար 'ի կենդանւոջ. 'ի դեղս. եւ 'ի զարկն բազկին։

Հինգերորդն ասի Ընդհանուր փաղանունական՝. 'ի լինել

կամ

ծեալ 'ի տարրացն . և այն է՛ խակալէս և ընտանեբար ընդհա_նուր = զոր՛ն յայտուհետև ճառելոց եմք = որպէս . մարդկային բնութիւն, որ է՛ մի՛ անհատական, և գոյ 'ի բազում անհատս մարդ_կոյ . զորոյն՛ և տարրացն փաղանունաբար =

Արդ՝ այսպիսի հնգեքեան ընդհանուրք սահմանին յարի_ստոտելէ 'ի յեւթներորդ գլուխն համաբանականացն այսպէս . Ընդհանուրն է՛ մի ինչ որ բնաւորեցաւ գոլ 'ի բազումս ոչ հա_մանունաբար, այլ փաղանունապէս = Եւ յառաջին գլխոյն պե_րիարմենեաս տայ նոյն փիլիսոփայն . թէ Ընդհանուրն է՛ որ բնաւորեցաւ զյոլովից ստորոգել =

Իսկ՝ ասամ մեկնի 'ի մէնջ առաջադրեալ սահմանն ընդհան_րին = Ասեմ՝ մի ինչ, փոխանակ սեռի = և այս բառիւս՝ համա_սարի ընդհանուրն ընդ եզակիանն, որ եւս մի է՛ = արդ՝ միայն_ ջանան կատարեալպէս մի . յր . փաղանունաբար . այլ ոչ մի հա_մանաաբար, կամ համանունապէս = քանզի որք միանգամ հա_մանաք կամ համանունք . ոչ մի կատարեալպէս . զի ոչ ունին ամենեւին զմի բան գոյացութե, այլ զբազումս = զմի որոյ և միութիւն բազմաց 'ի բազումս, այլ ոչ մի 'ի բազումս, որպէ_ս ասացաւ է՛ գոլ ընդհանուրն փաղանունականն =

Ասեմ՝ որ բնաւորեցաւ գոլ 'ի բազումս և այլ . փոխանակ տարբերութե . զի այսու տարբերի ընդհանուրն յեզակիանէ որ անհատ, և բազմաց ոչ հասարակ =

Ասեմ՝ ոչ համանունաբար, այլ փաղանունապէս . զի հա_մանունականն, և համեմատականն ընդհանուրն, որ ոչ գոյ 'ի բազումս ըստ նոյն բանի՝ չեն յատկապէս ընդհանուրք = Արդ_ ստանձնեալ ասացաք թէ որպիսի ինչ իցէ ընդհանրին միութի. և բնաւորութի գոլոյ 'ի բազումս =

Երկրորդ խնդիր.

Թէ որպիսին պատշաճ է' գոլ Ընդհանրին միութիւն =

Quænam sit Vnitas propria Vniuersalis.

Quæstio Secunda.

Այսմ բացատրութեան խնդրոյս առաջնկային՝ նախ գիտելի է', եթէ միութիւն՝ է' անբաժանութիւն իւրին 'ի յինքեան էու- թեանն, և բաժանումն յամենայնէ յայլմէ ՚ի. որինչ է' մի- պատշաճ է' գոլ անբաժանեալ յինքեան էութեանն, և բաժանեալ յամենայնէ յայլմէ =

Առարկիցես. թէ միութիւն՝ է' անբաժանութիւն 'ի յինքեան էութեանն. ապա ուրեմն է' բացասութիւն, և ոչինչ. զի անբա- ժանութիւն՝ է' բացասութիւն բաժանման = ապա արդեօք՝ որինչ իք մի. իք բացականն, և ոչ դրական ինչ =

Պատասխանեմք, մեկնելով զառաջին եղրակացութիւն. թէ միութիւն է' բացասութիւն հիմնեալ 'ի վր դրական իրի. ընդու- նիմ = է' սոսկ բացասութիւն թարց դրական հիման. ուրանամ = ապա արդ որինչ իք մի. իք դրական ինչ որոյ վր հիմնի բացա- սութիւն բաժանման 'ի յինքեան էութեան. զի եթէ բաժանեալ էր յինքենէ յիւրմէ. ոչ էր մի =

Երկրորդ՝ գիտելի է'. եթէ միութիւն է' երկեակ = տեսակա- կան. և թուական, որ և անհատական = տեսականական միու- թիւն է' միութիւն բնութեան ուրուք հասարակի, և յայլոց հասա- րակ բնութեանց որոշելոյ = զոր օրինակ. մարդկային բնութիւն է' մի տեսականապէս. ՚ի. տեսականական միութիւն = զի ըստ իւր տե- սականական հասարակութեան՝ անորոշեալ է' յինքեան էութեանն, և որոշեալ յայլոց բնութեանց առիւծու, ձիոյ, արծուի, և այլ = Եւ դարձեալ՝ տեսականական միութիւն է' կրկնակ = մինն սեռի, որ պատականի սեռական բնութեան. որպէս. կենդա-

նւոյ . մարմնոյ . և այլ։ Իսկ՝ միւսն՝ տեսակին որ պատկանին տե_ սակաւոր էութեան . որպէս . մարդոյ , առիւծու , և այլ։

Չրդ՝ Թուական միութիւն է՝ միութիւն միոյ եզական անհա_ տի , որ է՝ բաժանեալ յայլմէ անհատէ։ զո՛ր նման։ Պղատոն է՝ մի Թուով և անհատական միութեամբ և Թուով տարբերի ՚ի Սոկրատայ։ բայց տարբերի յայն առիւծէ Թուապէս և տե_ սակաբար. զի. ոչ միայն Թուով, և անհատական տարբերութեամբ. այլ և տեսակաւ և տեսակական տարբերութեամբ. զի ունի զա_ նազան էութիւն։

Երրորդ գիտելի է . զի տեսակական միութիւն կրկին ստո_ րաբաժանի ՚ի ֆիզիկայն որ բնական , և մետաֆիզիկայն որ համաբնական։ Ֆիզիկայն տեսակական միութիւն է՝ միութիւն էութեան ուրուք , որ ունի զբնական գոյութիւն ըստ էնթակա_ յացեալ իրի ։ և այսպէս է՝ մի տեսակապէս՝ էութիւն պղատոնի, զանազանեալ ՚ի էութենէ առիւծու։

Իսկ՝ մետաֆիզիկայն տեսակական միութիւն է՝ միութիւն էութեան ուրուք համարական , որպէս ՚ի վերոյ ասացաք , և վե_ րացելոյ ՚ի վայրապարունակիցն. որ ոչ է՝ մի ըստ էնթակայացեալ իրի. այլ միայն ըստ մտածութեան . և սորին ընդ միով սահ մանաւ ըմբռնում անհատ վայրապարունակաց։ զի միայն վերացու_ ցանէ զմի սահման ՚ի բազում անհատից զնման էութեանն ու_ նողաց . և զայս մի սահմանն ստորոգէ զիւրաքանչիւրոյ ՚ի նո_ ցանէ։ Եւ այսպէս մի կոչեմք զմարդկայնն ընդհանուր էութիւն զոր և սահմանեմք՝ կենդանի բանական , ՚ի յառիւծային համ ձիական ընդհանուր էութենէ տեսակապէս զանազանեալ. և այս ստորոգի ըմբռնեալ ա՛ հատ վայրապարունակիցն , զպետրոսէ , զպօղոսէ , և այլ։

Չրդ՝ պատասխանեմք առ խնդիրսն, Թէ միութիւն ընդհանու րին՝ է միայն մետաֆիզիկայն տեսակական միութիւն՝ բացման

հաղոր

հաղորդելի բնութեան , որ է մասն վերացեալ 'ի բազում վայրա-
գունից ։ եւ ցուցանի . քանզի ընդհանուրն է մի ինչ հաղորդե-
լի բազմաց . ուրեմն ապա՝ նորա միութիւն է միայն տեսակա-
կան միութիւն բնութեան ուրուք 'ի բազմաց հաղորդելոյ ։ որպիսին
է մետաֆիզիկայն տեսակական միութիւն՝ Թէ սեռի . որպէս .
կենդանւոյ , որ է վերացեալ 'ի յոլովից տեսակաց՝ 'ի մարդոյ ,
'ի ձիոյ , յառիւծէ , և այլ . զորոցն և ստորոգի կենդանին ։
Թէ տեսակի . որպէս . մարդոյ , որ է վերացեալ 'ի յոլովից
անհատից՝ 'ի պետրոսէ , 'ի պօղոսէ , և այլ . զորոցն և ստո-
րոգի մարդն ։

Երրորդ խնդիր .

Թէ որպիսի ինչ պատրաստ է գոլ Ընդհանրին բնու-թեան գոլոյ 'ի բազումս ։

Quænam sit in natura vniuersali aptitudo essendi in multis?

Quæstio Tertia.

Նախ գիտելի է . զի բնական կարողութիւն, որ և ասի բնա-
ւորութիւն է երկեակ ։ մինն ներգործական . և միւսն կրո-
ղական ։ Ներգործական կարողութիւն է զօրութիւն ինչ արտա-
դրելոյ գործոյ ։ որպէս զօրութիւն հրոյ , որով կարէ հուրն արտա-
դրել զայլ հուր ։ և յաղագս այդորիկ ոչ է բան 'ի ներկայումս ։
Կրողական կարողութիւն է՝ որով մինն կարէ առնուլ 'ի վերայ իւ-
րեան ինքեան զմիւսն . հգ կէն . բնաւորութիւն փայտին առ 'ի յառ-
նուլ 'ի վերայ իւրեան զջերմութիւն ։ Արդ՝ լինի երբեմն , թէ մինն
ունիցի զերկոսին կարողութիւնս առ միւսն ։ զոր օրինակ . աչքն
ներգործական և կրողական կարողութիւնս առ տեսութիւն . զի

բնաւորն առ 'ի յարատեւել զտեւողութիւն, և առնուլ զձեւ 'ի վերայ նիւթեանն =

Երկրորդ գիտելի է. Թէ կրողական կարողութիւն բաժանի 'ի դրական, և բացասական = Դրականն է, որով մինն օժտի առ միւսն, իբր կատարելի ինչ առ կատարիչն իւր. Որպէս. այսպէս ունի դրական բնաւորութիւն առնուլ 'ի վերայ նիւթեան զտեսութիւն. զի տեսութիւն կատարի ներգործապէս ըստ բնական պահանջմանն նիւթեան = և գոյացութիւն դրապէս բնաւորին են Թակայից պատահմանցն. զի նոքօք կատարին ներգործապէս ըստ բնական օժտութեան նորա =

Բացասական կարողութիւն, որ նոյնպէս ասի անհակայութիւն. է որով մինն կարէ առնուլ 'ի վերայ նիւթեան զմիւսն ոչ օժտութեամբ այլ անհակայութեամբ. զի թէպէտ ոչ պահանջէ զնա բնաւորական օժտութեամբ. ոչ գոլով կատարելի նորա = սակայն ոչ ունի զհակակայութիւն առ նա. այլ ունի զինքն անզանազանապէս առ 'ի յառնուլ զնա, կամ ոչ առնուլ = այսպէս քանակութիւն ունի զբացասական կարողութիւն առ բաժանումն, որպէս առ [illegible]. փայտ առ ջերմութիւն = զի գոլով ոչ պահանջէն կատարել յայսպիսեացս. և ոչ ունին զհակակայութիւն առ նոսին =

Հարց՝ պատասխանեսջիր առ խնդիրսն. Թէ ընդհանրական բնաւորութիւն գոյ 'ի բազումս՝ է դրական կարողութիւն. ոչ բացասական = ցուցանի. քանզի ընդհանրական բնութիւն իբր անկատար ինչ՝ յարաբերի առ յանհատութիւնս որպէս առ կատարիչս նիւթեանն ըստ բնական պահանջմանն նորա, այլ ուրեմն ունի զդրական կարողութիւն առ նոսա = Եզրակացութիւն յայտ է ըստ ասացելոցն 'ի վերոյ = առաջարկութիւնս ցուցանի. զի անհատութիւն է լրումն բնութեան, որ նովաւ լինի եզական, և առաջին գոյացութիւն. վերայ որոյ և կատարելագոյն ըստ պա-

Ծդ   հան

հանջմանն իւրեան . ապա ուրեմն հասարակ բնութիւն օտարի դրապէս առ յանհատութիւն որպէս առ ներքին կատարելութեան իւրեանն . ապա ունի ըմբռնական բնաւորութիւն գոլոյ 'ի նոսա . և ոչ բացասական , որպէս կարծեն ոմանք :

Յառաջինն հակառակին . Թէ բնաւորութիւն առ բաժանումն ոչ է դրական կարողութիւն , այլ բացասական , որ է անհակայութիւն : զի որ օրինակ քանակութիւն ոչ օտարի դրապէս առ բաժանումն . այլ միայն ոչ ներհակակայի բաժանել : ապա ուրեմն և կարողութիւն , զոր ունի ընդհանուր բնութիւն առ հատել , և բազմանալ անհատութեամբք ոչ է դրական կարողութիւն , այլ բացասական , և անհակայութիւն :

Պատասխանեմք , ընդունելով զառաջարկութիւն . և ուրանալով զերկրակայութիւն : և բան զանազանութեան է , զի զի քանակութիւն ոչ կատարի յաւժամ բաժանեալ 'ի մասունս . սակս որոյ և ոչ օտարի դրապէս առ բաժանելն : բայց ընդհանուր բնութիւն յաւժամ անհատանայ , կատարելներապէս անհատութեամբքն ըստ բնական պահանջմանն իւրեան . վի որոյ բնաւորութիւննորին առ անհատութիւն է դրական օտարութիւն . և ոչ սոսկ անհակայութիւն :

Չորրորդ խնդիր .

Մի թէ բնութիւն զանազանի յանհատութենէ իւրեանն : Եւ որքանաբար լինի Զանազանութիւն :

An Natura distinguatur ab hæcceitate : & quotuplex sit Distinctio ?

Quæstio Quarta .

Գան գիտելի է . Թէ զանազանութիւնն է այն , որով մինն ոչ է միւսն : և բազմապատիկ լինի : Զանազանութեցն

թեան՝ ոմն է ըստ էնթակայացեալ իրի . ոմն ըստ մակամտա-
ծութեան = Զանազանութիւն ըստ էնթակայացեալ իրին՝ լինի , յորժամ միմն ոչ է միւսն 'ի կողմանէ իրին , ոչ միայն 'ի կողմանէ մտաց = որպէս . 'ի պետրոս հոգի զանազանի 'ի մարմնոյ ըստ էնթակայացեալ իրի. զի հոգի ոչ գոլ մարմին՝ ոչ է գործ մտաց, և ոչ լինի մտաւքաւ միայն . այլ և ճշմարտապէս և 'ի կողմանէ իրին = Զանազանութիւն ըստ մակամտածութեան՝ լինի , յորժամ միմն ոչ է միւսն ըստ ներգործութեան մտաց միայն . այլ ոչ եւս 'ի կողմանէ իրին = հն բար . ներ Այ՝ ողորմութիւն և արդարութիւն զանազանին ըստ մակամտածութեան միայն . ոչ ըստ էնթակայացեալ իրին. զի ամ կատարելութիւնքն Այ 'ի կողմանէ իրին և ճշմարտապէս մի են ամենեքին , և պարզ ինչ էակ , որ վասն պատճառաւ իւր գերազանցութեան համեմատի բազմաց. ուստի որոյ մեք բազմապատիկ զանազան իմամբք իմանալ փութամբաց 'ի յանձնաւորութեցն , որք ներ Այ զանազանին 'ի կողմանէ իրին վասն առընչական հակադրութեան զոր ունին առ միմեանս = որպէս մայր ածաբանութեան յայտնի ընձեռութք ճշխարտանիցեմ =

Դարձեալ՝ Զանազանութիւն ըստ էնթակայացեալ իրին բաժանի 'ի յէական , և յեղանակական = Էական զանազանութիւն է՝ որով իրն զանազանի 'ի յիրէ , մինչ զի երկոքեան կարեն 'ի միմեանց բաժանել. և գոլ բաժանեալք, կամ բնականաբար , որպէս . բանական հոգի և մարմին = կամ գերբնաբար . հն կէն . գոյացութիւն և քանակութիւն = Եղանակական զանազանութիւն է՝ որով իրն զանազանի 'ի յեղանակէ իւրմէ . մինչ զի թէպէտ իրն կարող լինի [illegible] բաժանեալ 'ի յեղանակէ յայնմանէ . ոչ սակայն կարէ եղանակն գոլ բաժանեալ յիրէն իւրմէ . ոչ բնականաբար , և ոչ ամենայն կարողութեամբ = զոր նման . այէտրոս զանազանի եղանակաբար 'ի յընթացմանէ իւրմէ , որ ոչ

է իր ,

է իր այլ եղանականովն . զի թէպէտ կարող է պետոտս գոլ_
տեսանց ընթացմանն այնորիկ . բայց տակայն ոչ կարէ ընթա_
ցումն այն գոլ թարց պետոտսի , ոչ բնականաբար , և ոչ գեր_
բնաբար :

Եւ դարձեալ՝ Զանազանութիւն ըստ մակացութեանն
երկեակ է ։ մինն հիմնեալ և ճշմարիտ . միւսն անհիմնեալ և
սուտ ։ Զանազանութիւն ըստ հիմնեալ մակացութեան
է , որ ունի զհիմն ՚ի կողմանէ իրին , թէպէտ ինքն լինի ՚ի կող_
մանէ մտաց . վասն որոյ ոչ է սակմնացածին ։ Եւ այս լինի . յոր
ժամ մի պարզ էակ ունի զզօրութիւն բազում կատարելութեանց ,
և համեմատի բազում էակաց . յայնժամ միտքն ունի զհիմն ճա_
նաչելոյ ՚ի նմա զմի կատարելութիւն , ոչ ճանաչելով զմիւսն . և
այսպէս ճանաչէ զնոյն անբաժանելի էակ ոչ լիապէս , այլ ան
լիաբար ։ կամ կարէ միտքն ճանաչել զնա լիաբար , ճանաչե_
լով ՚ի նմա զամ կատարելութիւնսն բազում զանազան իմաց
մամբք . թէպէտ էակն այն՝ մի պարզ իցէ ։ զոր օրինակ . վասն զի
մի պարզ էութիւն այ՝ համեմատի անթիւ կատարելութեանց . որ .
բարութե . իմաստութե . ողորմութե . արդարութե . և այլ ։
միտքն ունի զհիմն ճանաչելոյ զնա բազում զանազան իմացմա_
մբք ։ և այսպիսի զանազանութիւն՝ ասի ըստ հիմնեալ մակա
ցութե , զի ունի զինքն ՚ի կողմանէ մտաց . թէպէտ զհիմն
ունի ՚ի կողմանէ իրին ։ և ոչ է սուտ ճանաչումն , այլ ճշմարիտ .
զի յորժամ ճանաչեմ նոր այ զողորմութիւն հրաժարելով զմիւսս
՚ի յարդարութենէ . ոչ սխալեմ . զի ոչ իմանամ թէ ողորմու_
թիւնն այ ոչ է արդարութիւն ։ որ սուտ էր : այլ միայն իմա_
նամ զողորմութիւն առանց իմանալոյ զարդարութիւն . որ իմա_
ցումն ասի հրաժարական և ճշմարիտ . ոչ բացասական և
սուտ . զի ոչ բացասէ զողորմութիւն զարդարութենէն . այլ մի_
այն հրաժարի յարդարութենէ ։

Զանազանութիւն ըստ անհնարինեալ մակամասնութեանն է
որ ոչ ունի զհիմն ինչ ՚ի կողմանէ իրին, այլ է սոսկ մտացա_
ծին և սոսկ ճանաչութեան։ Իբրև զաղափարութ. յորժամ իմա_
նամ զանազանութիւն ՚ի մէջ մարդոյ, և կենդանւոյ բանա_
կանին որ է մարդոյ էութիւն։ կամ յորժամ իմանամ թէ նէր
ույ ուղղութեան ծննդաբանութեան ոչ է արդարութիւն, որպէս ՚ի
մեզ։ և զայլ ինչ նման։

Երկրորդ գիտելի է. զի յոլովք են նշանակք զանազանու_
թեան։ նախ յորժամ յերկուց մինն է պատճառ, և միւսն պատ
ճառելի։ կամ մինն առընչական առ միւսն։ կամ մինն այսպէս
կարէ բաժանիլ ՚ի միւսոյն, մինչ զի երկոքեանն կարեն բաժա_
նեալք լինել, թէ բնականաբար, թէ գերբնաբար։ յայնժամ
նշան է թէ գոյ իրական զանազանութիւն ըստ էնթակայա_
կեալ իւրն ՚ի մէջ նոցին և պատճառն է զի ոչ կարէ նոյն պատ
ճառել զինքն իւր և ոչ կարէ նոյն առընչանալ առ ինքն իւր և
ոչ կարէ նոյն իր բաժանիլ յինքենէ իւրմէ։ այսպէս զանազանի
հոգի ՚ի մարմնոյ քանակութիւն ՚ի գոյացութենէ. հայր ՚ի յոր
դւոյ տէր ՚ի ծառայէ և այլ։

Դարձեալ. յորժամ յերկուց մինն կարէ լինել առանց
միւսոյն. բայց ոչ այս միւսն կարէ գոլ առանց նորա, ոչ բնա_
կանաբար, և ոչ գերբնաբար։ յայնժամ նշան է եղանակա_
կան զանազանութեան որպէս լինի ՚ի մէջ իրի և եղանակի նորա.
որգոն. ՚ի մէջ մարդոյ և ընթացմանն իւրեանց. կամ ՚ի մէջ քա_
նակութեան և ձևոյ. և այլ։ զի կարէ գոլ մարդն առանց ընթաց
մանն. և քանակութիւն առանց այսր ձևոյ։ բայց ոչ հակա_
դարձաբար. զի ոչ կարէ սոյն անհատ ընթացումն գոլ առանց
այս մարդոյս. և ոչ այս անհատ ձևս գոլ առանց քանակու_
թեանս այսմիկ։

Դարձեալ. զանազանութիւն նէրգործութեանց, իմացմանց,

ճճղ   և սահ

և սահմանայ՝ ոչ է՛ բաւական նշան զանազանութեան ըստ են-
թակայացեալ իրին = քանզի ա͞ծ է՛ մի պարզ սկիզբն. թէպէտ
յառաջագործէ զբազում զանազան գործս = և միայն է մի սոսկ
զօրութիւն. թէպէտ ունի զանազան ներգործութիւնս. իբր.
զպարզ ըմբռնումն, զդատումն, և զտրամաբանութիւնն. նա
և կարեմք իմանալ զանազան իմացմամբք, և բաժանել զա-
նազան սահմանօք զզօրութիւնն և զարդարութիւնն այսպէս
մի են ըստ ենթակայացեալ իրին = նոյնպէս և զբանականու-
թիւն և զկենդանականութիւնն մարդոյ. թէպէտ սոքա ՚ի մարդն
ոչ զանազանին ՚ի կողմանէ իրին, այլ են մի իրական էութիւն
մարդոյ = ուրեմն ապա զանազանութիւն ներգործութեանց,
իմացմանց, և սահմանադրութեանց՝ ոչ միշտ նշանակէ զզա-
նազանութիւնն ՚ի կողմանէ իրին =

ՀԱրց՝ պատասխանել առ խնդիրսն ընդդէմ սմանց փիլի-
սոփայից. թէ էութիւնն ոչ զանազանի ըստ ենթակայացեալ
իրին ՚ի գոյութենէ. իբր. յանհատութենէս իւրմէ = ցուցանի.
քանզի եթէ էութիւն ըստ ենթակայացեալ իրի զանազանեալ
էր գոյութենէն իւրմէ. էութիւն և գոյութիւն էին սորօք
երկու իրական էակք = ապա էութիւն ըստ ինքեան առանձնա-
բար իմացեալ՝ գոյր մի իրական էակ անկախապէս գոյութե-
նէն. արդ ուրեմն ըստ ինքեան առանձնաբար իմացեալ՝ գոյր
այս և անհատ անկախապէս գոյութենէ և յանհատութենէ =
որ է՛ անհնարին բան = ցուցանի այս յետին եզրակացութիւն. զի
զիւրաքանչիւրոյ միոյ իրական էակէ կարեմք ճշմարտապէս
ասել. թէ է՛ այս և անհատ = Եւ դարձեալ. եթէ էութիւն
և անհատութիւն էին երկու իրական էակք և ոչ մի. ապա էին
երկու եզական իրք. զի իւրաքանչիւր իրական էակն գոյ ըստ
ինքեան մի եզական իր = ապա ուրեմն էութիւն գոյր մի եզա-

կան և անհատ իր 'ի յինքեան . և ոչ 'ի զանազանեալ անհա-
տութենէ =

Յառաջնոյս հետևի թէ բնութիւն զանազանի 'ի յայտու-
թենէ և յանհատութենէ , միայն ըստ հիմնեալ մակամտա-
ծութե = ցուցանի զի կարէ միտքն ճանաչել 'ի պետրոսի զբնու-
թիւնն նորա . այսինքն . զկենդանին բանական . ոչ ճանաչելով զա-
սութիւնն նորին . այսինքն զպետրոսութիւնն որ և ասի անհատու-
թիւն = նա և կարէ իմանալ զայսութիւն պետրոսի . հրաժարե-
լով 'ի բնութենէ նորին : ապա ուրեմն բնութիւնն և այսու-
թիւնն զանազանին ըստ հիմնեալ մակամտածութեան =

Առարկեսցես . Թէ պետրոս ըստ ենթակայացեալ իւրն նմա-
նի պօղոսի ըստ բնութե , գոլով երկոքեանն կենդանի բանա-
կան . և տարբեր է նմին ըստ անհատութե , այսինքն . ըստ պետրո-
սութե = ապա ուրեմն անհատութիւն ըստ ենթակայացեալ իւրն
զանազանի 'ի բնութենէ = եզրակացութիւն ցուցանի . վասն զի ոչ
կարեն երկուք ըստ նոյն կատարելութեան համաձայնել և տար-
բերիլ ընդ միմեանս =

Նախ պատասխանեմ առ ձեռարկութիւն , ուրանալով
զառաջարկութիւն = քանզի այդպիսի նմանութիւն և տարբե-
րութիւն ոչ լինի ըստ ենթակայացեալ իւրն . այլ է միայն գործ-
մամբ = զի միտքն ճանաչէ զբնութիւն պետրոսի իբրև զանա-
զանեալ յանհատութենէ այսինքն . 'ի պետրոսութենէ , յորմէ ոչ է
իրապէս զանազանեալ = և այսպէս իմանայ 'ի միջ պետրոսի և
պօղոսի զբանն համաձայնութե և տարբերութե =

Երկրորդ պատասխանեմ զի թէպէտ և տամ զառաջար-
կութիւն . բայց տակաւին մերժեմ զեզրակացութիւն = թէ ապա
ուրեմն 'ի պետրոսի բնութիւնն և անհատութիւն զանազանին
ըստ ենթակայացեալ իւրն հիմնապէս և զօրութե . ընդունիմ

 տեսա-

տեսական՝ որպէս և ներգործութիւն . ուրանօր ։ ՅԻ . պետրոս Թէպէտ ներգործութիւն է՝ մի անձնաւորական էակ . բայց սակայն համեմատ զօրութիւն երկուց զանազան կատարելութեանց բնութեան և այսութեան ։ վասն որոյ շնորհս տայ մտաց և զտեղի ճանաչելոյ՝ ի նմա զերկուս կատարելութիւնս զայդոսին իբրև զանազանեալս . և ըստ միոյն տայ իմանալ զբանն հաւասարութեան . ըստ միւսոյն զբանն տարբերութեան ։

Բայց արդ ենինն պարտ է՝ գիտել . եթէ զորինչ եմ ասացեալ յաղագս բնութեան և այսութեան զանազանելոյ ։ զնոյն և ասեմ ՝ի վերայ զանազանութեան համաբնական ստորոգմանցն էակին ։ զի սոքա ևս ո՛չ զանազանին՝ ի միմեանց ըստ ենթակայացեալ իրին . այլ միայն ըստ հիմնեալ մակամտածութեան ։ Հրդ՝ համաբնական ստորոգմունքն իրին՝ են կատարելութիւնք ոմանք նորին՝ վերադրեալք և վայելչացեալք ըստ նմանութեան ստորոգմանցն երբեկաղափարաց , ՝ի մարդն համաբնական ստորոգմունքն են սոքա . էակ . գոյացութիւն . մարմին . բոյս . զգայուն . շնչաւոր . բանական . այս և ելն ստորադրեալքն բաղադրեն զմարդոյ էութիւն , որ է՝ կենդանի բանական ։ իսկ միոյն յետին պատկանի առ անհատութիւն մարդոյ , որ է՝ այսութիւն ։ դոքա ամենեքեանք ՝ի պետրոս ո՛չ են՝ ի կողմանէ իրին զանազանեալ էակք . այլ մի սոյն էակն պետրոսի , որ վասն իւր կատարելութեան համեմատ բազմաց . որպէս . էակութեան պատահմանցն . գոյացութեան հրեշտակին . մարմնոյն քարին . բուսոյն ծառոցն . զգայնոյն որդոցն . շնչաւորութեան առիւծու . բանականութեան պօղոսի . և այսութեան իւր իրաց ։ վասն որոյ զանազանին դոքա՝ ի պետրոս զօրութիւն միայն և ըստ հիմնեալ մակամտածութեան . ո՛չ ներգործութիւն և իրապէս ։

Հինգերորդ Խնդիր.

Մի թէ գոյ Ընդհանուրն ըստ ենթակայացեալ իրի. կամ թէ միայն ըստ մտաւորութեան.

Vtrum detur Vniuersale à parte rei: an verò solum per intellectum.

Quæstio Quinta.

Նախ գիտելի է՝ ստուգաբանական կարծիքն Պղատոնի. որ ասէր, գոլ ըստ ենթակայացեալ իրին ՚ի ներքոյ լուսնոյ կամ երկնին զամ ընդհանուր բնութիւնս իւրայն զատուցեալս յանհատիցն. յորոյն ենթադրանցիւր անհատան հաղորդեն զէութիւն իւր. Բայց այսպիսի կարծիքս է սուտ. քանզի բնութիւն ոչ է անհատիցն արտաքին ինչ, այլ ներքին. զի ստորոգի զնոցանէ. և ստորոգելին է ստորագասիլ թէ մինն ներքոյ ումեմն, և ոչ արտաքոյ. Նմանին որպէս ոչ կարէ գոլ ըստ ենթակայացեալ իրին ընդհանուր բնութիւն ինչ զատուցեալ յանհատիցն. որպէս Պղատոնն աւանդէր.

Երկրորդ գիտելի է կարծիքն այլ ոմանց փիլիսոփայից. որք ասեն, գոլ զընդհանուր բնութիւն ոչ զատուցեալս յանհատիցն, այլ զմիացեալս ընդ նոսա: զոր օրինակ. մարդկային բնութիւն. ասեն. մի է՝ ամենեցուն նոյն անհատան մարդոյ: և այսպէս կարծեն. համարելով եթէ բնութիւն զանազանեալ է ըստ ենթակայացեալ իրին յանհատութենէն. ուստի հետևաբար վարդապետեն, զմի բնութիւն գոլ ՚ի բազում անհատս.

Առաջին եզրակացութիւն. ոչ գոյ ըստ ենթակայացեալ իրի մի ընդհանուր բնութիւն ՚ի բազում անհատս. ցուցանի. քանզի բնութիւն ոչ զանազանի ըստ ենթակայացեալ իրին յանհատութենէն. որպէս ցուցաք ՚ի վերոյ. ապա ուրեմն բազմա-

ցեալ է բնութեան, որպէս և են բազմացեալ անհատութիւնքն . և ոչ է մի 'ի բազումս =

Դարձեալ ցուցանի . քանզի եթէ գոյր մի բնութիւն 'ի յոլով անհատս . այսպիսի բնութիւն ունէր զանբաւ զօրութիւն: եւ՛ այս է սուտ = ապա ուրեմն և սուտ է առաջեալն = մեծագոյն ցուցանի. զի այնպիսի բնութիւն ունէր զօրութիւն առնլոյ 'ի վ՛ր իւրեանն զանհատութիւնս զբազումս և զբազումս մինչ և յանհունս. վ՛ զի կարէ ա՛ծ արտադրել զբազում և զբազում անհատս նոյն բնութեան մինչ և յանհունս = ուրեմն ապա այն մի բնութիւն զանբաւ զօրութիւն ունէր =

Հաստատի նոյն մեծագոյն . քանզի եթէ այն մի բնութիւն զչափաւոր զօրութիւն ունէր . զայնչափ անհատութիւնս կարէր արգելոյ առնուլ 'ի վ՛ր իւրեանն, և ոչ աւելի = բայց միշտ բնականաբար զանհատութիւնս յոլովագոյնս կարէր առնուլ, և զայս մինչ և յանբաւս = ապա ունէր զանբաւ զօրութի = զոր ասելն է յոյժ անդէպ =

Առարկեսցես . թէ պետրոս և պօղոս են մի՛ տեսակաւ, և տարբերին թուով միայն = արդ. ուրեմն ունին զմի ընդհանուր բնութիւն, և ոչ զերկուս = եզրակացութիւնս ցուցանի. զի պետրոս և պօղոս տարբերին թուով և տեսակաւ . սակս այսորիկ ունին զերկու բնութիւնս : եւ՛ պետրոս և պօղոս են մի՛ տեսակաւ = ուրեմն ունին զմի բնութիւն =

Պատասխանեմ, մեկնելով զեզրակացութիւն . թէ արդ. ուրեմն պետրոս և պօղոս ունին զմի բնութիւն՝ հասարակաւ և նոյնական միութբ . ուրանամ = անկատար և նմանական միութբ ընդունիմ = զի բնութիւն պետրոսի և պօղոսի ոչ է մի ամենևին, այլ մի նմանապէս . յր . ունին զերկու նման բնութիւնս = և այս է ասել, եթէ ոչ տարբերին տեսակաւ, այլ թուով միայն: բայց պետրոս և պօղոս ունին զերկու բնու-

թիւն

Թէս ոչ նմանս, այլ աննմանս. և զի այսորիկ տարբերին Թուով և տեսակաւ = Եղբ.՝ ուրուրեք է նմանութիւն. անդ ոչ է կատարեալ միութիւն, այլ բազմութիւն. զի ոչ կարէ մին գոլ նմանն իւրեան ինքեանն այլ միւսոյն =

Դարձեալ առարկիցես Թէ պետրոս և պօղոս ոչ են տարբերք ըստ էութէ. զի ունին զնոյն սահման, և զնոյն էութենական ստորոգելեաւս ՟յպ. կենդանի բանական = ապա ուրեմն և զնոյն բնութիւն. զի սահմանն է յայտնիչ բնութեն ենթակայ իրին =

Պատասխանեմք, մեկնելով զհետևութին. Թէ ապա ուրեմն ունին և զնոյն բնութիւն՝ համաբնական. ՟յպ. վերացեալ մտօք յանհատութենէն, և զնոյն ըստ մասնաւորութէ. ընդունիմ = ունին զնոյն բնութիւն՝ բնական, և զնոյն ըստ ենթակայացեալ իրին ուրանամ = զի սահմանն է գործ մտաց. և է յայտնիչ էութեան իրին ըստ որում էութին իմանի 'ի մտաց որպէս ինչ զանազանեալ 'ի յանհատութենանցն. և այսպէս սահմանի 'ի պետրոս և 'ի պօղոս էութիւնն նոցա վերացեալ մտօք յանհատութենէն. ՟յպ. 'ի պետրոսութենէ և պօղոսութենէ. որ ո̃մ է գործ մտաց. զի ըստ ենթակայացեալ իրին էութին ոչ զանազանի յանհատութենէ =

Դարձեալ առարկիցես. Թէ ա̃ծային բնութին ունի զկատարեալ միութիւն և գոյ 'ի բազումս. ՟յպ. յերիս անձինս ապա ուրեմն է ճշմարիտ ընդհանուր: ապա գոյ ընդհանուրն ըստ ենթակայացեալ իրին =

Պատասխանեմք, մեկնելով զառաջարկութին Թէ ա̃ծային բնութին ունի զկատարեալ միութիւն՝ տեսակական միայն, որ պատշաճէր առ ընդհանուրն. ուրանամ = ունի զկատարեալ միութիւն՝ անհատական, որ անդիմանալ ընդհանրին. ընդունիմ = զի որոյ ոչ առ իսկապէս ընդհանուր բնու-

թեան, թէպէտ գոյ 'ի բազումս. զի է՛ մի ոչ միայն տեսակաւ, այլ և թուով. զի հայր, որդի, և հոգին սուրբ՝ են մի թուով ած, և ոչ երեք. որպէս երեք անհատք մարդոյ՝ են երեք մարդիկք = քանզի, որպէս 'ի վերոյ ցուցաք, ընդհանրին միութին՝ պարտ է՛ գոլ միութիւն տեսակական միայն, թուով բազմացեալ. և ոչ միութիւն անհատական և թուական, որ ոչինչ կերպիւ կարէ բազմանալ =

Երկրորդ եզրակացութիւն. գոյ ընդհանուր բնութի ըստ մակամտածութե = ցուցանի, զի թէպէտ բնութին ոչ զանազանի յանհատութենէ ըստ էնթակայացեալ իւրն. բայց սակայն զանազանի 'ի նմանէ ըստ հիմնեալ մակամտածութեն. որպէս 'ի վերոյ ցուցաք = այլ ուրեմն կարէ միտքն ճանաչել 'ի պետրոս և 'ի պօղոս զբնութիւնն, ոչ ճանաչելով զանհատութիւն նց. զպետրոսութի և զպօղոսութիւն = այլ այսպիսի բնութին մտօք վերացեալ յանհատութեցն՝ մնայր մի ըստ մակամտածութեն. զի անհատութիւքն էին պատճառ բազմութենորին = նա և ունէր զբնաւորութիւն գոլոյ 'ի բազում անհատութիւն յորոց վերացեալն էր. ուրեմն այլ մնայր ընդհանուր: զի ընդհանուրն է՛ մի տեսակական կամ սեռական բնութի, որ բնաւորին բազմանալ 'ի յոլով անհատս =

* *
*

ԵՐՐՈՐԴ ՎԻՃԱԲԱՆՈՒԹԻՒՆ.

Յաղագս առընչութեան:

Առաջին խնդիր.

Թէ զինչ իցէ առընչութիւն: եւ ՚ի քանի սեռս բաժանեսցի:

De Relatione.

DISPVTATIO TERTIA.

Quid, & Quotuplex sit Relatio?

Quæstio Prima.

Պարտ է նախ գիտել. զի էակացն՝ ոմանք են բացարձակք. եւ ոմանք առընչականք: բացարձակ էակն է այն զոր կարեմք իմանալ առանց վերաբերութեան առ այլ: որպէս. քար: առընչականն է, զոր ոչ կարեմք իմանալ թարց յարաբերութեան առ այլ: որպէս. հայր, որ իմանի վերաբերութեամբ առ յորդի:

Երկրորդ գիտելի է. զի յառընչականացն՝ ոմանք են ըստ կոչմանն. եւ ոմանք ըստ գոյոյ: առընչականքն ըստ կոչմանն են նոքա, որք ոչ ունին զառընչութիւն առ այլ. թէպէտ իմանին, եւ բացատրին այնպիսի առընչութեամբ: զոր նման. թէպէտ ամենակարողութիւն ոչ է՛ ամենեւին բացարձակեալ ՚ի յառընչութենէ առ ստեղծուածսն. զի թէ ոչինչ կերպիւ կարէ կախիլ ՚ի ստեղծուածոյս: այլ այն իմանի եւ բացատրի ՚ի մեջ վերաբերութեամբ առ ստեղծուածսն. վա որոյ այնպիսի ամենակարողութիւն ասի առընչական ըստ կոչմանն:

Առընչականքն ըստ գոյոյ՝ են նոքա որք ունին զճշմարիտ

առընչութիւն առ այլ։ Եւ նոյնպէս և առընչութիւնս ըստ գոյին կրկին ստորաբաժանին՝ ի գերազանցական, և ստորոգութենական։ Գերազանցական առընչութիւն է՝, որով միննոյն առ միւսն անմաքրապէս. որ. մի գործելոյ կամ կրելոյ զինչ շուրջ զնովաւ։ Որպէս օրինակ. արեգակն և լոյսն նոյն առ միմեանս գերազանցական առընչութեամբ և անմաքրապէս. զի լոյսն նոյն առ յարեգակն որպէս առ պատճառն իւր արտադրողական և պահողական։ Եւ արեգակն նոյն առ լոյսն զոր գործէ, որպէս առ պատճառն իւր վախճանական. զի արեգակն եղև և լինի վս լուսոյ։ Եւ սոյն գերազանցական առընչութի. զի գերազանցի զամ իրօք, և պատշաճի նոցա որպէս էութենական ինչ. և ոչ զանազանի ՚ի նոցանէ ըստ ենթակայացեալ իւրն. նա և ոչ հաստատէ ինքեանն զպատուկ ստորոգութիւն. այլ գերազանցի զամենայնիւքն. զի իւրաքանչիւր ջան Թէ գոյացութիւն, Թէ որակութի, Թէ քանակութի, և այլ նոյն անմաքրապէս էութեամբ առ ած յորոյ նախախնամութենէն միշտ կախի։ Վս որոյ իւրաքանչիւր գերազանցական առընչութիւնն պատկանի առ յիւրաքանչիւր ստորոգութիւն. յորմէ և ոչ զանազանի։

Ստորոգութենական առընչութիւն է՝ որով միննոյն առ միւսն մաքրապէս, ոչ վս գործելոյ, կամ կրելոյ զինչ շուրջ զնովաւ։ Եւ այսպիսի մաքուր առընչութիւս բաղկացուցանէ զպատուկ ստորոգութիւն, որ և առ ինչ ասի. զորմէ այժմ է բան։ Եւ նովին հայր մաքրապէս նոյն առ յորդի. տէր առ ծառայ. կրկնապատիկն առ կէսն. և այլ։

Երրորդ. գիտելի է. Թէ ՚ի սոյնպիսի առընչականս՝ վեց կարևոր իմանալ. որ. առընչութիւն. առընչակցութիւն. ենթակայ. հիմն. պատճառ հիմնելոյ. և եզր։ Առընչութիւն է՝ տեսակ ինչ, որով ենթակայ ասի այսպէս կամ այնպէս առըն-

 չեցեալ

չացեալ առ այլ։ որպէս. հայրութիւն, որով մարդ ասի հայր որդւոյ, և առընչանայ առ յորդին։ Առընչակցութիւն է միւս տեսակ որ է առընչութեան հատուցականն։ Որ բար. որդիութիւն, որ է հատուցականն հայրութեան։ Ենթակայ՝ է այն, որ յառաջնորդանի առընչացեալ։ որպէս. ծնօղ, որ կոչի հայր. կամ ծնեալ, որ ասի որդի։ Հիմն է այն, որոյ վր հիմնի առընչութիւն։ Որ կէն. որակութիւն է հիմն առընչութեան նմանութեան, կամ աննմանութեան։ քանակութիւն է հիմն առընչութեան հաւասարութեան, կամ անհաւասարութեան։ ծնողական զօրութիւն է հիմն հայրութեան. և այլ։ Պատճառ հիմնելոյ է Թէութիւն առանց որոյ ո՛չ բղխէր առընչութիւն։ որպէս. ծնողական արարողութիւնն է պատճառ հիմնելոյ զառընչութիւն հայրութեան, վասն զի է Թէութի առանց որոյ ո՛չ լինէր հայրութիւն ի ծնօղն։ Եզր՝ է այն առ յոր եզրանայ առընչութիւն։ Հիմքէս. որդին է եզր հայրութեան, զի ծնօղն հայրութեամբ նայի առ յորդին։ և հայր է եզր որդիութեան. զի առ հայր եզրանայ որդիութիւն ծնելոյն։

Չորրորդ գիտելի է. եթէ առընչութիւն ունի զներգոյն, և զառագոյն։ զոր օրինակ. հայրութիւն ունի զներգոյն ըստ որում յենու ի վր ենթակային. որպ. ծնողին։ և ունի զառագոյն ըստ որում առընչանայ առ յեզր. որպ. առ յորդի։

Հինգերորդ գիտելի է. եթէ առընչութիւն է երկեակ։ միոյն հակադարձ. միւսն՝ անհակադարձ։ Հակադարձն է, որ լինի ի մէջ երկուց, որք առ միմեանս առընչանան հակադարձաբար։ որպէս. առընչութիւն ի մէջ ծառայի և տեառն. կրկնապատկին և կիսոյ. հօր և որդւոյն։ Անհակադարձն է, որով միոյն առընչանայ առ միւսն. բայց ո՛չ հակադարձաբար։ որպէս. առընչութիւն, որով մակացութիւն յարաբերի առ մակացելի. բայց մակացելին ո՛չ յարաբերի առ մակացութիւն. զի իմացու-

առընչանայ առ յիմացեալ ենթակայ՝ բայց ենթակայն, որ իմանի, ոչ առընչանայ առ յիմացումն։ և տեսութիւն առընչանայ առ տեսանելին. բայց ոչ տեսանելին առ տեսութիւնն և առընչութիւն, որով ստեղծուածն առընչանայ առ ստեղծօղն. բայց ոչ ստեղծօղն ած առ ստեղծուածն։

Առաջին եզրակացութիւն։ Ստորոգութենական առընչութիւն սահմանի յարիստոտելէ այսպէս. Թէ Առինչս այնպիսիք ասեն, որք միանգամ ինքեանք որինչ էնն, այլոց գոլ ասին. և կամ որպէս զի արդ և իցէ այլապէս՝ առ այլ։ Օր. Առինչս է այն, որ զորինչ ունի, է՛ առ այլ և ոչ զայլ ինչ ունի, բայց միայն զհայիլ առ յեզր մաքրապէս։

Արդ՝ առինչութենական յատկութիւնքն են սոքա։ Նախ թէ առընչակիցքն ասին հակադարձաբար. որգոն տէր՝ է՛ ծառայի տէր. և ծառայ՝ տեառն ծառայ։ Կրկնապատիկն՝ կիսոյն կրկնապատիկ. և կէսն՝ կրկնապատկին է կէս։ Երկրորդ՝ եթէ առընչակիցքն գոն միանգամայն բնութբ։ Օր. յորժամ լինի որդի, լինի և հայր. և երբ լինի հայր, լինի որդի։ Երրորդ՝ եթէ գոն համանգամայն ճանաչմամբ։ Օր. ոչ ճանաչի հայր եթէ ոչ յարաբերութբ առ յորդի։ և ոչ ճանաչի որդի, եթէ ոչ յարաբերութբ առ հայր։ բայց այդպիսի յատկութիւնք միայն հակադարձ առինչութենակացն ընտանիք բար պատշաճին և ոչ անհակադարձիցն, եթէ ոչ ըստ արտաքին բացատրութեն միայն։ զի թէպէտ մակացելին բացատրեսցի յարաբերութբ առ մակացութիւն. բայց սակայն ոչ գոյ համանգամայն բնութբ և ճանաչմամբ ընդ մակացութեն. և ոչ հակադարձի ընդ նմին. եթէ ոչ ըստ արտաքին յարանունութեն միայն։ զի թէպէտ մակացութիւն յարաբերի առ մակացելի. զի որոյ ոչ կարէ գոլ և ոչ իմանիլ թարց մակացելոյն։ բայց սակայն մակացելի՝ կարէ գոլ, և իմանիլ առանց մակացութեն. և է՛ նախնիագոյն բնութբ, և ճանաչմամբ, քան

զմակացութեան. սակս որոյ և ո՛չ յարաբերին առ նա. զի մակա-
ցելոյն ՚ի բաց բարձելոյ, ընդ նմին ՚ի բաց բառնի մակացու-
թիւն: Իսկ մակացութեան չարաբարձելոյ, ո՛չ չարաբառնի
մակացելին:

Երկրորդ եղանակացութիւն: Երեք են սեռք առընչութեանց ըստ Արիստոտէլի ՚ի հինգերորդ գիրքն համաբնաբանութեան: Առաջին սեռն է՝ առընչութեանց, որք են հիմնեալք ՚ի միութեան և թիւ: Օր. որոց պատճառն հիմնելոյ է՝ միութիւն կամ թիւ: և դոքա՛ բաժանին յերիս տեսակս: քանզի ոմանք են հիմնեալք ՚ի վերայ միութեան կամ թուոյ գոյացութեան. և յայնժամ միութիւն հիմնէ զառընչութիւն նոյնութեան. իսկ թիւն՝ զառընչութիւն զանազանութեան: որպէս. պետրոս և պօղոս առընչանան առ միմեանս առընչութեամբ նոյնութեան. իսկ պետրոս և առիւծ՝ առընչութեամբ զանազանութեան: զի դոքա՛ նմանին, և տարբերին ըստ գոյացութեան: Եւ ոմանք են հիմնեալք ՚ի վերայ միութեան կամ թուոյ որակութեան. և այնժամ միութիւն հիմնէ զառընչութիւն նմանութեան. իսկ թիւն զառընչութիւն աննմանութեան: որպէս. Երկու սպիտակքն առընչանան առ միմեանս առընչութեամբ նմանութեան. իսկ սպիտակն և սեաւն՝ առընչութեամբ աննմանութեան: զի դոքա՛ նմանին և տարբերին ըստ որակութեան: Եւ ոմանք են հիմնեալք ՚ի վերայ միութեան կամ թուոյ քանակութեան, և յայնժամ միութիւն հիմնէ զառընչութիւն հաւասարութեան. իսկ թիւն՝ զառընչութիւն անհաւասարութեան: որպէս. Երկու թզաչափքն առընչանան առ միմեանս առընչութեամբ հաւասարութեան. իսկ միթզաչափն և երկութզաչափն. կամ կրկնապատիկն և կէսն՝ առընչութեամբ անհաւասարութեան: զի դոքա՛ նմանին և տարբերին ըստ քանակութեան:

Երրորդ սեռն է՝ առընչութեանց, որք են հիմնեալք ՚ի յառնել և ՚ի կրել. Օր. որոց պատճառն հիմնելոյ՝ է արարողութիւն, կամ

կրողութիւն ։ և այսպէս յետ պատճառելութեանն՝ պատճառն առընչանայ մաքրապէս առ գործն իւր որ է՛ պատճառել, և գործն առ պատճառ ։ որզան, հայր առ յորդի . և որդի առ հայր ։

Երրորդ սեռն է՛ հիմնեալ ՚ի չափն, և չափելին ։ քանզի յայսմ տեղւոջս չափութիւն ոչ իմանի ըստ քանակութեան . այլ ըստ օրինակի և օրինակելոյ ։ և այսպէս յարաբերի մակացութիւն որ է չափելի, առ մակացելին որ է չափն ։ որպէս . բժշկութեան արհեստ առ բժշկելի մարմին ։ ճանաչումն առ ճանաչելի են թական ։ տեսութիւն առ տեսանելին . և այլ ։ զի զօրէն սա- բաչափին , ըստ . զտեսակն առնուն ՚ի յենթակայից իւրեանց ։ թէպէտ մակացելի ենթակայքն ոչ ստորաչափին և ոչ տեսա- կաւորին ՚ի մակացութեանցն ։ վասն որոյ այս երրորդ սեռս է՛ անհա- կադարձ առընչութեանցն ։

Երկրորդ խնդիր .

Մի թէ ստորոգութենական առընչութիւնք գոյ իրականս ինչ ՚ի վերայ ենթակայի . կամ թէ միայն արտա- քին յարանուանութիւն ։

An dentur Relationes prædicamentales à parte rei?
Quæstio Secunda.

Առաջին եզրակացութիւն ։ Առընչութիւնքն առաջին սեռ- ին ոչ են իրականք, և ոչ գոն ըստ ենթակայացեալ իւիք. այլ են սոսկ ինչ արտաքին յարանուանութիւն ՚ի վերայ ենթակային ։ է՛ ընդդէմ ոմանց փիլիսոփայից ։ ցուցանի քանզի եթէ այն- պէս էին . ապա իւրաքանչիւր իր ունէր զանբաւ առնչական զօրութիւն զի կարող էր առնուլ ՚ի վերայ իւրեանն զանթիւ առըն- չութիւնս նմանութեան կամ աննմանութեան . նոյնութեան կամ զանա-

զանութեան . և այլ . վերաբերութեան առանձին երկուս նմանս կամ աննմանս , զոր կարող էր ստեղծել ած = Իսկ այս է ստա- տալ ուրեմն և այն , յորմէ այս հետևի = փոքրագոյնն՝ յայտ է. զի զօրութիւն պարտ է՝ համեմատիլ բնութեան , որոյ է՝ զօրու- թիւ . ապա բաւական բնութիւն զբաւական զօրութիւն ունի , և ոչ զանբաւն =

Դարձեալ ցուցանի . քանզի եթէ այսպիսի առընչութիւնք էին իրականք՝ մինն հետևէր զմիւսն մինչև յանհունս. որ է՛ յայտ անտեղի = վն զի իրական նմանութիւն , որ 'ի վր միոյ սպիտակին. հետևէր զառընչութիւն աննմանութեան 'ի մէջ ինքեանն և սպի- տակ ենթակային իւրեանն = և դարձեալ 'ի մէջ նմանութեան և աննմանութեան գոյր այլ աննմանութիւն = և յետոյ 'ի մէջ երկուց աննմանութեանցն գոյր նոր նմանութիւն = և այսպէս առաջա- բերին սոքա մինչև յանբաւս =

Դարձեալ ցուցանի = զի մի ուրեմն սպիտակ գոլ նման միւս սպիտակ ումեմն . կամ գոլ աննման միւս սևոյ ումեմն . ոչ այլ ինչ է . բայց միայն համանշանել զմիւս ուրեմն սպիտակ , որպէս է ինքն . կամ զսևն , որպէս ոչ է ինքն = ուրեմն ապա նմանու- թիւն կամ աննմանութիւն ոչ է՝ իրական ինչ ումեմն ներքսապէս վերաբերեալ . այլ միայն արտաքին յարմանութիւն ինչ , որով մի ուրեմն սպիտակ յարմանաւորանի նման կամ աննման . ըստ որում նմա համալինի միւս ընդունակին սպիտակ կամ սևոյ :

Դարձեալ ցուցանի . զի եթէ ած ապականէր 'ի վր միոյ սպիտակին զայդպիսի իրական առընչութիւնս . յայնժամ սպի- տակն այն ևս կոչիւր նման միւս սպիտակին , կամ աննման միւս սևին որպէս առնչակցաւն : ապա ուրեմն աւելորդ ինչ է իմանալ 'ի վր սպիտակին զիրական վերաբերեալ էակն , զի նովաւն կոչեսցի նման , կամ աննման = ապա այսպիսի առըն- չութիւն նմանութեան , նոյնութեան , հաւասարութեան , և այլ . ոչ է

իրական ինչ ներքին տեսակ, որով ենթական փոփոխեսցի ներքնապէս․ այլ միայն արտաքին յարակցութիւն՝ նման անկեալ յարտաքուստ ՚ի միւսոյն ընդունակէն:

Երկրորդ եղանակութիւն: Առընչութիւն երրորդ սեռին, որ է չափելւոյն առ չափն, և անհակադարձ է՛ իրական. բայց ոչ է՛ ստորոգութենական, այլ գերազանցական = ցուցանի. քանզի մակացութիւն չափելի, որ է՛ ունակութիւն ինչ, հեշտացուցանէ ըզզօրութիւնն մտաց առ ենթական իւր մակացելի, որ է՛ չափն իւրեան, նա և կախի ՚ի մակացելւոյն որպէս ՚ի պատճառէ = սակայն ուրեմն ոչ նայի առ մակացելի ենթական մաքրապէս, որպէս առ ոսկ եզր = սակայն ոչ ունի ստորոգութենական առընչութիւն առ մակացելին. այլ գերազանցականն =

Երրորդ եղանակութիւն = Ստորոգութենական առընչութիւն երկրորդ սեռին, որ է՛ հիմնեալ ՚ի յառնել և ՚ի կրել. է՛ իրականներքին ինչ տեսակ. և ոչ արտաքին յարանունութիւն. ցուցանի. զի արարողական զօրութիւն, որ է՛ գերազանցական առընչութիւն առ գործն իւր պատճառելի. փոփոխի ներքնապէս յորժամ գործն այն պատճառելին լինի պատճառեալ = սակայն ուրեմն արարողական զօրութիւն, որ էր առաջն միայն գերազանցական առընչութիւն առ կարելի և պատճառելի գործն. յետոյ յորժամ գործն է՛ պատճառեալ, առնու ՚ի վերայ իւրեանն զիրական ինչ. յր. ստորոգութենական առընչութիւն, որով փոփոխեսցի ներքնապէս և առընչասցի մաքրապէս առ գործն պատճառեալ = եղանակութիւն այս՝ յայտ է = ցուցանի առաջարկութիւն, ներքուստ մնայ տարբերութիւն = քանզի ամ առընչութի թէ գերազանցական, թէ ստորոգութենական՝ ունի զբովանդակ լինելն իւր օժտելով առ յեզր = սակայն յորժամ եզրն փոփոխի. փոփոխի և առընչութիւն ներքնապէս ըստ լինելոյն իւրեանն = արդ՝ յորժամ գործն, որ է եզր

առա-

տրամաբանական զօրութեան, մանաւանդ 'ի գործոյ կամելոյն և պատ-
ճառելոյն՝ առ գործն ներքնական և պատճառաւ . փոփոխե-
իւր արդեօք ։ ապա ուրեմն պարտ է և փոփոխել ներքնապէս
զօրութիւն այն , որ էր գերազանցական առընչութեան առ նմա ;
և առնուլ 'ի վր̄ իւրեանն զիրական ինչ տեսակ . իբր . զստորո-
գութենական առընչութիւն , որով յարաբերեսցի մաքրապէս առ
էղըն պատճառեալ ։

Հաստատի ես առաւել երրորդ եզրակացութիւնս . վ̄ն զի 'ի
յա̄ծայինս այնպիսի առընչութիւնքն են իրականք ։ ապա ուրեմն
և 'ի մարդկայինս ։ Առաջարկութիւն ցուցանի . զի 'ի յա̄ծայ-
ինս հայրութիւն ո՛չ միայն է գերազանցական առընչութիւն
բաղկացուցիչ հօրն և սկիզբն որդւոյն . այլ է և ստորոգու-
թենական առընչութիւն . որ յարաբերէ մաքրապէս զծնօղն
առ ծնեալն . որպէս ճառեցի է 'ի յա̄ծաբանութեան ։ Հետևու-
թիւն յայտ է յարացուցիւ . քանզի եթէ 'ի յա̄ծայինս առընչու-
թիւնքն հիմնեալք 'ի յառնել և կրել՝ ո՛չ են արտաքին յարանու-
նութիւն . այլ իրական կատարելութիւն ։ ապա ուրեմն և նոյն
պէս են 'ի մարդկայինս ։

Առարկեսցես ընդդէմ առաջին եզրակացութեան . թէ ո՛չ կա-
րէ ենթակայն մնացանել 'ի միոյ հակառակէ առ միւսն . եթէ
ո՛չ փոփոխի՝ առնլով 'ի վր̄ իւրեանն զնոր իրական տեսակ . զօր
օրինակ ո՛չ կարէ ոք 'ի յոչ սպիտակէ լինել սպիտակ . եթէ ո՛չ
փոփոխի իրական սպիտակութեամբ ընդունելով 'ի վր̄ նորին ։ Նաև՝ մի
որոն սպիտակ՝ յորժամ դնի միւսն սպիտակ , մանաւանդ 'ի յոչ նմա-
նէ առ 'ի գոլ նման ։ ապա ուրեմն փոփոխի ներքնապէս , առնլով
'ի վր̄ իւրեանն զիրական առընչութիւն նմանութեան ։ ապա
առընչութիւնքն առաջին սեռին , որք են հիմնեալք 'ի վր̄ միու-
թեան և թուոյ՝ գոն իրականք , և ո՛չ արտաքին յարանուանութիւն ։

Պատասխանեմք . մերժելով զմեծագոյնն . թէ ո՛չ կարէ ենթա-

կայն անցանել 'ի միոյ հակառականէ առ միւսն . Եթէ ոչ փո-
փոխի կամ ներքսաբար կամ արտաքսաբար , ընդունիմ = Եթէ ոչ
փոփոխի միշտ ներքսաբար միայն , ուրանամ = զի յորժամ որմն
'ի յոչ տեսանելոյն անցանէ առ տեսանել . ոչ լինի 'ի նմա ներքին
փոփոխութիւն , այլ արտաքին . Յդ . փոփոխի միայն ներքսաբար
աչքն տեսանող . և յարտաքին տեսութենէն յարաբերութեանն որմն
նորաբար տեսանել առանց ներքին իւր փոփոխման = այնպէս
ասեմք , Թէ որմն յարաբերութեանն նորաբար նման առանց ներքին
փոփոխմանն իւրեան , զի նոր փոփոխութիւն միայն լինի ներքսա-
բար 'ի միւսն արտաքին սկզբնակ ընդոցն , որ նորաբար գնի . և
առաջին ոչ էրն =

Պատասխանեալ առարկելս ընդ դէմ երկրորդ Եզրակացութեան:
Թէ ոչ միայն մակացութի առընչական առ մակացելի . այլ և ս
մակացելի առընչական առ մակացութի = այսպէս ուրեմն առըն-
չութիւն երրորդ սեռին , որ է հիմնեալ 'ի վր չափոյ և չափե-
լոյ՝ է հակադարձ առնինչ , և ոչ անհակադարձ = Եղևաբար
կութիւն ցուցանի . զի ոչ կարէ իմանել մակացելին առանց իմա-
նալոյ զմակացութի . որպէս . ոչ կարէ իմանել բժշկելի մարմին
առանց իմանալոյ զբժշկութիւն . այսպէս ուրեմն և մակացելի առ-
ընչական առ մակացութի =

Պատասխանեմք , ուրանալով զառաջարկութիւն = և առ ցու-
ցումն նորա ասեմ . Թէ կարէ իմանել իրն որ է մակացելի , առ-
անց իմանալոյ զմակացութի . որպէս . կարեմք իմանալ զմարմին
որ է բժշկելի , Թարց իմանալոյ զբժշկութի . վս որոյ մակացե-
լին ոչ առընչական առ մակացութի = Թէպէտ ոչ կարէ իմանել
մակացելի ըստ որում աւն մակացելի , առանց իմանալոյ զմա-
կացութի . զի յարակոչի մակացելի 'ի մակացութենէ = որպէս
որմն որ է տեսանել , կարէ իմանել առանց իմանալոյ զտեսու-
Թիւն . բայց որմն տեսանել ըստ որում կոչի տեսանել , ոչ կարէ

 իմա-

նմանիլ առանց նմանալոյ զանէութիւն յորմէ այսպէս յառա-
նուանի ։ և աստուած ոչ հետևի. թէ որմն որ է տեսեալ՝
առընչման առ տեսութի. և ոչ թէ նոյն մակացելի առընչա-
նայ առ մակացութի ։ այլ միայն հետևի. թէ յարակցութիւն մա-
կացելւոյն է՛ արտաքին յարանունութիւն ոչ զանազանեալ՛ի յար-
տաքին մակացութենէ ։ յորմէ առնանի ։ զի յարանունութի ոչ
զանազանի՛ ի տեսակէ յարանուանողէն ։

Դարձեալ առարկեցես ընդ դէմ երրորդ եզրակացութեն. քանզի եթէ մի սպիտակն առն նման միւսումն առանց ներքին փոփոխման, և ոչ ըստ իրական առընչութե որ իցէ ՝ի վր նո-
րին, այլ միայն ըստ արտաքին յարանունութե, որ բղխէ ՝ի մի-
այն նոր եղեալ սպիտակէն. որպէս ՝ի վերոյ ասացաւ ։ ապա և
նոյնպէս առնի, թէ ծնօղն առանց ներքին փոփոխման առն հայր
որդւոյ. և ոչ ըստ իրական առընչութե որ իցէ ՝ի վր ծնողին.
այլ միայն ըստ արտաքին յարակցման, որ բղխէ ՝ի նոր եղեալ
որդւոյն ։ ապա ուրեմն հայրութիւն ոչ է՛ իրական առընչութի.
այլ է՛ միայն արտաքին յարանունութիւն, որպէս է՛ առըն-
չութի նմանութե, հաւասարութե, և այլ ։

Պատասխանեմք, ուրանալով զհետևութիւն յառաջացուցելոյն ։
և քան զանազանութենն է. զի ծնողական զօրութիւն, առաջ
քան զհայրութիւն, է՛ միայն գերազանցական առընչութիւն առ
ծնանելի որդին, որպէս առ պատճառելի եզրն ներքան ։ վա
սրոյ յորժամ այն պատճառելի եզրն փոխի, և լինի պատ
ճառեալ և ծնեալ, պարտ է՛ և նոյն գերազանցական առընչու-
թիւն փոփոխիլ ներքուստ, և առնուլ ՝ի վր ներքան զիրական
մաքուր յարաբերութիւն առ նա. Յղ. զառընչութիւն հայրու-
թե ։ զի բոլոր գոյութիւն առընչութենն ոչ այլ ինչ է, քան թէ
յօժարութիւն առ եզր նոր. սակս որոյ առ փոփոխումն եզրին
հետևի ևս փոփոխումն առընչութեն ։ բայց ոչ հանդիպելինոյն

պէս

պէս 'ի յառընչութիւն նմանութեան. որ մի սպիտակն՝ առաջ քան զլինել նման և առաջ քան զդնիլն միւսոյ սպիտակին, ոչ է գերազանցական առընչութիւն առ միւս կարելի սպիտակն. այլ յորժամ այս միւս սպիտակս դնի, և փոփոխի 'ի նմանե-յական. ոչ պատճառ է՝, զառաջին սպիտակն լինել ներքսապէս փոփոխակից. և լինել նման ըստ երական առընչութեան. այլ միայն առի նման ըստ արտաքին ինչ յարանուանութեան =

Երրորդ խնդիր.

Մի թէ ստորոգութենական առընչութիւն զանազանի ըստ էնթակայացեալ իրին 'ի հիմանէն իւրմէ.

An Relatio Prædicamentalis diſtinguatur à fundamento?

Quæſtio Tertia.

Պատասխանեմք ընդ դէմ այլ ոմանց փիլիսոփայից. թէ զանազանի այսպիսի առընչութիւն 'ի հիմանէ իւրեանն էղանակական զանազանութեամբ = ցուցանի. զի կարող է՝ լինել հիմն առանց առընչութեան այսորիկ. և ոչ կարէ լինել առընչութիւն առանց հիմանն իւրեանն = ապա ուրեմն զանազանին 'ի միմեանց ըստ էնթակայացեալ իրին էղանակական զանազանութեամբ = առաջարկութիւն ցուցանի. զի յորժամ դնի եղր. բղխէ առընչութիւն 'ի հիմանէ. և յորժամ եղր բառնի, բառնի ևս 'ի հիմանէն առընչութիւն = զոր օրինակ. յորժամ դնի ծնեալն որ է՝ եղր, բղխէ հայրութիւն 'ի ծնողական զօրութիւն. և յորժամ ծնեալն 'ի բաց բառնի, շարա[illegible]առնի և հայրութիւն, առողջ մնալով ծնողական զօրութիւն. ապա ուրեմն հայրութիւն զանազանի ըստ իրի 'ի ծնողական զօրութենէ էղանակական զանազանութեամբ =

ճշմարիտն ասեմք. թէ հայրութիւն ոչ զանազանի ՚ի հիմանէ. այսինքն ՚ի ծննդական զօրութենէ. այլ միշտ նոյնացեալ է ընդ նմին, և միշտ ներընկալեալ ՚ի նմանէ։ բայց յայնժամ յարաբերութեան զծնօղն՝ հայր. յորժամ ծնանի որդի, և ոչ առաջն։ և թէպէտ առաջն գոյր ՚ի ծնօղն հայրութիւն ըստ ինքն նոյնացեալ ընդ ծննդական զօրութեան, սակայն ոչ գոյր ըստ յարաբերութեան. զի ոչ ևս եղեալ էր որդի։

Եւս՝ առդ՝ ոչ առնէ այս իրաւաբար։ վասն զի ոչ կարէ գոլ տէ-սակ ինչ ՚ի յէնթակայի եթէ ոչ յարաբերութեան զէնթակայն՝ այս ինքն կամ այլոյ իւրոյ. զոր օրինակ. ոչ կարէ գոլ ստրկութիւն ՚ի յումեք. եթէ ոչ յարաբերութեան զտէրն՝ ստրկաց։ և ոչ կարէ գոլ բանականութիւն նոյնացեալ ընդ մարդոյ. եթէ ոչ յարաբերութեան զմարդն՝ բանական։ և պատճառն է. զի տեսականական գործն յարաբերութեան ոչ զանազանի ՚ի տեսականական պատճառէ, յորմէ բղխէ։ այսպէս ոչ կարէ գոլ ՚ի ծնօղն հայրութիւն ըստ ինքն. եթէ ոչ յարաբերութեան զծնօղն՝ հայր։

Յաւելցուք՝ նաև հետևել. թէ հիմն առընչութեան պարտ է զանազանիլ ըստ էնթակայացեալ ինքն ՚ի յեզրէ։ զի ուրուրէք գոյ առընչութիւն, գոյ և համապատասխանութիւն։ իսկ ոչ կարէ միևս գոլ ինքնանս իւրեանն համապատասխանեալ։ այսպէս ոչ կարէ առընչանալ առ ինքն իւր. այլ առ զանազանեալս ՚ի յինքենէ։

Երկրորդ՝ հետևի. թէ արտաքոյական և նիւթական պատճառն առընչութեան է հիմն յորմէ բղխէ առընչութիւն։ իսկ եզրն՝ ոչ է պատճառ նորին, և ոչ սկիզբն յորմէ. այլ սոսկ թէութիւն առանց որոյ ոչ բղխէր ՚ի հիմանէ առընչութիւն։ որպէս պատճառ տեսութեան է աչքն. իսկ լոյսն ոչ է պատճառ նորին, այլ սոսկ թէութիւն առանց որոյ ոչ արտադրեալ էր տեսութիւն ՚ի յաչաց։

Երրորդ հետևի. թէ էութիւն առընչութեան՝ է յարաբե-

րել զհետն առ յեզր ներգործութեան, ոչ զօրութեան ։ Եւ պատճառն է. զի առընչութիւն ոչ է իր, այլ եղանակ իրին ։ Իսկ՝ էութիւնն եղանակին կայանայ ՚ի ներգործութեան եղանակաւորացուցանել զիրն որոյ է եղանակ . ոչ զօրութեան միայն ։ վասն որոյ ոչ կարէ եղանակն գոլ զատեալ ՚ի յիրէ զոր եղանակաւորացուցանէ . ոչ բնականապէս եւ ոչ միայն կարողութեամբ ։ զի էութենապէս ունի ներգործութեան կախեալ ՚ի յենթակայէ իւրեանն ։

Հարցանիցես . թէ կարէ՞ միթէ բաժանել զպատահումն ՚ի յենթակայէ. որպէս ՚ի հաղորդութեան պահէ զքանակութիւն հացին առանց ենթակայի. յթ. առանց գոյացութեան հացին ։ ասեմ ուրեմն կարէ եւս պահել զառընչութիւն բաժանեալ ՚ի հիմանէ ։ Իսկ՝ այդպիսի զատեալ առընչութիւնք ոչ յարաբերեն ներգործութեան զհետն առ յեզր, այլ զօրութեան միայն. յթ. կարեն յարաբերել. թէպէտ ոչ յարաբերեն ։ ասեմ առընչութիւնն ոչ ունի էութենապէս՝ զներգործութեան յարաբերելն . թէպէտ ունի զայս բնականապէս ։

Պատասխանեմք, միւնեւնոյն զառաջարկութիւն . թէ կարէ մի՛ պահել առանց ենթակայի զիրական պատահումն. որգոն . զքանակութիւնս . զորակութիւն . զձեւութիւնս . եւ զայլն յայսպիսեացդ . ընդունիմ ։ զի դոքա են իրք , եւ ոչ կախին էութենապէս յենթակայից իւրեանց, այլ միայն բնականապէս ։ զի թէպէտ ոչ կարեն գոլ բնականապէս զատեալք ՚ի նոցանէ . սակայն կարեն գերբնապէս եւ սքանչելեօք ։ վասն որոյ կարէ գոլ քանակութիւնն առանձին, եւ ոչ առնել զքանակ ։ կամ սպիտակութիւնն , եւ ոչ առնել ներգործութեան սպիտակ ։ Եւ այլ ։ Կարէ՞ մի պահել առանց ենթակայի զեղանակական պատահումն . որգոն . զառընչութիւնս . զշարժումն . զձեւս . զտեսութիւնս . զհամաչափութիւն . եւ զայլն յայսպիսեացդ . ուրանամ ։ զի դոքա ոչ են իրք, այլ եղանակք իրաց . եւ էութեան կախին յենթակայից

կայից

կայից խուէանց։ սակս այսորիկ ոչ կարէ գոլ շարժումն, և ոչ առնել ներգործութիւն շարժել։ ոչ ձևն, եթէ ոչ առնէ ըձե-ացեալ։ ոչ տեսութիւն, ոչ առնելով զտեսանօղ։ ոչ առինչ, եթէ ոչ ներգործութիւն առնէ զառընչացեալ։ զոր նման. ոչ կարէ գոլ կենդանի բանական, որ է էութիւն մարդոյ. և ոչ առ-նել զմարդն։

Զօրրորդ հետևի. թէ ստորոգութենական առընչութիւն պահանջէ զեզը ներկայ և եդեալ արտաքոյ պատճառաց ներ-կայապէս: և ոչ կարէ առընչանալ առ յեզր կարելի միայն, կամ ապագայ։ ցուցանի. զի յայնժամ հայրութիւնն բղխէ ՚ի ծնօղն, և յարանուանէ զծնօղն՝ հայր. յորժամ լինի եզր. զ. որդի։ և ոչ առաջն յորժամ կարելի է որդի, կամ ապագայ։ այլ ուրեմն ստորոգութենական առընչութիւն պահանջէ զգոյութիւն եզրին. ոչ զկարելութիւն միայն, կամ զապա-գայութիւն։

Հուարկիցես. թէ գերազանցական առընչութիւն կարէ առ-ընչանալ առ կարելի եզր։ ուրեմն այլ կարէ և սոյնպէս առ-ինչն ստորոգութենական։ եզրակացութիւն՝ յայտ է յառաջացու-ցին։ ցուցանի առաջարկութիւն. զի ամ զօրութիւնն է գերա-զանցական առընչութիւն առ կարելի ներգործութիւն իւր։ որ-պէս միտքն՝ է գերազանցական առընչութի առ իմացումն կա-րելի: և այսպէս զայլոց զօրութեանց։

Պատասխանեմք, ընդունելով զառաջարկութիւն. և ուրա-նալով զեզրակացութիւն։ և պատճառ զանազանութեանն՝ է. զի որ գերազանցական առինչն ոչ զանազանի ՚ի հիմանէ. այլ է նոյն հիմն ըստ որում կնձրող է գործել կամ կրել զինչ շուրջ զեզրաւն. և այսպէս նայի առ յեզրն կարելի անմաքրապէս, որպէս առ յարատադրելի ՚ի նմանէ, կամ առ յարատադրօղն նո-րա։ բայց ստորոգութենական առինչն զանազանի ՚ի հիմանէ.

և նայի

և նոյն առ յետըր մաքրայէս, որպէս առ յարատադրեալն. և եդե_
ալ արտաքոյ պատճառային իւրեան ։

Չորրորդ խնդիր.

Մի՞ թէ ըստ բազմութեան եղերաց՝ բազմանան առընչու_ թիւնքն 'ի վր հիմանն ։

An multiplicetur Relatio ad multiplicationem terminorum.

Quæstio Quarta.

Նախ՝ պատասխանեն ոմանք փիլիսոփայք. բազմանալ թուով զառընչութիւս առ թուաւոր բազմութիւն եզերաց ։ ներքոյ գաղափարաւ յորժամ թուով բազմանան որդիքն, բազմանան և թուով հայրութիւնքն 'ի վր նոյն ծնողին ։ զի առ այլքն հայրութի ծնօղն առընչանայ առ յառաջինն որդի, և ոչ առ երկրորդն. զի երկրորդն ոչ տակաւին էին եղեալ ։ ապա ուրեմն առ նոր դրութիւն երկրորդ որդւոյն՝ բղխէ այլ նոր հայրութիւն 'ի ծնօղն ։ և յայնժամ երկու հայրութիւնք յարաբերին առ յերկուս որդիս ։ և նոյնպէս ասեն առ դրութիւն երրորդ որդւոյն, և այլոցն ։

Բայց ընդ դէմ սորին է ։ քանզի եթէ առընչութիւնքն բազմանային թուով ըստ թուաւոր բազմութեան եզերացն. հետևէր թէ հիմն ունէր զանբաւ առաղական զօրութիւն ։ իսկ այս է յոյժ անտեղի. զի բաւական բնութի զբաւական զօրութի պարտ է ունել ։ ապա ուրեմն և այլ հաստատեցուցանեմք զհետևութին մեծապունին. վս զի կարէ հիմն. որդոյն. արեգակն առտադրել հետևաբար զբազում և զբազում գործս մինչ և յանհունս ։ արդ ուրեմն կարէր հիմն առնուլ 'ի վր իւրեանն զբազում և զբազում առընչութիւս մինչ և յանհունս, որովք առըն

չանայր

չանայր առ գործս այնոսիկ . զոր կարող էր ած՝ ի միասին պա_
հել ։ Եւ Թէպէտ արտադրել զօրութիւն հնման ո՛չ գոյր ան
բաւ . զի արտադրէր զայնպիսի գործս անբաւս հետեւաբար
մի ըստ միոջէ ։ սակայն առողական զօրութիւն գոյր անբաւ . զի
զբազմագոյն եւ զբազմագոյն առընչութիւս մինչ եւ յանբաւս
միանգամայն առնոյր եւ պահէր ՚ի վր իւրեանն ։ զոր օրինակ .
Թէպէտ կարէ բաւական միտքն հոգւոյն կամ հրեշտակին ար
տադրել մինչ եւ յաւիտեանս հետեւաբար եւ մի ըստ միոջէ
զբազում իմացմունս . բայց սակայն ո՛չ կարէ զամենեսեանն մի_
անգամայն առնուլ եւ պահել ՚ի վր իւրեանն .

Պատասխանեն այլ ոմանք փիլիսոփայք . Թէ առընչութիւն
ո՛չ բազմանայ Թուով , այլ նոյն ամփոփ մնայ առ բազմութիւն
Թուաւոր եւ նիւթաւոր եղելոց ։ վս որոյ ըստ կարծեաց
գոյս՝ ծնօղն առաջին հայրութեան , որով առընչանայր առ
յառաջին որդին , առընչանայ եւս առ յերկրորդն ,յերրորդն ,
եւ առ յայլսն ։

Չորրդ՝ վս մեկնութե այսպիսի կարծեաց . նախ գիտելի է
Թէ երբ կամ առարկեալն է երկեակ ։ մինն աննիւթաւոր եւ
երբ առ յոր . եւս՝ միւսն՝ տեսականաւոր եւ երբ ըստ որում ։ առ
աջինն է այն , առ յոր նայի եւ շարժակարգի զօրութիւն իմն ։ ո՞ր
գոն . նիւթաւոր առարկեալն տեսողական զօրութեն՝ է սպի_
տակութիւն . սեւութիւն . եւ այլ ։ առ յորս շարժակարգի այն
պիսի զօրութիւն ։ երկրորդն է այն , ըստ որում զօրութիւն շա_
րժակարգի առ յեզր նիւթաւոր ։ որպէս . տեսականաւոր առար
կեալն տեսողական զօրութեն՝ է գոյն , ըստ որում այն զօրու_
թիւն շարժակարգի առ սպիտակութիւն , սեւութիւն , եւ այլ ։ զի
աչքն տեսանէ զնիւթաւոր առարկեալն իւր . յդ . զսպիտակն ,
ո՛չ ըստ որում է սպիտակ . զի կարէ եւս տեսանել զսեւն որ
ո՛չէ՛ սպիտակ . այլ ըստ որում է գունաւոր ։ յաղագս որոյ զա_

նաւորն է՝ տեսակաւորաց առարկեալն տեսանելեացն. զի ՚ի նմա-
նէ տեսանելիքն առնուն զիւր տեսակն և նովին զանազանին տե-
սակաւ յայլոց զգայարանացն: Իսկ՝ սպիտակն, սեաւն, և
այլքն՝ են նիւթաւոր առարկեալք. զի ըստ զանազանութե-
այդոցիկ ոչ զանազանի զօրութիւն տեսակաւ.

Ուստ առ սա հետևի. Թէ յորժամ բազմանան նիւթաւոր առ-
արկեալքն. ոչ բազմանան զօրութիւնք: Իսկ՝ յորժամ բազմանան
տեսակաւոր առարկեալքն, բազմանան և զօրութիւնքն: Որպէս.
սեռական զօրութիւն՝ մի է. զի մի է գոյաւորն, Թէպէտ
գոյաւորին տեսակք են բազումք. օր. սպիտակ, սեաւ, և այլ:
Դարձեալ՝ լսողական զօրութիւն է մի. զի մի է նորին տեսա-
կաւոր առարկեալն. օր. հնչումնաւորն: Թէպէտ նիւթաւ-
որքն են բազումք. օր. հնչումն զանգակին. ձայն մարդոյ. Թընդ-
իւնքն գազանաց. և այլ: Դարձեալ՝ ճաշողական զօրութիւն է
մի. զի մի է ճաշակելին, Թէպէտ տեսակք նորին յոլովք. օր.
դառն. քաղցր. և այլ: Նոյնպէս ասեմ յաղագս այլոց զօրութեանց:
և պատճառն է, զի զօրութիւնն առնու զիւր տեսակն, և զիւր
զանազանութիւն ՚ի տեսակաւոր առարկելոյն իւրեանց, այլ
ոչ ՚ի նիւթաւորէն:

Ըստ նմին գաղափարի տրամաբանեն ոմանք ՚ի վր̄ առընչու-
Թեան: և ասեն, Թէ առ ինչն ունի և ս զեզր տեսակաւոր, և
զնիւթաւոր: Հի բաց. տեսակաւոր եզր հայրութեան՝ է ծնեալ
գոյացութիւն. օր. որդի: Իսկ՝ նիւթաւորքն՝ են պետրոս որդի,
պօղոս որդի, և այլ: որոյ սակս առ բազմութիւն նիւթաւոր
եզերացս, ոչ բազմանան ՚ի ծնօղն հայրութիւնք, այլ առաջին
հայրութիւն, որ նախ յարաբերէր զծնօղն առ պետրոս առաջին
որդի, նոյն իսկ անփոփոխ մնալով՝ յարաբերէ զնոյն ծնօղն առ
պօղոս երկրորդ որդի, և առ յայլսն. զի Թէպէտ բազմանան
նիւթաւոր եզերքն. ոչ բազմանայ բանն ծնելոյն, որ է եզր

տեսակաւոր։ զոր նման. յորժամ բազմանայ նիւթաւոր առարկեալն սպիտակին, սեւին, և այլ. ոչ բազմանայ տեսողական զօրութիւն. զի ոչ բազմանայ բանն գոյնաւորին, որ է տեսակաւոր առարկեալն տեսանելեացն։

Իսկ՝ արդ՝ զոյգ կարծիքն պահպանի արդեօք ըստ բազմաց։ նախ՝ զի Թէպէտ այնպիսի տրամաբանութիւն ճշմարտապէս լինի ՚ի վր՟ զօրութեանց, որք են գերազանցական առընչութիւք առ յառարկեալ եղեալս իւրեանց. վ՟ որոյ կարեն անփոփոխ տարածիլ առ ՚ի նայիլ և զկարելի եղեալս, առ յորս [illegible] յարաբերին, որպէս կարողութիւք. ոչ որպէս ներգործական մարմնոյ առընչութիւք։ բայց սակայն ոչ ճշմարտի ՚ի վր՟ ներգործութեանց. և մանաւանդ ՚ի վր՟ ստորոգութենական մարմնոյ առընչութեանց զի այսք ամէն եզմանակք իրաց, և ոչ էրք որպէս են զօրութիւնք. և չու Թ՟ կախին ՚ի յեղելոյ որ ներկայ և եղեալ յարտաքոյ պատճառաց. ոչ ՚ի յեղելոյ որ կարելի միայն։ ուստի՝ որք միանգամ են նիւթաւոր եղերք զօրութ՟, և ոչ տեսակաւորութեանն ըզգանազան զօրութիս. լինին տեսակաւոր եղերք ներգործութեանց. և տարբերութեանն ըններգործութեանն տեսակաւ. զի զօրութիւնն ընդհանրականագոյն ինչ է՛, քան ըններգործութիւնն։ զոր օրինակ. սպիտակն և սեւն, որք են նիւթաւոր եղերք տեսողական զօրութեան, և ոչ տարբերութեանն ըզգանազան տեսակաւ զօրութիս. լինին տեսակաւոր եղերք տեսութեանն, և տարբերութեանն ըզգանազան տեսակաւ տեսութիս. զի տեսութիւնն սպիտակին՝ տարբերի տեսակաւ ՚ի տեսութենէ սեւին։ նա և տեսութիւնն միոյ սպիտակին՝ անփոփոխ մնալով ոչ կարէ զոլ տեսութիւն երկուց սպիտակաց. զի այս՝ կատարելագոյն է՛, քան զայն. Թէպէտ եր կոքին ընդ նոյն տեսակաւ. և տարբերք միայն Թուով։ ըստ ամին օրինակի, բազում հայրութիւք Թուով տարբերին ՚ի մի-

մեայ, և կարեն պատշաճել առ մի թուով ծնողական զօրութիւն, որ անփոփոխ մնալով՝ յարաբերի գերազանցապէս առ բազում արտադրելի որդիս. բայց ոչ կարէ հայրութիւնն միոյ որդւոյ, անփոփոխ մնալով՝ գոլ հայրութիւն երկուց որդւոց. զի այս՝ կատարելագոյն բան զայն. թէպէտ երկոքեան ընդ նոյն տեսակաւ. և տարբերք միայն թուով։

Եւ դարձեալ՝ ոչ կարէ նոյն իր՝ անփոփոխ մնալով անցանել ՚ի միոյ հակասականէն առ միւսն. որպէս. ոչ կարէ նոյնն ոչ սպիտակ, անփոփոխ մնալով՝ լինել սպիտակ։ ուրեմն ադամ հայր պետրոսի առաջին որդւոյն, որ այժմ է՝ ոչ հայր պօղոսի. զի այս մինչ տակաւին ոչ ծնաւ. ոչ կարէ յետոյ լինել հայր նորին ՚ի ձեռն առաջին անփոփոխ հայրութեան. զի նոյնն նոյն մնալով, մինչ զնոյն առնէ, և ոչ երբէք զանազան։ այլ առաջին հայրութեն, որ առաջին առնէր զծնօղն՝ հայր միոյ որդւոյ, և ոչ երկուց. յետոյ անփոփոխ մնալովն՝ ոչ կարէ հայրացուցանել զնոյն ծնօղն զերկուց որդեաց։

Աղագ. աստէնիկին՝ եղիցի մեր առաջին եզրակացութիւն ՚ի մերում հաստատեալ. թէ առ բազմութիւն թուոց որ և նիւթոց որ եղերացն՝ ոչ բազմանան թուով առընչութիւնք ՚ի մի հիմանն. այլ միայն թուով փոփոխին։ զի. առաջին հայրութիւն որ առընչացուցանէր զծնօղն առ յառաջին որդի. ՚ի ծնելն երկրորդին ապականի, և ՚ի տեղի նորին բղխէ միւսն կատարելագոյն, որ առընչացուցանէ զծնօղն համանգամայն առ յերկոսին որդիսն։ և ՚ի ծնելն երրորդ որդւոյն՝ ապականի և միւս հայրութիւն այս. և բղխէ երրորդն կատարելագոյն, որով առընչանայ ծնօղն համանգամայն առ յերեքեանս։ և նոյնպէս հետևաբար յաղագս այլոցն։ նա և հակադարձաբար, յորժամ յերից որդեացն՝ մինն մեռանի. ապականի կատարելագոյն հայրութիւն [illegible]. և բղխէ միւսն անկատարագոյն որ առ

յերկուս մնացեալսն ։ ցուցանի . քանզի ՚ի դնելն երկրորդ սպի-
տակին առաջի աչացն, ապականի տեսութիւնն առաջնոյն . և
դնի նոր կատարելագոյն տեսութիւն որով աչքն տեսանէ հա-
մանգամայն զերկոսին սպիտակսն ։ և հակադարձաբար , յոր
ժամ յերկուց սպիտակացն՝ միոյն բառնի, և միւսն մնայ ․ ապա-
կանի տեսութիւն երկոցունցն . և դնի նոր տեսութիւն անկա-
տարագոյն , որ առ միւսն մնացեալ ։ ապա սոյնպէս ասելի է՝
յաղագս առընչութեցն ։

Երկրորդ եզրակացութիւն ։ առ բազմութիւն տեսակաց
որ եզերացն՝ բազմանան տեսակաց առընչութիւնքն ։ ցուցանի .
զի իւրաքանչիւր յարաբերութիւն առնու զանունն իւր ՚ի
տեսակաց որ եզրէ ։ ապա ուրեմն ՚ի բազմանալն տեսակաց որ
եզրի , բազմանայ և տեսակաց առընչութիւն ։ առաջարկու-
թիւն հաստատի լինի մակածութեամբ . քանզի հայրութիւն . որ-
դիութիւն . նմանութիւն . հաւասարութիւն . և այլքն յայտ-
ակնեացդ՝ են առընչութիւնք տեսակաց զանազանեալք . զի
եզերք նոցա տեսակաց զանազանին ։ վասն զի հայրութիւնն է՝ առ
ծնեալսն. որդիութիւն՝ առ ծնօղն. նմանութիւն՝ առ յորակու-
թիւն . հաւասարութիւն՝ առ քանակութի . նոյնութիւն՝ առ
գոյացութի . և այլ ։ եւ դարձեալ ցուցանի յաւագուցէ . զի
տեսութիւն սպիտակին , և տեսութի սևին . իմացումն գոյա-
ցութե , և իմացումն պատահման՝ զանազանին և բազմանան
տեսակաց . զի եզերքն նոցա տեսակաց զանազանին և բազմա-
նան ։ նմանապէս ասելի է՝ ուրեմն յաղագս առընչութեցն ։ և
պատճառն է . զի առնինչն՝ որինչ է՝ նոյ . առ յեզր է՝ ։

Հինգերորդ Խնդիր.

Մի՞ թէ առընչութիւն եզրանայ առ բացարձակն եզր. կամ թէ առ յառընչակցութիւն ։

Vtrum Relatio terminetur ad Correlationem: an verò ad rationem absolutam termini.

Quæstio Quinta.

Գիտելի է. զի եզրն առընչութեան զերկուս նշանակէ. մի. զառընչակցութիւն. և զհետն առընչակցելոյ, որոյ վերջնոյ առընչակցութիւն ։ որպէս՝ որդի, որ է եզր հայրութեան, զերկուս նշանակէ. զծնեալ գոյացութիւն. և զորդիութիւն, որ է առընչակցութիւն հայրութեան, և որով ծնեալ գոյացութիւն յորջորջի որդի ։ Արդ՝ խնդրի. թէ յերկուցս այսոցիկ՝ առ յո՞ր եզրանայ հայրութիւն. մի թէ առ ծնեալ գոյացութիւն, որ է եզր բացարձակ. կամ թէ առ յորդիութիւն. որ է առընչակցութիւն ։

Պատասխանեմք. եթէ առընչութիւն եզրանայ առ յեզր բացարձակն. ընդ դէմ ոմանց փիլիսոփայից, որք ասեն, եզրանալ առ յառընչակցութիւնն ։ նախ ցուցանի. քանզի 'ի յանհակադարձ առընչականսն՝ առընչութիւն եզրանայ առ բացարձակն ։ ապա և նոյնպէս լինի 'ի հակադարձ առընչականսն ։ եզրանալութիւն՝ յայտ է յառացուցիչ ։ և ես հաստատի առաւել. զի եթէ ած տարածանէր 'ի ծնեալ գոյացութեան զորդիութիւնն. գոյր առաջին ծնողին՝ հայրնորին. և ծնողին հայրութիւն եզրանայր առ բացարձակն, ոչ առ յառընչակիցն ։ ապա և այլ ։ ցուցանի առաջարկութիւն. զի մանկացութիւն առընչանայ առ մանկացելն, որ է բացարձակեալ 'ի յառընչակցութենէ առ մակացութիւն ։ և ստեղծումն առընչանայ առ ստեղծօղն ած, որ է բացարձակեալ 'ի յառընչակցութենէ առ ստեղծումս ։

[illegible]

Դարձեալ հաւանեցուցանէ պատասխանին. քանզի ենթ առընչութեան է առաջագոյն բնութբ, քան զառընչութիւն. զի այս կախի ՚ի նմանէ. և ո՛չ ՚ի նմանէ այն։ Թէպէտ ո՛չ է առաջագոյն ժամանակաւ. զի յայնժամ բղխէ առընչութիւնն ՚ի վերայ հիման. յորժամ դնի ենթ։ Իսկ՝ առընչակցութիւնն, որ ՚ի վերայ ենթին, ո՛չ է առաջագոյն բնութբ, քան զմիւսն առընչութիւն. զի ըստ Արիստոտէլի՝ առընչակցութիւնք զոյգ համանգամայն բնութբ. զի միմեանս ո՛չ կախին ՚ի միւսոյն որպէս ՚ի յենթէ։ Ապա ուրեմն առընչակցութիւն ո՛չ է իսկ՝ ենթ առընչութեան. զի ենթն է բնութբ նախկնագոյն քան զառընչութիւնն։

Եւ Դարձեալ ցուցանէ, վա զի ծնօղն ո՛չ է հայր որդւութեան, այլ ծնեալ գոյացութեան. զի ծնեալն բղխէ ՚ի հօրէ, և ո՛չ որդւութիւնն, որ բղխէ ՚ի հիմանէ ուրեմն. ԶԲ. ՚ի ծնելոյն։ Ապա ուրեմն հայրութիւն ո՛չ նայի առաջ առ յորդւութիւն, այլ առ ծնեալ գոյացութիւն։ Եւ մի մարդ ո՛չ է նոյն ընդ նոյնութեան որ ՚ի վերայ միւսոյն. զի մարդն է գոյացութիւն. և առընչակցութիւն նոյնութեան՝ է պատահումն։ Այլ է նոյն ընդ միւս մարդոյ որ է բացարձակ հիմն նոյնակցութեան այնորիկ։ Ապա ուրեմն առընչութիւն նոյնութեան նայի առ բացարձակ ենթ, ոչ առ յառընչակցութիւն։ Եւ զնոյն ասեմ յաղագս նմանութեան, հաւասարութեան, և այլ ընդ առընչութեանց։

* *
*

Չորրորդ վիճաբանութիւն.

Յաղագս Ունակութեանց ։

Առաջին խնդիր.

Թէ զինչ է Ունակութիւն ; Եւ ո՞ր է ենթակայ նորին ։

De Habitibus.

DISPVTATIO QVARTA.

Quid sit Habitus: Et quodnam illius subiectum?

Quæstio Prima.

Նախ գիտելի է. զի Ունակութիւն է մի տեսակ Որակութեան ։ Եւ տարբերի 'ի Տրամադրութենէ, որ է որակութեան միւս տեսակն. զի ունակութիւն ըստ Արիստոտէլի է որակութիւն դժուարաշարժ. այս է. դժուարալեբ կորուսանելի և բարձելի. որպէս, սովորութիւն, զոր շահէ մարդն առ 'ի գործել զբարի. կամ զչարն ։ Իսկ տրամադրութիւն է դիւրաշարժ. զի բարձի դիւրաւ. որպէս. տրամութիւն. առողջութիւն. ուրախութիւն նոյն մարդոյ. և կամ ջերմութի 'ի մի փայտի ։

Երկրորդ գիտելի է, եթէ ունակութիւն է երկեակ. Հեղական, և ուսումնական ։ Հեղական ունակութիւն է, զոր ած հեղու 'ի մի մարդոյ, կամ հրեշտակին ։ Հն բար ։ ած այսին շնորհք. լոյս փառաց. հաւ. առ. յոյս. սէր. և այլ ։ և յաղագս դորին ճառեն աստուածաբանքն ։ և կամ մակացութիւնք, զորս եհեղ ած 'ի մի մասին Ադամայ, և Սողոմոնի ։ Իսկ Ուսումնականն է, որ շահի բազմապատիկ ներգործութեամբ ։ և յաղագս սորա պատմեմք 'ի ներկայիս ։

Երրորդ

Երրորդ գլուխն է՝ Թէ ունակութիւն սահմանի այսպէս ։ Ունակութիւն է որակութիւն ինչ դժուարաշարժ, որ տայ դիւրութիւն, ոչ զկարողութիւն գործելոյ ։ Ասի՝ դժուարաշարժ. զի ոչ ապականի դիւրաւ, այլ բազմապատիկ ներհական ներգործութեամբ ։ Ասի՝ որ տայ դիւրութիւն և այլ. զի ունակութիւն միայն դիւրացուցանէ զզօրութիւն առ ՚ի գործել ։ և ոչ տայ զկարողանալն պարզապէս, այլ զկարողանալն դիւրաւ ։ Եւ պատճառն է. զի ունակութիւն արտադրի ՚ի ներգործութեանց զօրութեան ։ Սակս այսորիկ ոչ տայ, այլ գտանէ զզօրութիւն կարող գործել ։ առ ՚ի տարբերութիւն գերբնական ունակութեանց լուսոյն փառաց, հաւատոյ, և այլ. որք տան զկարողանալն պարզապէս. զի ոչ կարէ մարդ ճանաչել զԱստուած հայեցողական ճանաչմամբ. և ոչ հաւատալ ամենասուրբ Երրորդութեան առանց գերբնական հեղեալ ունակութեանց լուսոյն փառաց. և հաւատոյ ։

Առաջին երրակցութիւն ։ զոր ՚ի միտս, և ՚ի կամս ունակութիւնք. ցուցանի բանիւ այսպիսի զօրութիւնք յետ բազմապատիկ արտադրութեան ներգործութեանց իւրեանց՝ շահեն զդիւրութիւն ՚ի ներգործել ։ այս է որ կոչի ունակութիւն. զի ունակութիւն ոչ այլ ինչ է. եթէ ոչ դիւրութիւն զոր շահէ զօրութիւն առ ՚ի գործելոյ ։ Առաջարկութիւն ցուցանի. զի միտքն յետ բազմապատիկ իմացմանց շահէ զունակական մակացութիւն. ուղղոն. զարհեստս. զփիլիսոփայութիւն. զԱստուածաբանութիւն. և այլ. որպէս դիւրապէս տրամաբանէ շուրջ զմակացելեօքն. շուրջ զարհեստաւորօք. շուրջ զբնական իրօք. շուրջ զԱստուածով. և այլն ։ Նոյն և կամքն բազում անգամ կրէ զդժուարութիւն ՚ի ներգործել ՚ի կամիլ. ՚ի յօժարիլ. ՚ի սիրել. ՚ի յատել՝ զընթացս ինչս ։ և այսպէս յետ բազմապատիկ ներգործութեանց կամեցողութեան, սիրողութեան, ատելութեան, և այլ.

շահէ զդիւրութիւն ողորմելոց՝, տալոյ, սիրելոյ զնոյն ընթա-կայսն: արդ ուրեմն շահէ զունակութիւն ողորմութեան. սիրո-ղութեան. առատութեան. և այլ:

